



Բ Ա Գ Ի Ն

Ե. ՏԱՐԻ 1966 ՓԵՏՐՈՒՄ
digitised by A.R.A.R.@

ԹԻԻ 2

باكين
 مجلة شهرية ، أدبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارتين كارنيك قزائجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐԲՈՒԾՍՅՈՒ

ՎԱՌԶ ԽՍՐԱԳԻՐ
 Գ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՍՐԱԳԻՐՆԵՐ
 ԵՂ. ՊՕՅԱՃԵԱՆ, Պ. ԱՆԱՊԵԱՆ

ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԴ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓՈՓԱՋԵԱՆ
 Վ. ՕՇԱԿԱՆ

ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustany, Beyrouth - Liban

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Պ. ԱՆԱՊԵԱՆ
- ԵԴ. ՊՕՅԱՃԵԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Ն. ՃԱՊԻՐ
- Զ. ՈՐԲՈՒՆԻ
- ԱՐՄԱՆՏ
- Զ. ԳԻՐԵՋԵԱՆ
- Վ. ԶՕՐԵՆՑ
- Գ. ԱՐԷԼԵԱՆ
- Վ. ՈՇԱԿԱՆ
- Գ. ՃԻՋՄԵՃԵԱՆ
- Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ
- Բ. Փ.
- Ե. Պ.
-
- ՆԱՄԱԿՆԵՐ
- ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

Քաղաք

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ս. ՅԱՐԻ, ԽԻՒ 3

ՓԵՏՐՈՒԱՐ 1966

ՊԵՏՐՈՒՐ

... ԵՒ ԱԶԿՈՒՆՔՆ ԵՆ ԱՐԵՎԱԿՈՒՆՔ

Պ. ՍՆԱՊԵԱՆ

Նոր տարուայ շրջանին, Զուիցերիական սրճարանին մէջ յաճախարէզող դարձաւ նոր ղէմքի մը երեւումը: Գրեթէ ամէն առտու հոն կը հանդիպէի իրեն ու երեկոյեան, կը պատահէր, որ վերջին մեկնոցները երկուքս ըլլանք: Ամբողջով ու խորունկ չափերով յիսուննոց մարդ մը: Կու զար ու կը հակէր Փրանսերէն զիբըբու եւ թերթերու վրայ: Քիչ անգամ գլուխը վեր կ'առնէր ու բացառիկ պարզաներու միայն կը նայէր Քաղաքայիններու եկեղեցիին առջեւէն հոսող ինքնաշարժներու եւ մարդերու աղմկայտոյ յորձանքին: Քանի մը որ առաջ հայերէն թերթեր տեսայ ձեռքը եւ իրիկուն չեղած պղտիկ ծանօթութիւն մը հաստատեցինք իրարու հետ: Իմացայ նաեւ, որ մեր ամսաթերթը անծանօթ չէ իրեն: Այ-

նուհետեւ սկսանք բարեւել զիրար:

Առտու, մտաւորական ընկերոջ մը՝ Մեսրոպին հետ հոն էինք կրկին ու կը վիճէինք Հայաստանեան բանաստեղծութիւնը քննարկող ձեռագրի մը մասին, երբ սրճարանի սեմին տեսայ զինք: Մտեցաւ հանդիսաւոր քայլերով, գլխով բարեւեց ու տեղ դրակեց ճիշդ մեր քովի սեղանին առջեւ: Բացաւ Պոտլէրի մասին զրած Սարթրի հատորը ու վտակ սիկարէթ մը:

- Ո՞վ է, - հետաքրքրուեցաւ Մեսրոպ:

- Հրանդ Լեւոնեան: Նոր սկստեց զիրար բարեւել: Ճեղքիննին բաժանորդ է ու ծանօթ մեր ճիգին:

Մեսրոպ նայեցաւ հեղ մը անոր ու գէմքը թթուեցուցած դարձաւ ինձի:

- Ի դէպ, ի՞նչ էր վերջին թիւի առաջին էջերուն փոռած այդ գրութիւնը:

- Կարդացածդ եւ ուրիշ ոչինչ, - Ըստի բուռն տրամադրութեամբ, - «Երկնէր երկին»...

- Դո՞ւք ալ, Համայնավարներուն պէս սկստք գրականութեան նուիրուած ձեռնարկներուն մէջ կուսակցութիւն խաղալ:

- «Աստուածները, աստուածային բաները»... - շարունակեցի նոյն շեշտով:

- Ես կատակ չեմ ըներ, - ըսաւ Մեքորոպ, - գրականութիւնը այդ աստուածներէն ու աստուածային նման բաներէն պէտք է հեռու պահել:

Իրապէս կատակ չէր ըներ Մեքորոպ: Բացարձակ ըմբռնում մը ունէր գրականութեան մասին ու կը մերժէր անոր մէջ շեշտուած ուրիշ երեւոյթներու ներկայութիւնը: Կը կատարէր մանաւանդ Հասարակական Հրատարակութիւններուն դիմաց, գրականութիւնը կուսակցական կարգաթուաներուն ծառայեցնելու անոնց յիստամայ փորձը սրբապղծութիւն համարելով: Կը մեղադրէր բոլոր խմբակցութիւնները ու արդարացումի գուր փորձեր կը համարէր պայմաններէն բխող առարկութիւնները:

Մեքորոպի խոսով մային ի լուր՝ Լեւոնեան դադարեցուց ընթերցումը: Կասկեցի, որ կը հետեւի մեր խօսակցութեան: Մեր ակնարկները կրկին հանդիպեցան իրարու: Ոտքի ելաւ եւ մօտեցաւ մեզի:

- Կը թուի, թէ հետաքրքրական զբոյժի մը բռնուած էք, - ըսաւ, - կարելի՞ է միանալ մեզի:

Ներկայացուցի մէկը միւսին: Լեւոնեան դուրսը շարժեց, բայց անոր մասին տուած ծանօթութիւններս չբաւարարեց Մեքորոպը: Ուզեց աւելին իմանալ:

- Անունս Հրանդ է, մականունս՝ Լեւոնեան, բայց ինքնութիւնս՝ տարտամ է, - սպառնով սկսաւ ան: - Կրնաս նախկին ուսուցիչ կոչել զիս, նախկին Դաշնակցական, նախկին Կոմունիստական:

Նախկին ամուսին: Վերջապէս բազմակողմանի նախկին մը:

- Հիմա՞, - հարցուց Մեքորոպ:

- Հիմա բոլոր այդ նախկիններէն մէկ մէկ բան կայ մէջս, բայց ես չկամ: Դպրոց չունիմ, ակումբ չունիմ, թերթ չունիմ, տուն չունիմ: Միացեալը հետաքրքրական չէ: Ինչի՞ մասին կը խօսէիք:

Բացատրեցինք խնդիրը: Տուինք երկու կողմերուն հաստատուններն ու առարկութիւնները: Ծարժեց գլուխը: Ըսաւ...


- Մէկ ծայրայեղութեան վրայ դուք կանգնած էք, իսկ միւս ծայրայեղութեան վրայ կը գործեն Համայնավարները: Անոնք՝ առանց կուսակցական ուղղութեան տո՛ղ չեն ստորագրեր, իսկ դուք կը խորշիք կուսակցական մթնոլորտէն, եթէ նոյնիսկ այդ մթնոլորտը ըստ ինքեան գրական տարերք մը բովանդակէ: Մնաց որ, հոս կուսակցական կ'ըլլան մարդիկ ազատ ընտրութեամբ, գործելակերպի, ապրումի, հաւատքի ինքնիկ մղումով, ու այդ քնակնութիւնը մեռնիսու է գրականութեան:

- Այդ խնդիրներուն օգտագործումով, ես կը խորհիմ, թէ գրողը միայն մնաս կը բերէ գրականութեան, ամէնէն առաջ ընթերցողին, կը խրոչեցնէ ընթերցողը, - շեշտեց Մեքորոպ:

- Ընթերցողը չի խրոչիր, - ըսաւ Լեւոնեան, - եթէ գրողը խրոչելով շօտանայ իր նիւթին: Ձեռքիս մէջ երեւցած «Երկնէր երկին»ը պոռթկում մըն էր, գրական որեւէ պոռթկումի պէս, որտի՞ն ու մտքին մասնակցութեամբ զբոսուած գեղեցիկ էջ մըն էր, որուն...

- Որուն տեղը...

- Մի ընդմիջեր: Վերջացնե՛մ: Երբ պեղեցիկ ըսեմ՝ իմ մտքիս կը ներկայանայ ամբողջ մը: Կենդանի նիւթ մը: Կենդանի լեզու մը: Ոճ մը, ու հեղինակ մը՝ որուն հետ կարելի ըլլայ բառերէն անդին մտքի ճամբորդութիւններ կատարել, տառապիլ, այրիլ, արիւնիլ՝ ի ինքիբ ամբողջական ընդգրկումին: Նիւթ մը երբեք պեղեցիկ չէ ինքն իր մէջ: Լեզու մը



կենդանութիւն կը ստանայ պատկերէն: Ոճը կը սնանի մտքի հարստութենէն ու առանց թելադրական ուժի՝ զգուշիկ են ամէնքը միասին: Ես սիրեցի Վերկինէր երկինքը...

- Բայց անոր տեղը գրականութեան նուիրուած թերթի ժը մէջ չէ կարծեմ, գրականութիւնը կողմերէն վե՛ր բան մըն է:

- Ի՞նչ կը նշանակէ գրականութիւն, Աստուածը սիրես, ի՞նչ կը նշանակէ գրական թերթ, կողմերէն վեր, կողմերէն անգին, - լրջացաւ Լեւոնեան:

- Մտքի էրեւոյթ մըն է գրականութիւնը, որ կը ձգտի բացարձակ ճշմարտութիւններու յայտնաբերման: Եւ՛ այդքան: Միւս երեւոյթները իրաւունք չունին նաղ սրբազան ճիգին միջամուխ ըլլալու: Կեանքը իր օրէնքները ունի, գրականութիւնը՝ իրը: Պէտք չէ թոյլ տալ, որ մէկը միւսին վրայ աղղէ, մէկը մտնէ միւսին ծառայութեան մէջ:

- Իմ միակ ճշմարտութիւնը մարդն է, ու գրականութիւնը նո՛յն նշանակութիւնը ունի դարձեալ՝ մարդ, այսինքն՝ որոնում, յուսախաբանութիւն, պատրանք, անկում, անձնութիւն, տագնապ, երեքմանկութեան պահ, մարդ, մշտնջենական պայպակ ու ճամբորդ:

- Դուք չէ՞ք Հաւատար բացարձակ ճշմարտութեան:

- Եթէ ներքի է, ես նոյնիսկ բացարձակ ճշմարտութիւն ըսուածին Հասկացողութիւնը չունիմ: Իմ բացարձակս, իմ ճշմարտութիւնս Համոզումի մը կամ ներքին տենդի մը ղիմաց հոգիին անլաւալանդիք պտտիւմն է, բարկութիւնը կամ խնդակցութիւնը, արեան տարերային շարժումը, այն բացառիկ վիճակը, որ խոչընդոտները կ'արհամարհէ ու մարդոս կ'առաջնորդէ ծայրագոյն զոհողութիւններու: Վճառին ու ծիրանի պայծառութեան մէջէն վազող բոցամօրուս վաճաղները՝ տնցան այդ վիճակներէն: Գրականութիւնը իր էջերը անոնց դէմ դոցելով ճշմարտութեան չի ծառայեր, ընդհակառակն, կատարած կ'ըլլայ ճշմարտութեան զանցումը ճիշդ չէ՞:

- Թերեւս, - ըսաւ Մեծարդ, - բայց ինձի կը թուի, թէ բոլոր պարագաներուն կարելի պիտի չըլլայ կողմնակալութենէ՛ ձեռքադատուիլ, ու գրականութեան Համար մահացու է կողմնակալութիւնը:

- Ի՞նչ ես չըսի չափազանցէ, վերադէպ, մեծցուր, ուռեցուր՝ չըսի, պարմանադրական սէրեր սնուցանէ ու պարմանադրական աստիւթիւններ զարգացուր չըսի: Ըսի թէ մեղմէ անկախ կեանք մը կ'ենաւ անդ մը, իրականութիւն մը կայ, քու որոնած ճշմարտութեանը նախապայմանը:

- Բայց այդ իրականութիւնը կը պատկանի մասնաւոր մարդոց...

- Որոնք անշուշտ կը հետապնդեն մասնաւոր նպատակներ, - ձայնին շեշտը փոխելով ընդմիջեց Լեւոնեան, - հետեւաբար ընդհանրացման կարելիութիւններէ զուրկ է իրենց իրականութիւնը: Հետեւաբար՝ անվաւեր: Ա՛յո է ըսել ուրիշ:

- Ծիշդ այդ:

- Բայց ո՞ր գրականութիւնը, գրական ո՞ր տիպարը, ո՞ր դրագէտը տակէ չէ սկսած: Մը գրագէտը չունի իր մասնաւորը: Կայ Նազովրեցի, կայ Պուտոս, կայ Մուհամմէտ, կրնաս շարունակել՝ կա՛ն: Ասոնց նուիրուած աղօթքները արժէք չունին, արուեստ չունին, որովհետեւ ամբողջ մարդկութիւնը, ըստ քեզի, ամէնուն միաժամանակ, կամ մէկուն միայն չէ աղօթած: Բայց տարբեր է իրականութիւնը: Կ'ուզէի աւելցնել, որ կուսակցութիւններն այլ կրօնքներու հիմնադիրներուն պէս են ու ճամբաներ են՝ Նազովրեցիին դժած ճամբուն պէս, Մուհամմէտին ու Պուտոսային բացած ճամբաներուն պէս, ուր կայ յոյս, պատրանք, րնթացք, զոհաբերում ու աղօթք:

- Այսինքն:

- Դուն կ'ըսես չխօսինք, չգրենք ասոնց մասին, Նազովրեցիին, Մուհամմէտին, Պուտոսային մասին, խօսինք միայն Աստուծոյ մասին: Չխօսինք կուսակցութիւններու մասին, բաւարարուինք Հայրենիքը երգելով: Հայրենիքը Հողն է ու

կուսակցութիւնը՝ մարդը: Կ'ըսես անտեսանք մարդը ու պեղենք հողը: Կարելի չէ: Զ'ըլլար, եւ ապա՝ ո՞վ կուտակցական չէ, կուտակից չէ կեանքին մէջ, Հարցերուն չի մօտենար մասնաւոր անկիւնէ մը, կը դբէ առանց որչա՛ր ընարութեան: Գրազէտը պէտք է քաջութիւն ունենայ Հաւատար գործով մօտենալ երեւոյթներուն եւ գիրքերէն եկած ու սալոններուն մէջ բազմած տեսարանները պէտք չէ խանգարեն հուծիւններու Հետամուտ անոր առաքելական ընթացքը:

Լուեց: Լուեցինք: Մեսրոպ նայեցաւ ժամացոյցին: Ես՝ պատուհանէն դուրս: Երկու աղմկայտ լոգոսներու ետանկիւնին յարգարուած այդ սրճարանը ինծի կը թուէր, թէ այնքա՛ն ամենազեղեցիկ տեղերէն մէկն է այդ պահուն: Ուրախ էի ու մազէն չէին Հեռանար Լեւոնեանի ճամբաները, կրօնքներու հիմնադիրներուն եւ կուսակցութիւններուն միջեւ դժած զուգահեռականները ու տօնոց աւարտին յայտնուող անսահմանելի բաները՝ հողը, Աստուածը: Երկու ըմբռնում, տակնուվրայութեան երկու մշտնջենական պատճառ, խաչելութիւն ու անՀատում սրբութիւն: Կրօնք: Սիրեցի կատարուած Համեմատութիւնները: Նորէն դարձայ իրենց: Հակած էր սեղանին ու մտքերը կը խառնէր: Մեսրոպ նորէն նայեցաւ ժամացոյցին ու սկսաւ Հաւաքել թուղթերը:

- Կ'անուպարէ՞ք, - Հարցուց Լեւոնեան աչքերը վեր առնելով:
- Հետաքրքրական է զրոյցը, բայց պէտք է մեկնիմ: Ստիպողական ժամագրութիւն մը ունիմ: Ուրիշ օր կը շարունակենք, - ըսաւ Մեսրոպ:
- Կը թուի, թէ ուրիշ օր ես միայն մտիկ պիտի ընեմ:
- Ինչո՞ւ:
- Որովհետեւ այս Հարցին մասին հիմնական ուրիշ ըսելիք չունիմ: Կ'ուզէի միայն պզտիկ դրուադ մը պատմել:
- Այդքան ժամանակ կայ, պատմեցէք, - ըսաւ Մեսրոպ զուարթ:
- Պաղեստինի պատերազմէն առաջ էր ու այն ատեն տակաւին ուսուցիչ էի:

Եսֆայէն պաշտօնի կանչուեցայ: Դպրոցը մեր Համայնքին միակ վարժարանն էր: Հասնելէս առաջ, տեսուչ վարդապետը տեղեկացած էր կենսագրութեանս: Արձանագրութեան առաջին օրը Հարցուց.

- Պարոն Լեւոնեան, ճի՞շդ է, թէ դուք՝ Դաշնակցականներդ կրնաք առաջին ակնարկով զանազանել զաշնակցականը ոչ-դաշնակցականէն:
- Ճի՞շդ է, - ըսի վստահ:
- Ինչպէ՞ս:
- Այդ մէկը զաղտնիք է, - պատասխանեցի կատակելու տրամադրութեամբ:
- Ուրիշ անգամ Եսֆա եղա՞ծ էք:
- Ոչ:
- Կրնա՞ք հիմա սա մանուկներուն մէջէն անջատել զաշնակցական միջավայրերէն եկողները ոչ-դաշնակցական շրջանակներու մէջ մեծցածներէն:
- Անշուշտ, - ըսի, - եթէ կ'ուզէք փորձենք:

Վարդապետը լուրջ էր: Անմիջապէս դուրս ելաւ տեսչարանէն, զանգը տուաւ ու զարձաւ ինծի: Այն ատեն առաջ անցայ ու կարգի կեցած տղոց նայելու կերպերէն ու շարժումներէն մեկնելով՝ երկու խումբի բաժնեցի զանոնք եւ տուի իւրաքանչիւր խումբի ծնողներուն կուսակցական պատկանելիութիւնը: Իմ կատարած անսխալ մատնանշումը ափ ի բերան ձգեց վարդապետը:

- Ընդունեցէք, - աւելցուց անմիջապէս Լեւոնեան, - որ այդպէս են ու տարբեր են մեր մանուկները: Անոնց աչքերուն, շարժումներուն ու կեցուածքներուն մէջ առանձին բան մը կայ, յուսատու անհանդարտութիւն մը, տունէն, սկումբէն, աւելի Հեռուներէն, խորունկներէն իրենց փոխանցուած կենսունակութեան որոշիչ տարր մը: Կ'ուզէի ըսել, թէ պրականութիւնը չի կրնար անտես առնել այդ մասնաւորը: Ոչ միայն վատակաւորներուն, յեղափոխական խոյանքներուն մէջ սրբացած ընտիրներուն, այլեւ երկնէր երկին մեր մանուկներուն, որոնք հուր հեր ունին եւ աչկունքն են արեղակունք... Յատուութիւն:

Պ. Մ.

Գ Ի Ր Ե Ր Ա Ն Մ Ա Ն Օ Ք

Աստուած գրած է գիրով անծանօթ նամակներ բազում,
նետած հովերում...

Հոգիիս տուփէն
ես սիշտ կը հանեմ
Թուղթե՛ր առեղծուած...

Ես ի՞նչպէս կարգամ
Հոգիիս նետուած այսֆան խորունկ գիր,
Սրտիս մէջ իջնող այսֆան լսար ասումնք:
Ես ի՞նչպէս իսկայն
Մեծ ճշմարտութեանը այսֆան ծանրանում,
Հոգ-աշխարհ կրեմ,
Քրեզակ կրեմ,
Տիեզերք կրեմ:
Մարդու պայմանով, սրտի մէջ մարդու՝
Դնեմ կրակէն բոքր աստուածներու...

Ես ի՞նչպէս կարդամ կեանքի ուշ ժամուն,
Յայտնած բաներ
Անքնքեռնեցի...
Դէմ դէմի կեցած երկու ծերեր չե՞նք,
Ես ու որեւէ սիրոյ հին նկար:

Մշուշ ես տեսայ երէկ եւ այսօր,
Մշուշ սկիզբէն, ու մշուշ անվերջ,
Ռորոցցիս մէջ չկար պայծառ գիծ, գերեզմանիս մէջ կայ լսկ գորշութիւն,
Մատախո՞ւղ կարդամ ես մինչեւ կէտօր, կէտօրէ անդին...

Մշուշ կը կարդա՞ն,
Ռ՞՞՞՞՞՞՞ կրնայ կարդալ գիտցածէն անդին,
Ռ՞՞՞՞՞՞՞ կրնայ ըլլալ ընթերցող մութի.
Երբ Աստուած պռոայ մեզ մեզմէ հեռու,
Ինքզինքնը պռոայ մեր էութեան մէջ եւ անկէ հեռու՝
Ռ՞՞՞՞՞՞՞ կրնայ ըլլալ անդին իր մտէն, անդին հոգիէն,
Ընկալչութեանէն իր ամբողջ անձին,
Ռ՞՞՞՞՞՞՞ կրնայ ըլլալ անդին խորհուրդէն
Տիեզերք բանին, ու աստուած՝ բանին...

Ռ՞՞՞՞՞ կը թղթակցի եւ յանուն ինչի՞նչ՞
Իր ճշմարտութեան խոր հեռունեքէն,
Ժամանակն ըրած իրեն սուրհանդակ,
Պատերազմական թղթատար թռչունն,
Վնիս ազանի:

Ո՞վ կը քղթակցի,
Երկիր ու երկինք ըրած իր գիրքին մեծ նամակատուն:

Ո՞վ կը քղթակցի,
Մեծ Լինելութեան գուգտնի մելանով
կը յղէ թռչոյթներ անընթեռնելի,
Երբ այսօր տարի,
Ես չհասկցայ, ես լուռ ձգեցի
Հագիլիս հասած ամէն ձեռագիր...

Ձկարդացունելէ ետք այսօրէն, այսօրէն,
Ինչո՞ւ յամառիլ Առեղծուածն ընել, Տէ՛ր, քեզի գրիչ,
Ընել քարտուղար ողջ Արարչութեան,
Ու հասցէն գրել,
Դարեր շարունակ,
Մեր տգիտութեան...

Մեր գորշութեան, - մտիկ եւ օրտի ու բուք քնագրի,
Դեռ ամէն ինչի -,
Հարկ կա՞ր կազմելու մեզի թուական, կեանքի օրացոյց -
Հարկ կա՞ր գորշութեան տարիք սահմանել, տօնակատարել սարսամբ ընդմիջու:

~

Մանուկ մը կաւ լայ
Մօր ու արեւին ողջ լոյսը վրան -
Ճի՛շ ճի՛շ կը կարդայ նամակըդ երկայն,
Մանուկի նակտին ճի՛շեր կը գրե՞ն...

Կրակէ տարիք պատանիին մէջ,
Ինչեցան իսկոյն ցերեկներ անթիւ,
Ու կը քրքրուայ մարմինը անոր եւ հոգին անոր,
Յուզումով մը խոր -
Ի՞նչ հաղորդեցիր լոյսին մէջ կեցած, շուարած սրտին,
Արթնցած սրտին -

Հրդեհ առ հրդեհ մարդ կ'արթնցնե՞ն,
Այնքուն դիմաց կը վառե՞ն այդքան վառ շքեղութիւն,
Կ'ընե՞ն արիւնը դժոխք իրձերու այդքան հպատակ,
Աստուած մը կ'ըլլան եւ երագնեքով, եւ խոստումներով
Պատանի մը խեղճ ինչպէ՛ս կը խորեն...

~

Գարունն սարքեցիր,
Գոյնի եւ բոյրի միթիւնկ ամէն կողմ,
Եւ հոնտորներ,
Ֆեմբասաց արեւ -
Հալչող ձիւներուն հառ արտասանող տա՛հ եւ պերճախօս:
Գարունն սարքեցիր,

Բայց ըսէ՛, ըսէ՛,
 Մարդն երիտասարդ կը պտղացնե՛մ
 Խորունկ ճմենուայ իրբի ցարտ մտոյ՛,
 Այդքան լոյսի մէջ, եւ այդքան բայրի, եւ այդքան ջերմի՛.
 Ի՞նչ կը փորագրեն մարմնի մարմարին,
 Կը շարադրեն ա՛մպ,
 Թէ կը փանդակեն լոյսն անբռնաբեամբ...



Նամակնե՛ր ունիս,
 Ընթերցողն անոնց կը դառնայ ծերուկ.
 Պէտք է՛ կարգացունիս,
 Կը ներակցենն մազեր եւ մորուխ...
 Նամակներ ունիս,
 Ի՞նչ գիրքեր ունիս...
 Յայտնի չէ երբեք,
 Գում քա՛ղթ կը գրես քէ կը բանաս վերք՝
 Երբ բաներ կ'ըսես ու չես հասկցուիր:



Աստուած գրած է գիրով անծանօթ նամակներ բազում,
 Աստուած հավերժում...

Հոգիիս տալիս
 Ես միշտ կը հանձնեմ
 Թուղթեր անդժուած...

Ուշ կեանք է հիմա, ստուերներու ծամ,
 Աշուն կը դողայ ամէն բարձունքի,
 Ամէն ֆամբայէ մեռելի թափօր դեռ պիտի անցնի,
 Ի՞նչ հարկ գրելու...

Գոցուող սրտի ֆով չե՛ս կեցած բնու,
 Մեռելներու ֆով ինչո՛ւ գրուցել,
 Մեռելներու ֆով նոր երգեր կ'երգե՛մ...



Ես ի՞նչպէս կարողամ մեծ լինելութեան գիրդ գերագոյն
 Ու հանդարտ մնամ, ու չարագանամ,
 Ու չֆայֆայուիմ:
 Ո՞վ գիտցաւ մի՞թէ, -
 Աստուած կը գրէ՛, քէ կը ֆայֆայէ...

Այսպէ՛ս կը ստեղծեն. -
 Գի՛ր նետելով միշտ մարդու արիւնին,
 Մարդու խոր խիղճին ու խոր հոգիին,
 Թէ խօսեով պղտոր, անխմամալի՛.
 Անամբը կը ջնջեն վայրկեան առ վայրկեան...

Ո՞վ կրնայ կարգալ վննո ընթերցմամբ,
Տիեզերք բաւած քղթակայուն այս մութ,
Ու հոգի կոչուած այրենգիմն այս տաք:

Ո՞վ կրնայ կարգալ երբ Աստուած գրէ,
Եւ ո՞վ չի տխրիր,
Եւ ո՞վ չի մեռնիր՝
Երբ չհասկնայ...

~

Ինչո՞ւ կը գրես,
Եւ երբ կը ձգես հոգիս մէջ քուզք,
Ո՞վ այնքան այրած, այրած է այնքան՝
Որպէս կարեւայ հմտութեամբ վիշտի,
Քու գիրդ կարգալ,
Ձեզ իմանայ...

Գարուններ եկան, գարուններ գացին,
Քան չձգեցիր ոչ մէկ ծաղիկի,
Որ երածեշտի մէկ բառ իսկ գրէ ծոցատետրիս մէջ.
Քե՛ն էիր կարծես իմ մարմնիս տունին,
Օճախին հոգւոյս...

Դուն չխօսեցար ձմեռներու դէմ,
Լայսին միտոնէն հեռու պահեցիր անձրս շարունակ,
Իմ իզձերուս դէմ եղար բան տխուր,
Բան միշտ այլանդակ...

Կեանք տուիր, ապա՝
Եւ տուած կեանքիդ շուտ քշմամացար,
Տիեզերքին շուրջ, առաջին օրէն,
Շատ եիմ մեռելի գօտի մը եղար:

Ու ես գրուեցայ, ու ես լեցուեցայ՝
Բաներով հեռու, բաներով ուրիշ.
Լեցուեցայ դեռով,
Դեռի լորձուկով, դեռի կրակով,
Մտերով դեռի, ցարտերով դեռի...

Ու ես լեցուեցայ, - Աստուած իմ, անդու -՝
Ինձմէ իսկ ծածուկ, Գեզմէ իսկ ծածուկ,
Բացականերու խորունկ տխրութեամբ:

~

Կը գրեմ ես գիր, կու տամ արեւին, կու տամ ամպերուն,
Երկինքի գաւակ ու երկրի գաւակ խօյ քամիներուն,
Թոյ տանին հեռուն պատասխանն իմ այս,
Գրուած Աստուծուն:



Այս երկրին վրայ
 Ես բուն բաներուն բացական եղայ ու սէրը եղայ.
 Անհունը կ'էտին մէջ գետեղելու յեղաշրջական գուր ճիգը եղայ.
 Կաթիլ մը՝ ես ջուր՝
 Անվերջ վերջնագիր յղեցի ծովին, եւ ովկիաներուն,
 Աշխարհը ծածկող, Դուն լաւ կը յիշես, մեծ Ջրեղեգինն:
 Այս երկրին վրայ, ես մեծ խօսքերու մեծ կայուածատէր՝
 Անհուն խօսքերու չշարադրուած նամակը եղայ.
 Այնքան ապրումի, այնքան տխրութեան, այնքան տառաքի,
 Ինձմէ միշտ փախչող իմ վէպը՝ս եղայ...
 Գե՞ղ կարդամ հիմա, սոցէտ սոցու պէս նայնիսկ եեզելով,
 Թէ անցեալ մ'աւրբող
 Լոկ սպասումի եւ սպասումի...

Խուլ եղանկ երկու իրարու ձայնի,
 Ես մարդ, Դուն աստուած.
 Իրարու գիրի, սկիզբէն իսկ մենք, եղանկ անհաղորդ.
 Եզանք Դուն ու ես երկու բացակայ,
 Ջիրաք սպասող, անպայման սիրող,
 Խորունկ մութի մէջ գիրար նկարող...

Ի՞րք պիտի սորվինք մենք յստակ գրել,
 Պրծիլ յաւիտեան Դունին հնարած խանգարիչ մութէն:
 Ի՞րք պիտի սորվինք քայքայեցող լոկ գիրար չստեղծել,
 Ես ոչ խաղալ երկու, յաւիտեանակամ. —
 Դուն ամենագետի ու ես սոցէտի...
 Հերի՛ք օգտուիմք այդ երկու բառի
 Կովքովի դրուած շատ հին նպաստէն...

Միշտ Ամէնինչի եւ միշտ Ոչինչի
 Ինչ անտանելի՛ քորակցութիւնը մեր.
 Դուն ստեղծեցիր Ոչինչը միայն եւ գայն սիրեցիր,
 Ես Ամէնինչը միայն կը ստեղծեմ՝
 Երբոր կարեան ոչինչ մը ըլլալ...

Տարօրինակ բան. —
 Մեր նամակը կայ իրարու ուղղուած,
 Անընթեռնելի,
 Եւ սկիզբէն իսկ՝
 Մենք կանք ու չկանք...

Հագիլս տուփէն եւ միշտ կը հանեմ
 Թուղթե՛ր առեղծուած...

ԵՂՈՒԱՐԳ ՊՕՅԱՆՅԱՆ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

ՄԱՍՆ Դ.

ԵՐԲ ԱՆՁՆԱԶՈՂՆԵՐՈՒ ՓԱՂԱՆԳԸ

ԿՒՆՑՆԻ ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐԷՆ

Ա.

Այդ օրերուն հայոց աշխարհը հրաբխային էր :
Ամէն կողմ արհաւիրք կար եւ զէնքի շաշխենէն վրէժի ու սպառութեան ճայներ կը լսուէին :

Անցած տարուան ահուկից ցեղասպանութիւնը ոմանց յուսահատութիւն պատճառած՝ իսկ ուրիշները մզած էր վրէժի ու մահուան գինովութեան :

Լինել-չլինելու տարի էր :

Ու հայ ազատագրական շարժումը լինելու, տեսելու զուպարին կը պատրաստուէր, արհամարհելով կախաղանն ու մահը :

Սերոբ Այրբուբը, իր աննման խումբով, հրդեհի պէս կ'անցնէր Բարչէնէն ու յոյս ու կորով կը ներշնչէր ընկճուած Հայութեան : Մաժիկոնեան հին սպարապետները կարծես դուրս եկած էին իրենց շրթմներէն ու երկաթէ քայլով կ'անցնէին Սասնոյ լեռներէն, Նեմրուծի ու Սիփանի բարձունքներէն :

Ընկճուած, ամէնօրեայ հարուածներու տակ ճգմուած, հայ գիւղացիներու աչքը յառած կը մնար լեռներու ժայռերուն, ուր արծիւներ կային թառած : Տալուորիկի եւ Ծովասարի բարձունքներէն Սարբու Ասլանի մռնչիւնը կը լսուէր :

Սերոբ Փաշայի տարածած սարսափը թափանցած էր պաշտօնատուներէն ներս ու թրջական բանակը սրտադողով ճամբայ կ'ելլէր հայ Ֆետայիին զէժ ճակատելու : Մարդիկ որոնք մահը կ'արհամարհեն, կախաղանի բարձունքէն «ա'խ Հայաստան» կը գոչեն ու շղթայի դաճուած ժամանակ՝ կը յայտարարեն. — «նպատակս սկարութիւն չի ճանչնար» :

Թուրք հրամանատարը, նահանգապետը, գաւառապետը, ամբողջ պաշտօնաւարները զարմանքի մատնուած էին, տեսնելով ստրկացած Հայութեան ծոցէն դուրս եկած այս անօրինակ շերտները, որոնք թիւով քիչ էին, բայց

կուրծք կու տային Սուլթանի ամենազօր իշխանութեան դէմ եւ այլ չէին թարթեր զնդակէն կամ սուրէն: Այս անօրինակ զոհողութեան, սուրբերուն նահատակութեան նմանող այս անբացարեւի խալելութեան, մէկ անուն միայն կրնային տալ.

ՅԵՏԱՅԻ...

Ամէնքը շուտով ըմբռնեցին, թէ Փետային բնկրկում չունի, անձնագրուեան գերագոյնը՝ կեանքը դրած է զոհողութեան սեղանին՝ յանուն Հայոց ազատութեան:

Հալածանքը խիստ էր այս վտանգաւոր շարժումին դէմ, բայց բռնակալութեան գործակալներն ու իշխանութիւնները զիտէին, թէ այս զխենթերունք դէմ ելլողը ապահով չէ թէ կրնայ տուն վերադառնալ:

Գէորգ հալածական մըն էր, որ կը հետապնդուէր բանակի, վարձկան Քիւրտերուն եւ մասնիշներուն կողմէ: Բանախ պատերը ճեղքող այս վտանգաւոր Փետային կրնար փորձանք դառնալ իշխանութեան դիտուն, ու հետեւաբար անոր ոչնչացումը, կամ շղթայումը կը դառնար ամէնօրեայ մտահողութեան նիւթը, Մուշի եւ Պիթիւի իշխանութեանց:

Գէորգ անցեալ կոխներու եւ բանտի դաժան կեանքէն հոգ, փորձառութիւնը ունէր զզուշանալու ամէն տեսակ ծուղակներէ, նամարդ թշնամիին ձեռքը չիշխալու համար:

Տալուրիկի շրջանին մէջ իրար դռան բանտի փախստականները Անոնց միացան քանի մը Սասունցի մարտիկներ, որոնք համբերութիւն չունէին իրենց տան եւ զիւղի պատերուն մէջ փակուելու: Արդէն մէկ քանի կանոնաւոր զէնք ունէին, ինչ որ մեծ ոգեւորութիւն կ'առաջացնէր: Իրենց սեղանափութիւններու ընթացքին, կը զզուշանային ընդհարումներէ ու երբ կը տեսնէին թէ ճամբան կարուած է՝ վճռական հարուածներով կը բանային իրենց անցքը:

Գէորգ փոքրիկ խումբով մը կրկին վերադարձաւ Անտոքի քարանձաւը եւ մարդ զրկեց կելիէկուզան, սուրբ դործին նուիրուած երկու իշխաններու մօտ, խնդրելու որ իրենց հովիւներու միջոցաւ ջիջ մը պաշար ղըրկեն իրենց, ժամանակ մը այդ կողմերը մնալու համար: Ապահով վայր մըն էր այդ թաքստոցը եւ հետապնդումէն կրնային խուսափել եւ բարձրանալ Անտոքի դադաթը:

Ծարաթ մը անցուցին այդ քարանձաւի լուսեան մէջ: Բայց Գէորգ անհանդիստ էր եւ հովիւներու բերած լուրերէն տեղեակ՝ թէ ծպտուած պալատեաններ եւ կաշառուած Քիւրտեր, որսկան շունի պէտ զիւղէ զիւղ ու շրջանէ շրջան ման կու դան իր հետքը դառնելու համար:

– Ազա՛մ, հեռանանք այս շրջանէն, արագ տեղափոխութիւնը մեր խումբին ապահովութիւնն է:

– Ամէնէն ապահով տեղը այս թաքստոցն է, Գէորգ, ջուր ունինք մեր կողքին եւ վտանգի պահուն քանի մը ուղղութեամբ կարող ենք ազատիլ եւ ամուր դիրքեր գտնել Անտոքի ժայռերուն մէջ:

– Վտանգը միայն թշնամին չէ, Ազա՛մ, մեր կեանքի դասաւորումն ալ վտանգը կը բերէ որեւէ քարանձաւի առջեւ, ուր մենք ապաստանած ենք: Մօտիկ զիւղերէն ընտիր մարտիկներ ունինք, ու անոնք իրենց տունը տեղը թողած՝ մեզի հետ են: Անոնց զիւղերը ոտքի տակ են, շատ յանախ կը վերադառնան զիւղ եւ կը մնան շարաթ մը, ինչ որ թեթեւացումն է մեր խումբին, սարուստի տեսակէտէն: Մենք Բասնաց դաւառէն ենք, հոն չենք կըր-

նար վերադառնալ, հետևաբար բանտէն մեկի հետ փախչողները եւ տեղական մարտիկները տեղաւորենք իրենց զիւղական շրջապատին մէջ, որպէսզի կարենան սնունդ առանալ եւ վտանգի մը ենթարկուելու պարագային, ազգականներու օժանդակութեան ապաւինիլ: Այդպիսով մենք կը մնանք երեք-չորս հոգի, որոնք տուն ու տեղ ու ապաւեն չունին:

- Ուրեմն կը մնանք Բսանաց գաւառէն քանի մը հոգի, - ըսաւ Ազամ, - որ զեզմէ պիտի չբաժնուինք:

- Առայժմ այդպէս դատաւորենք մեր մարտական դորձը, - ըսաւ Գէորգ, - որպէսզի շուտ շուտ տեղ փոխենք եւ երբեմն ալ կարենանք իջնել Առաքելոց վանքի կողմը եւ Մշոյ դաշտի գիւղերը, մինչեւ որ միւս մարտական խումբերու հետ կապուինք եւ շարունակենք կռիւր բռնութեան դէմ: Մասունը դեռ չէ կազդուրուած ԳԱ-ի ապստամբութիւններէն: Նոր զէնքերով սպառազէն խումբեր պէտք է հասնին հոս: Մեր ժողովուրդն ալ քիչ մը քըրտական աշխրջիւններու կը նմանի, իր աչքին կը հաւատայ, քան տրուած խոտուածին: Լաւ զինուած եւ ստուարաթիւ խումբի մը երեւումը կրկին ոտքի կընայ հանել այս ժողովուրդը, որ երկու տարի առաջ այնքան արիւն թափեց: Արրոյի խումբը, հակառակ փոքրաթիւ ըլլալուն, շատերուն մէջ ոգևորութիւն ստեղծած էր եւ շատ մը մարտիկներ անոր կապուած էին ու այսօր ձեզի հետ են: Ախոս, որ Արրոն եւ Քոզմասը այդպէս շուտ նահատակուեցան: Անոնց բերած քանի մը նոր զէնքերը, կռուի վարժ մեր ժողովուրդին աչքը լեցուցած էր: Զէնքի ճամբով միայն Մասունը կրնայ իր նախկին կորովը առանալ:

Գէորգ այս կարգադրութիւնները գործնականի վերածեց: Գալէն եւ իշխան Մակար մնացին Սոլաղանքի շրջանը. Յակէն եւ Քաթարը պիտի չհեռանային Տալտրիկէն. միւսներն ալ տեղաւորուեցան իրենց զիւղերու մէջ ու պատուէր ստացան, որ զգուշ ըլլան եւ չբաժնուին իրենց զէնքերէն:

Գէորգ իր հետ անելով Աղամը, Քօլոս Օհանէսը եւ Կևալլօ Մանուկը հեռացաւ Անտառի քարանձաւէն, առանց սեւէ մէկուն յայտնելու, թէ ո՞ր սւղղութեամբ պիտի երթար: Իջաւ Առաքելոց վանքը, տեսակցելու համար Օհանէնէս վարդապետին հետ, ապա, զիւերանց մտաւ Դիրպլվանք, Բերդակ, կամ Օղունք, հին օրերու ընկերներուն եւ հաւատարիմներուն հետ խորհրդակցելու կացութեան մասին: Ամէն զիւղ, միայն մէկ օր եւ մէկ գիշեր կը մնար, յաջորդ օր ճամբայ կ'ելլէր անձանոթ ուղղութեամբ: Քանի մը օր ետք, կրկին կը վերադառնար Առաքելոց վանքի շրջապատին մէջ, այն թաքստոցը, ուր միւս ընկերները իրեն կը սպասէին:

Առաքելոց վանքը Մուշ քաղաքի զթին տակն էր: Կառավարութեան պաշտօնատարները յաճախ վանք կը հանդիսւղին եւ բնաւ կասկած չունէին, թէ բանտէն փախչելէ ետք, Սարբու Ասլանը պիտի գար կառավարութեան կեդրոնին այնքան մօտիկ տեղ մը ապաստանելու:

Վանքը այն առաւելութիւնը ունէր, որ նուազագոյն սնունդ մը կըրնար տալ այս փախտականներուն, վանահօր հաւատարիմ պահակին միջոցաւ:

- Տղա՛ք, այն լուրերը որ կը հասնին Պիթլիսէն, Վանի շրջանէն, Բարձր Հայքէն ու Խնուսէն՝ ոգևորիչ են: Ախրթի շրջանը Սերոբի անձիւական տիրապետութեան տակ է, անոր հետ ընտիր մարտիկներ կան, որոնք իրենց քաղութիւնը ցոյց տուած են այս երկու տարուայ վասնդաւոր կռիւներուն մէջ: Անձնապէս չեմ ճանչնար, բայց լսեցի, որ Սերոբի հետ են Աւիււ-Աւազը, Փայպկի Կարապետը, Ճարտարը, որոնք առանց վախի

կրնան մէկ մէկ բանակի դէմ կենալ: Ախլաթի շրջանը հասած է Գուրդէնը իր խումբով, որուն կ'ընկերայ Անդրանիկը, որ Աբրոյի հետ եկած էր Սասուն: Խնուսի մէջ կը դործեն Տուրպախը ու ձալլատը: Ասոնց բոլորին ճամբան ուղղուած է դէպի Սասուն, որպէս անտիկ բերդ, շարունակելու ազատագրական սրբազան պայքարը: Մուշի եւ շրջակայ գիւղերուն մէջ հաւատարիմ եւ անձնագոհ խմբակներ կազմուած են Թաթուլի եւ Հրայրի անմիջական նախաձեռնութեամբ: Ս. Կարապետի վանահայրը, մեր վարդան վարդապետը, որ հիմա Առաջնորդն է Մշոյ մէջ, այս բոլոր խմբակներու ղեկավարութիւնը իր ձեռքին մէջ կը պահէ: Դիմադրելու եւ կառավարութեան պահանջներուն ընդառաջ չերթալու ոգին ընդհանուր է: Ազատագրական շարժումը ծաւալած է եւ բազմաթիւ քաղ երիտասարդներ, ուխտեակներ դարձած են մեր սկսած սուրբ դործին:

Այս ոգեւորիչ լուրերուն ունկնդիր Ազամը բացակոնչեց.

— Փա՛ռք Աստուծոյ, հիմա մինակ չենք, ու վաղը ամէն տեղ անձնագոհ երիտասարդներ պիտի գտնուին, որոնք զէնքի պիտի փարին, ստրկութեան լուծը թօթափելու համար:

— Տղա՛ք, մեր տառապանքները շատ են, մեր ապրած պայմանները՝ բոլորովին աարբեր: Թերեւս այս կողմերը եկող նոր մարտական խումբեր չկրնան այնպէս ապրիլ, ինչպէս մենք մեր կետնքը կը քաշքշենք քարանձաւէ քարանձաւ: Աբրոյի խումբին պատահածը գիտէք: Անփորձ էին այդ երկու ընտիր գործիչները ու միւսի տակ մնացին: Մենք Սասնոյ ապստամբութեան գոռակիրներն ենք, պիտի պահպանենք մեր գոյութիւնը, պիտի քաջաբերենք մեզի հետ կապուած մարտիկները, մեր լեռներու բարձունքներէն հնչած որեւէ կորովի ձայն, հետաւոր բոլոր դաւանները կը խանդավառէ եւ ոգի կը ներշնչէ այն մարտական խումբերուն, որոնք մոլեռանդօրէն փորած են ազատութեան դռնին եւ աչքերը յառած Սասնոյ լեռներուն:

— Մենք արդէն վարժուեցանք մեր զուխը քարի վրայ դնելով զնանալու: Ինչպէս զարը կը դիմանայ, մենք ալ անոր պէս, — մրմնչեց Օհանէս, որ պարտաճանաչ, անձնագոհ զինուոր մըն էր:

Այս տեղեկութիւններով կաղաւթուած՝ խումբը քանի մը օր ալ մընաց Առաքելոց վանքի շրջապատին մէջ ու կրկին բարձրացաւ Սասուն:

Գէորդ երբեմն կ'այցելէր պատասխանատու իշխաններուն, երբեմն կը տեսնուէր իրեն կապուած մարտիկներուն հետ, նոր լուրերով կը խանդավառէր զանոնք ու քիչ մը պաշար հետը առած՝ իր հետեւորդներով կ'անհետանար: Իր ապաստանած քարանձաւը միայն քանի մը մարտիկներ գիտէին: Սասունցիներու մեծամասնութիւնը, դառն փորձերէ յետոյ, շատ զգուշ էր եւ խէթ աչքով կը նայէր Գէորդի մարտական խումբին: Անոնք կրնային նոր փորձանք մը բերել լեռնաշխարհի վրէտն, երբ իրենք պատրաստ չէին պաշտպանելու այդ ժողովուրդը, որ երկու տարի առաջ հուրէ ու սուրէ անցաւ:

Գէորդ այս բոլորը գիտէր եւ խոհեմութիւն կը համարէր աւգէ հեռու մնալ:

1896-ի ամառն ու աշունը անցաւ մեծ դառնութեամբ ու կրկնուեցաւ այն ցեղասպանութիւնը, որ տեղի ունեցած էր նախորդ տարին: Հայութիւնը այդ կտորածին զոհ կու տար 150 հազար անմեղ ու անզէն Հայեր: Իրենց զուխը պահեցին այն շրջանները, որոնք նուազագոյն դիմադրութիւն մը կրնային ցոյց տալ թրջական ամբոխին դէմ:

Մահն ու կեանքը իրարու կը բախէին հայ ժողովուրդի մորթին վըրայ: Եթէ մեծ մասը հայ ժողովուրդին անդէն ու ստրկական համակերպու-

Թեամբ արիւնի մէջ կը խեղդուէր եւ իր նահատակութիւնը անյուսօրէն կու լար, անդին կային ըմբոստ Նոգիներ, որոնք մաւր կ'արհամարհէին ու խիզախօրէն կ'անցնէին Հայոց լեռներէն:

Ու ձայնը այս անգամ կը հնչէր Պոլսէն, ուր դիտակից ու քաջակորով անձնագոհները կը մտնէին Պանք Օթոման, կը գրաւէին Եւրոպական դրամազուլուիի այս կեդրոնը եւ ուսմբեր կը տեղացնէին զօրքի ու ոստիկանութեան վրայ, սահմակեցնելով մեծ բռնակալը, որ վարժ էր անգթօրէն սուրբ քաջուս ժողովուրդը, հաւ մորթողի անտարբերութեամբ: Հոն կ'իջնար Բարգէն Միւնին քաջակորով, ու դուրսը, Պանքի պատերուն տակ, ուսմբերէն բղիկ-բղիկ կը տապալէին զինուորներն ու ոստիկանները, Թուրքերու Հօգիին մէջ աւր զնելով, երբ անոնք Հայու արեան փոխարէն, իրենց արիւնը կը տեսնէին մայրաքաղաքի պողոտաներուն վրայ:

Յուսահատ արարք մըն էր Պանք Օթոմանի Հարուածը: Եւրոպան եւ Թուրքիան զուացին, թէ յուսահատը մինչեւ ուր կրնայ երթալ, երբ մահուան արհամարհանքը արդէն առաջին օրէն արձանագրուած էր անձնագրուներու ուխտին մէջ:

Արմէն Գարոյի եւ Հրաչի դիկավարութեամբ՝ Հայ կտրիճները բերդի վերածեցին Պանք Օթոմանը եւ մայրաքաղաքը պահեցին սարսափի մթնոլորտին մէջ: Օտար պետութիւններու միջամտութեամբ անոնք դուրս եկան Պանքէն եւ փոխադրուեցան արտասահման:

Սուլթանը զգաց, թէ մահը աչք առնող Ֆետայիներու Հեռ զիւրիկ պուխ պիտի չզայ եւ նոյնիսկ տնապահով պիտի ըլլայ իր Երլարդի պալատին մէջ:

Եւրոպական մեծ պետութիւնները ցնցուեցան այն իրողութենէն, որ Հայ յեղափոխականները կարող էին օղը Հանկի Պանք Օթոմանը եւ տնտեսական անասման վնաս Հասցնել իրենց գրամատէրներուն: Ամէն ոք կ'ըմբռնէր, թէ Հայութեան վիճակը յուսահատական է եւ յուսահատ ժողովուրդ մը կրնար ինքզինք կրակին մէջ նետել:

Սուլթանի Հրամանով կոտորածները շարունակուեցան երեք օր անընդհատ ու արիւնէ կշտացած՝ Մարդապանը ներումի Հրովարտակ Հանեց եւրոպական մեծ պետութիւններու աչքին փոչի փչելու, միեւնոյն ժամանակ յոյս ունենալով, թէ ներումի եւ խաղաղութեան Հրովարտակը վերջ պիտի տար ազատագրական շարժումին:

Այլ կոտորածներէն ազատ կը մնային Սաութն, Մուշ քաղաքը, Մշոյ Դաշտը, Ախլաթի շրջանը եւ Հայկական այն վայրերը, ուր ինքնապաշտպանութեան մարտիկներ կային: Միայն Պիթիս քաղաքը հազար Հոգի զոհ կու տար, երբ Հրգեհի ճարակ կը դառնար Հայկական շուկան: Պիթիսը առհասարակ առեւտրական կեդրոն մըն էր, եւ լանսաց Սերորի ինքնապաշտպանութեան թէլադրանքներուն: Քանի մը տուներ դիմադրեցին մինչեւ վերջ: Ժողովուրդը ծանր Հարուած ստանալէ ետք, նոր զգաց զէնքի անհրաժեշտութիւնը:

Կոտորածի դառնութեամբ կը վերջանար այդ այտներ: Չդեռնող այն յուրերուն Հեռ նաեւ կը լսուէր Պանք Օթոմանի խիղախ Հարուածը եւ կարգ մը շրջաններու կորովի դիմադրութիւնը:

Մահը ու կեանքը կ'ընթանային կողք կողքի ու Հայ անձնուրացները, աւելի վճռական ու աւելի վրէժխնդիր, կը նետուէին ազատութեան մեծ դուպարին մէջ:

• Աւ ամէն կողմէ երկը կը հնչէր •

Դաշնակցական խումբ գնանք մե՞ք Սասուն...

✽

Հրայր վերադարձած էր Տարօն:

Մուլթանի ներումին յայտարարութիւնը, առաջին օրերուն, այն օգուտը ունեցաւ, որ զատապարտուածները ազատ արձակուեցան բանտերէն, որոնց մէջ աչքառու դէմքն էր Հրայրը: Հաստատուելով Խրղըլաղան գիւղը, պարտաւոր էր շարաթը անգամ մը Մուշ դալ եւ ներկայանալ կառավարութեան:

Ներումի հրամանը իր արժէքը կը կորսնցնէր մէկ ամիս անցած: Թրքական իշխանութիւնները կը վերսկսէին հարածանքը, ջրատելու համար հայ ժողովուրդի կորովը:

Հրայր թէեւ հսկողութեան տակ առնուած էր, բայց խոհեմութեամբ եւ ուրուականի պէս շարժելով, կապեր կը հաստատէր բոլոր յեղափոխական խմբակներուն հետ, համադրելու համար այն մեծ շարժումը, որ կը ծաւալէր Կովկասէն Վան, Բասէնէն Խնուս, ու Ախլաթէն դէպի Սասուն: Գալիք տարիներու երկուներով բռնուած էր սարկացած Հայաստանը, ու ազատագրական բռնկումները իրարու պիտի յաջորդէին աւելի ծաւալուն ու համահայկական բնոյթով:

Գէորդ երեք հօգիով Մուրք Յովհաննու վանքի անուտը պապատանեցաւ շարաթ մը, Հրայրի հետ տեսնուելու յոյսով: Մուրհանդակի մը հետ դաղտնի մտաւ Խրղըլաղան եւ քանի մը օր թաքնուեցաւ Հրայրի մօտ:

Հրայրի զեկուցումներէն լրիւ գաղափար մը կազմեց ծաւալած յեղափոխական շարժման մասին:

Դաշնակցութեան խումբերն ու մարտիկներն էին, որ լեռներէն կ'անցնէին անասճան գոհողութեամբ, եւ անթիւ քաջներով:

Երբ Գէորդին հետ Հրայր կը խօսէր շարժումի ղեկավարներուն եւ խումբերուն նախածնունդութեան մասին, Արարոյի յիշատակը վերարժարժեց:

— Գէորդ, երբ ես հասայ Կովկաս, օդնական ուժեր հասցնելու համար Սասնոյ ապստամբութեան, միայն Դաշնակցական մարտիկները ընդառաջ եկան իմ ինտրանքին եւ Արարոն ստուար խումբով մը ճամբայ հանեցինք դէպի Սասուն: Դժբախտաբար Արարոն իր նպատակին չհասաւ եւ զուն անոր նահատակութեան պարագաները գիտես արդէն: Անկէ հաջ, ուրիշ խումբեր ճամբայ հանեցինք, որոնք հասան Սասուն, ոմանք անցան Խնուս ու ամէնէն ստուար խումբը, որ ես անձամբ Թումանիայէն բերի, Սոխուրդցի Սերոբի ղեկավարութեամբ անցաւ Ախլաթ երկու տարի առաջ եւ մինչեւ հիմա կը պործէ:

— Մեզի հասած լուրերէն յայտնի է, որ Սերոբը փոթորկալի շարժումներ կ'ունենայ Պիթլիսի եւ Ախլաթի շրջաններուն մէջ, մեր լեռնցի ժողովուրդը բաւական ոգեւորուած է, տեսնելով որ ուրիշ վայրերու մէջ ալ ազատութեան կռիւր կը մղուի եւ իրենք մինակ չեն, որ գլուխ բարձրացուցած են Թրքական բռնակալութեան դէմ: Քաջակորով երիտասարդներ շատ ունինք: Ինչ որ կը պահսի անոնց՝ կանոնաւոր դէմքն է: Հիմա մեր խումբին հին ընկերները նոր գէներով գինուած են ու Սասունցիներու աչքը այդ գէներուն վրայ է: Գիտեն թէ չախմախի հրացանով մեծ գործեր չեն կրնար կատարել:

— Ի՞մ ու թաթուլի ձգտումն ալ այդ էր, — ըսաւ Հրայր: — Խումբերը, որ ճամբայ կը հանէինք լաւապէս գինուած կ'ըլլային: Ամէն մէկ գինուար

միշտ երկու զէնք կ'ունենար, որպէսզի զէնք մը աւելի փոխադրուի հայկական զաւանները: Բարեբախտաբար Կովկասէն փոխադրուած զէնքերը թրջական բանակի զէնքերուն վրայ առաւելութիւն մը ունին, ու մեր մարտիկներուն հարուածները չլմեցուցիչ սպաւորութիւն կը ձգեն թուրք բանակի եւ խուժանին վրայ, մանաւանդ տասնոց ատրճանակը բացառիկ առաւելութիւն մը կու տայ մեր մարտիկներուն, երբ թշնամին այդպիսի արագահարուածէ գուրկ է:

- Ի՛հ, եթէ մեր ժողովուրդին ձեռքը այսպիսի զէնքեր անցնի, մեր լեռներուն վրայ մենք անպարտելի կը դառնանք, - յարեց Գէորգ:

- Հիմա, որ յեղափոխական շարժումը լայն ծաւալով կը զարգանայ, ընդգրկելով Վան, Էրզրում, Բասէն ու Խնուս, յոյս կայ որ Կովկասէն ու Պարսկաստանէն բաւական ուժամթերք փոխադրուի այն վայրերը, ուր ապրտամբութիւններ պիտի բռնկին: Թաթուլի եւ իմ ծրարած աշխատանքը կիսատ մնաց: Ինչպէս գիտես, ձերբակալուեցանք եւ զատապարտուեցանք երկուքս ալ: Ես բախտի բերումով ներումէն օգտուեցայ եւ վերադարձայ, մինչդեռ Մուրատը փոխադրեցին Արաբիա եւ բերդի մը մէջ արգելափակեցին, իսկ Թաթուլը ամէն օր կախազան բարձրանալու վառնգին ենթակայ է: Նոր զեկամարներ, նոր մարտիկներ հրապարակ պիտի գան, շարունակելու համար գործը, որ տարիներ առաջ բռնկեցաւ մեր լեռներուն վրայ:

- Մեր ժողովուրդը յոյսեր կապած է օտար պետութեանց միջամտութեան հետ: Ես զէնքի մարդ եմ ու իմ յոյսը միայն զէնքի վրայ է. ի՛նչ կը մտածես այդ ժառին, պարո՛ն Հրայր:

- Օտար պետութիւններէն մեզի փրկութիւն չի գար, անոնք իրենց շահերը կը հետապնդեն եւ հայոց արիւնք կ'օգտագործեն, քան մը աւելի կորցնուի համար տղէտ թուրքիայէն: Մեր յոյսը մեր սեփական ուժի եւ լայն կազմակերպութեան վրայ պիտի ըլլայ: Գաղտնապաշտութիւն, խոհեմութիւն եւ յանդիմութիւնը պիտի ըլլան մեր հիմնական սկզբունքները, երբ գործը կը ծաւալենք: Քու տեղը մեր լեռներն են, այդ ժայռերը քեզի սպաւէն, մինչեւ որ ուրիշ մարտիկներ գան եւ ստուարացնեն նուիրահանրու բանակը: Ես եւ Վարդան վարդապետը պիտի ջանանք կորովը բարձրացնել Դաշտի, Մուլի եւ լեռնաշխարհի առաջաւոր մարդոց, որպէսզի հաստատուն մնան ազատութեան նուիրական գործին: Ես ամէն շարաթ Մուշ պիտի երթամ եւ իմ ներկայութեամբ ապացուցանեմ, թէ որեւէ գործի չեմ խտնուիր: Բայց Մուշ երթալը ամէն անգամ կը նպաստէ, որ տեսնեմ Վարդան վարդապետը եւ շփումներ ունենամ մտաւորականներու եւ ազդեցիկ անհատներու հետ: Կազմակերպութիւնը պէտք է ծաւալենք ամէն շրջան եւ ամէն գիւղ, որպէսզի մեր գործիչները եւ մարտիկները ապահով եւ հաւատարիմ ընկերներ ունենան, երբ տեղէ տեղ կը փոխադրուին:

- Ես վաղը լեռ կը բարձրանամ, - ըստւ Գէորգ, - հիմա մեր յոյսի թելերը ամուր են, մեզ յմոռնաք, գիտէք արդէն թէ այդ լեռներու վրայ ամէն վայրկեան մեր պուրը խոնարհած է զէնքին վրայ:

Երբ յաջորդ արշալոյսին Գէորգ իր փոքրիկ խումբով Կուրտիկ կը բարձրանար, Հրայր թելադրեց.

- Խոհեմ եղէ՛ք, եւ աւելորդ կոխներու մի բռնուիք: Անժամանակ շարժումները մեր ուժը կը թուլցնեն:

- Մէկ գնդակը աչքի լոյսի պէս կը պահենք, անոր արժէքը կոխներու մէջ սորվեցանք, - ըստւ Գէորգ եւ դուրս ելաւ Դրզըլաղաճէն, երբ մըշուշ էր ամէն կողմ:



Մարերու Աւլանը աւելի սրտապինդ վերադարձու Անտքի էր թաքստոցը: Հրայրը անսնելէն ետք, մինակութեան զգացումը չքացած էր արդէն: Ընկերներ ու զինակիցներ ունէր Հայաստանի բոլոր շրջաններուն մէջ, ու անձնուրացները իրարու անծանօթ, բայց սրբազան ուխտով յաւէտ իրարու կապուած՝ աննման հերոսներու փաղանդը կը կազմէին: Գէորգի սիրտը հրճուանքով լիցուած էր, երբ ամէն կողմէ հերոսական մարտնչութեան ձայնը կը լսէր:

Իր զինակից ընկերները իրարու ձայն տալով հաւաքուած էին Անտքի թաքստոցը, առատ պաշարով: Հոն էին Տալարիկի կտրիճները, հոն էին Ալամն ու Գալէն, հոն հասած էին նաեւ բանտէն իրեն հետ փախչողները: Արդէն իրենց թիւը կը հասնէր տասնըհինգի, ու իրենց կը մնային պահակը այս բարձրաբերձ լեռներուն, ուր առաջին անգամ ազատութեան դրօշը բարձրացած էր:

Քանի մը օր այդ թաքստոցին մէջ մնացին, լուրերը իրարու հազորդեցին, զիւզերու մտայնութեան մասին անդեկութիւններ տուին Գէորգին: Միտլորտը խոնդավառ էր: Երբեմն բարձրացան Անտքի դազաթը, ելան Գեղեկի վրայ ու վերադարձան Անտքի արեւելեան ձորերը, տեսնելու, թէ զրոտական ի՞նչ շարժումներ կան:

Հակառակ անցած տարիներու արիւնոտ դէպքերուն, Սասուն որեւէ հարուած կրած չէր եւ զրոտական ոտնձգութիւնները ամէն տեղ զննքով դիմաւորած էին: Ընկճուած Սասունը անտակի բերդ մը կ'երեւար Քիւրտերու աչքին, եւ առանց թրջական բանակին, անոնք յանդգնութիւն չունեցան ոտք կոխելու այն վայրերը, ուր նախկին տարիներու կռիւները տեղի ունեցած էին:


Գէորգ այս ուժերը համախումբ չպահեց, զանոնք դասաւորեց իրենց շրջաններու մէջ, որպէս շարժական մարտիկներ, որոնք պատրաստ պիտի ըլլային անմիջապէս միանալու խուճրին, երբ անհրաժեշտութիւն զգացուէր: Միայն Գալէն եւ Յարութիւնը յամառեցան մնալ Գէորգին հետ: Այս երկու անձնուրացները թրջական բանակի զէնքերով զինուած էին, չզխեստ ս'էր եւ ի՞նչ արարքով կրցած էին հեռաւոր ճանապարհներու վրայ դեպքերու ռաւիկաններէն խել զանոնք:

Գէորգ տեղի տուաւ, յատկապէս Գալէի պարագան նկատի առնելով: Երկուքն ալ, թէեւ շատ երիտասարդ, բայց փորձուած կուռողներ էին եւ աչք չէին թարթեր զնոյակէ:

Գալէի ներկայութիւնը իր հոգեկան վշտին մխիթարունք մըն էր, եւ թէ իր վերաւոր երազին շարունակութիւնը: Գէորգ չէր մտածեր այդ մասին, բայց բնազդը միշտ ներկայ էր իր հոգւոյն մէջ, որպէս ողբերգութիւն մը, որ անյայտ կը մնար ամէնքէն, բացի նոյն վիշտով քարացած Գալէէն:

Գէորգի խուճրը շրջանէ շրջան փոխադրուելով, մարտական ուժերը գտաւ զանազան դիւղերու մէջ, որոնք անհամբեր էին անձնուրացներուն միանալու: Բայց հետեւելով Հրայրի խորհուրդին, այդ նոր ուխտեանները իրենց գիւղերուն մէջ պահեց, մանաւանդ որ Սասունցիները բոլորն ալ հաւաքական բանակ մը կը կազմէին իրենց իշխաններով եւ երիտասարդներով, ու այդ հաւաքական ուժը աւելի անհրաժեշտ էր ընդհանուր ապստամբութեան մը պարագային:

Աչունը կը մօտենար: Անտառները ոսկեգոյն տերեւներով առանձին փայլ մը ստացած էին, լեռները բարձրացող զոյգ անոցային հիւզակներն



ու վրանները տուն կը դառնային, երբ արեւոտ օր մը Սերոբ դինավառ խումբով երեւցաւ Սասնոյ բարձունքներուն: Խոնդավառութիւն մը ծաւալեցաւ զիւզէ զիւզ, ի տես նոր զէնքերու եւ նոր ֆետայիներու սպառազէն ու գրաւիչ կերպարանքին:

Սասնոյ ժողովուրդը խմբապետ Սերոբի եւ անոր ընկերացող ֆետայիներու մէջ Հայ բանակ մը կը տեսնէր, բոլորովին ինքնայատուկ տարազով, ընտիր զէնքերով, կայտառ ու կտրիճ երիտասարդներէ կազմուած:

Սերոբ պատմութենէն յիշատակ մնացած սպարապետներէն մէկն ըլլար կարծես, որ յարութիւն առած՝ Մամիկոնեան բանակներու գլուխը անցած՝ Հայոց աշխարհի տէրը կը հանդիսանար: Կարծես Հայ ազգը ամբողջութեամբ փոխադրուած էր Սասուն, Կովկասէն ու Կարսէն, վանէն ու Ախլաթէն, ու Սերոբ ազգապետի մը նման կ'երեւնար այս պատերազմիկ ժողովուրդի աչքին: Հոն էր Գուրգէն Աքուրխեցին, մարտիկ ու մտաւորական, հոն էր Շապին-Գարահարացի Անդրանիկը, որ հետագայ տարիներուն իր բեւ արծիւ պիտի սաւառնէր Մովսաարի գագաթներուն վրայ: Հոն էին Ախլաթի եւ Սիփանի կտրիճները, մարտունակ, քաջակորով ու վճռական: Այդ գը իր սարկական թմբիւն արթնցած՝ ազատագրութեան հետաւոր երազէն գինով՝ յեննացած էր Սասնոյ բարձունքներուն վրայ:

Ու Սասունցիները մոռցած քանի մը տարի առաջ տեղի ունեցած արբիւնայի ճակատամարտները, գրկարաց կ'ընդունէին Սերոբը, որ երգերուն մէջ զուլալ աղբիւրն էր, ծարաւը յաղեցնելու համար, ազատութեան կարօտ Հայութեան:

Ֆետայական լեզունը եւ յեննական այս ժողովուրդը, առաջին վայրկեանէն, իրարու ձուլուեցան, միակամ ու հաւատաւոր, ազատութեան սուրբ ուխտով:

Սերոբ երբ ոտք դրաւ Սասուն ու շրջապատուեցաւ իշխաններէն, իր առաջին հարցումը եղաւ.

- Ո՞ւր է Գէորգը, այս յեռներուն առիւծը: Տարիներէ ի վեր անոր եւ ձեր զէնքերուն ձայնը լսուեցաւ ամէն տեղ:

- Մուրհանդակ զրկած ենք, ձեր խումբին զայլը իմացներու համար, - ըսաւ իշխան Միքայէլ, - ուր որ է շուտով պիտի երեւի:

Ժամ մը հապիւ անցած էր, երբ Գէորգ առանձնակով մը ներս կը մըտնէր իշխան Միքայէլի տունը, ուր համախմբուած էին Սասունցի հին մարտիկները, Սերոբը տեսներու:

- Ահա՛, ձեր յեռներու առիւծը, - բացականչեց իշխան Միքայէլ, ջերմութեամբ դիմաւորելով Գէորգը:

Մարտիկները Սասնոյ տարագր ունէին, անոնց զէնքերն ու փամփուռաները կարծես ձուլուած էին անոնց մօրմին հետ, արեւէն ու հովէն այրած էր անոնց զէմքը, ու անոնք կը նմանէին պղինձէ արձաններու: Անոնց աչքերը կը փայլատակէին ներսի կրակէն բոնկած, ուր կար ուրախութիւն եւ անձնազտահոգութիւն:

Սերոբ ուղի ցատկեց ու Գէորգը առաւ իր գրկին մէջ: Անոնք պահ մը այդպէս մնացին անշարժ: Երկու անձման մարտիկները արձանացած էին, իշխաններու հիացիկ նայումներուն առջեւ: Լերան ծերպերէն վար իջնող այս հինաւուրց մարտիկները Սերոբի խումբին խառնուեցան, փոխադարձ զուրգուրանքով ու մտերմութեամբ, կարծես տասնակ տարիներու զինակիցներ եղած ըլլային: Սերոբ իր ընկերներով կը հիանար այս առիւծաւոր ընկերներուն վրայ, որոնք տասը տարիներէ ի վեր կը փոթորկէին

այս լեռնաշխարհը, ու Գէորգ իր ընկերներով կը դժայլէր Սերոբի Հերոսական մեծութեան եւ իր ընտիր մարտական խումբին ի տես :

Քանի մը օրուան ընթացքին անոնք ծանօթացան իրարու: Յետապիտանաւ առանձին Հաւարոյթի մը մէջ լսեցին Սերոբի եւ Գուրգէնի ծրարները եւ նոր թափով ու խանդավառութեամբ անցան գործի:

Սերոբի այս տրչաւախումբը եկած էր Սասուն, զէնքի փոխադրութեան նպատակով: Ամէն մէկ զինուոր իր կրած յաւելեալ զէնքի եւ փամփուշտները կը թողուր Սասուն մնացող մարտիկներուն, Գուրգէն եւ Անդրանիկ քանի մը ընկերներով կը մնային Հոն, իսկ Սերոբը իր խումբով կը վերադառնար Ախլաթի շրջանը:

Հալածանքը շատ էր ասի կողմը ու Սերոբի ներկայութիւնը անհրաժեշտ՝ զսպելու համար գործն ու ոստիկանութիւնը, ինչպէս նաեւ զիւրոյցեղապետներու շահաւակութիւնները:

Բայց Սերոբ աւելի յատուկ նպատակ մը ունէր: Կ'ուզէր տեսնել բարձրաւանդակը, աչքէ անցրել յիսուոր շրջանները, հասկնալու թէ լեռնաշխարհը ի՞նչ բնական դիրքեր ունի Ֆեռասական կեդրոն մը դառնալու համար: Ու Սերոբ անցնելով Կելիէկուզան, տեսնելով Տալուրիկը, Անտոքն ու Մովսատը, համոզուեցաւ, թէ այդ լեռները բնական բերդեր էին, ուր Ֆեռասական արագ շարժումներ կրնային ընել:

Սերոբ, որպէս ռազմագէտ-խմբագետ, համոզուած էր թէ Ֆեռասական շարժումին յաջողութեան գաղտնիքը արագ տեղափոխութեան մէջ կը կախանայ: Ֆեռասի պիտի կռուէր, երբ վտանգը անխուսափելի կը դարձնէր ճակատումը թշնամիին դէմ: Բայց կրիւր վերջանակ էտը, Ֆեռասական խումբը օղակէն դուրս պիտի գար, եւ, որքան կարելի է, Հեռուոր վայրի մը մէջ ապաստանէր, նոր դիրք մը գրաւելու համար: Այս ռազմավարութիւնը յաջողակէս կրնար գործադրուիլ Սասնոյ լեռնաշխարհի այլազան թեւերուն վրայ:

Ախլաթի շրջանին մէջ օղակը շատ սեղմուած էր Սերոբի խումբին շուրջ: Տարածութիւնը նեղ էր ու անոր շրջակայ լեռները Հայերով բնակեցած չէին, մարտիկներուն ապաստան տալու համար:

Ձէնքի ու ռազմամթերքի պատրաստութեան շրջանը սկսած էր: Գէորգ լծուեցաւ այդ գործին ու շատ լաճախ թուցիկ խումբով իջաւ Մըշոյ Դաշա, կապուեցաւ նոր ուխտեաներու Հետ, որոնք իրարու շփոխուած ցանց մը ստեղծած էին Դաշաի գիւղերուն մէջ: Հրայրի տելիայն աշխատանքը իր արդիւնքը տուած էր: Ամէն տեղ Գէորգի խումբը ապաստան կը գտնէր, եւ Հաստաարիմ նուիրեալներ, որոնք կ'օժանդակէին ռազմական պատրաստութիւններուն:

Գուրգէն Հաստատուեցաւ Կելիէկուզան, որ կեդրոնը կը նկատուէր Սասնոյ ապստամբական շարժումներուն: Անիկա բանիմաց այն ժողովրդական գործիչներէն էր, որ կրցաւ կործ ժամանակուայ ընթացքին համակրանքը շահիլ Սասնոյ իշխաններուն, եւ մարտական ուժերուն: Ան նաեւ քաջ մարտիկ մըն էր, որ կրնար յարգանք պարտադրել ռազմիկ ժողովուրդին:

Գէորգ իր շրջադաշտութեան ընթացքին յաճախ ընդհարումներ կ'ունենանար ոստիկանութեան Հետ եւ միշտ կը յաջողէր ռազմամթերք հասցնել Սասուն:

Գուրգէնին անփոխարինելի գործակից մը եղաւ Գէորգ ու Գուրգէն անհրաժեշտ գործիչ մը նկատուեցաւ Գէորգի մարտական խումբին կողմէ:

Այդ ամբան իրանաստորի արշաւանքին ձայնը կը հնչէր լեռնէ լեռ, դաւառէ դաւառ ու կը հասնէր մինչեւ Սասուն:

Մենք անկեղծ զինուոր ենք, տառնալիս վիճակ,
Ուխտեր ենք ծառայելի, երկար ժամանակ...

Մարտական այս շփոթը խանդավառութիւն կը ստեղծէր շրջանէ շրջան: Մագրիկ ցեղի բնաջնջումը ազդարարութիւն մըն էր քրտական ցեղախումբերուն, որոնք անպատիժ պիտի չմնային, եթէ Փետայիներու կոնսակէն Հարուածելու ելլէին:

Առնական ու պատուախնդիր Փետային ցոյց պիտի տար քրտական ցեղերուն, թէ կրնար Հարուածել թշնամին կայծակի արագութեամբ, բայց երբեք պիտի չնմանէր ստորին Թուրքին եւ վայրազ Գուրտին: անզէն երեխաներ ու կիներ կոտորելով:

Կոճանց երբեք ձեռք տալու չէ,
Վրիժառու քայ Փետան...

Այս պիտի ըլլար Փետայական վեհանձնութեան պատգամը, որուն Հաւատարիմ պիտի մնային ազատութեան նուիրուած անձնուարացիները:

Հոգեկան թրթռացում կար Սասունցիներու սրտին մէջ, լսելով սքերայի այն արշաւանքը, որ տեղի ունեցած էր Պարսկաստանի սահմանէն ներս, Պաշ-Քալէի շրջանին մէջ:

Կորովի այս շարժումները աւելի կը պողպատէին կամքը լեռնական այս ժողովուրդին, որ Հիացում ու պաշտամունք ունէր կտրիճ արարքին հանդէպ:

Ու երբէր կը պատգամէր, թէ անձնազոհները անկեղծ զինուորներ են Հայոց ազատագրութեան: Այդ շարժումին մէջ նետուողները առանձին եւ ինքնայատուկ ճակատագիր մը ունէին, եւ ուխտած էին ծառայել երկար ժամանակ:

Ինքնայատուկ, այն իրողութեամբ, որ այդ մարտիկները գուպարներու մէջ պիտի իյնային զէնքը ձեռքին, ու նահատակ հերոսի անուն մը ձգելով՝ պիտի հասնէին փառաց պսակին:



Մարերու Ասլանը հիմա իր տարերքին մէջն էր: Ծեռայական շարժումը, որ Հեռուոր սահմաններէն կը ծաւալէր դէպի Սասուն, մարտական ու հերոսական էր, ու Գէորգ իր անձնազոհութեան ու խիզախութեան կորովը կը կրկնապատկէր՝ ոգևորուած ազատագրական բանակի աճումէն:

Կազմակերպութիւնն ալ արմատ կը բռնէր ժողովրդական, յատկապէս գիւղական աշխատանքային խաւին մէջ: Լոռիայի գործողները լայն ժողովրդական զանգուածներ կը կապէին Հայ յեղափոխական շարժումին ու հերոսապաշտութիւնը կը ծաւալէր ազատութեան զարթնումը դիմաւորող սարկացած ժողովուրդին մէջ:

Գէորգի անցքը ամէն տեղէ հերոսական ողի մը կը ներշնչէր նոր երիտասարդութեան եւ անոնց մէջ անձնուէրը կը կերտուէր, որպէսզի օր մըն ալ ինք հասնի փառաց պսակին:

Հեւ ի հեւ ժողովուրդը գիշերու, ռազմաժողովը պատրաստելու ետեւէն, Սասուն ապաստանած Փետայիները: Ոմանք վառօդ կը փոխադրէին իրենց չախմախի զէնքերուն, ոմանք՝ փամփուշտ կը թափէին: Այդ օրերուն

ուշադրաւ էր Անգլիանիկ աշխատանքը: Ձէնքերը կը շտկէր ճարտար արհեստագործը մը պէս, արուած մասերը կը լրացնէր գինանոցի վարպետէ մը աւելի լաւ:

1898-ի գարնան, Սերոբ իր ամբողջ ընտանիքով Մասուն վերադարձաւ:

Երկու-երեք տարուան հերոսական դիմադրութենէ հաջ, Սերոբ օրինակը կու տար ամբողջական զոհողութեան: Կ'առնէր իր երկու եղբայրները, երկու անյափաճա զաւակները եւ Սօսէն ու արշաւախումբով մը կը հասնէր Մասուն:

Քըչէի հարուստ տունը տարակ կը դառնար: Ամբողջ հարստութիւնը յատկացուցած էր զէնքի եւ զինամէքի անձնուրացները, որոնք իրմէ անբաժան մնացին: Հայ ազատագրութեան նուիրուած այս անձնուրացները ո՛չ միայն իրենց կեանքը զրոծ էին պատութեան ճանապարհին, այլև երբեմն զերազոյն արարքով մը իրենց տունն ու տեղը եւ ամբողջ ընտանիքը կը զընէին զոհողութեան սեղանին:

Սերոբ այդ ամբողջական զոհողութեան առաջին դէմքը հանդիսացաւ: Ան հասաւ Մասուն, որպէս ֆեաայիներու ընդհանուր խմբապետ, ու զորոնց ժողովուրդին մէջ՝ որպէս ազգապետ, իր անձին եւ արարքներուն հանդէպ մեծ հիացմունք ստեղծելով:

Մասուն անհրաժեշտ կայան մըն էր ազատագրական յեղափոխութեան համար: Լեռնաշխարհը պէտք է վերագտնէր իր միակամութիւնը եւ ներքին պառակտումներէ պիտի զզուչանար: Երջաններու իշխանները փորձառու էին եւ դիտէին, թէ փոքրիկ վիրաւորանքներէ ազդուած՝ չըջանները կրնան իրարու դէմ ցցուիլ եւ ջլատել ազատագրական շարժումը:

Սերոբ եւ Գուրգէն, իշխաններու հետ միասին, լրջօրէն քննութեան առին աջ ինդիւնները, որոնք չըջանները իրարու դէմ կը լարէին: Աղջիկ փախցնելու սովորութիւնը, որ ամուսնանալու կերպ մըն էր Մասունցիներու եւ Քիւրտերու բարձրուն մէջ, ամէնէն վտանգաւոր երեւոյթն էր, որմէ կ'առաջանար ընտանեկան հակառակութիւն ու երբեմն ալ սպանութիւններ, որոնց հետեւանքով չըջանները տարիներով իրարու թշնամի կը մնային եւ պատեհ առիթը ներկայանալուն պէս, իրարու դէմ կը ցցուէին, իրենց զէնքերով: Այս արարքները կը բաւէին ջլատելու ազատագրական յեղափոխութիւնը: Ազատագրական շարժման առաջին պայմանը բարձրաանդակին միակամութիւնն էր:

Աղբիւք Սերոբի, Գուրգէնի եւ Գէորգի ներկայութեան՝ չըջաններու իշխանները ուխտ կնքեցին արգիլելու աղջիկ փախցնելու սովորութիւնը ու այս որոշումը հաղորդեցին ժողովուրդին:

Յեղափոխական կայմակերպութիւնը եւ չըջաններու իշխանները միակամութեամբ իրարու կը զօղուէին եւ կը ձեռնարկէին նուիրական դործին, յոյսով ու նոր երազներով խանդավառ:

Երբ իշխաններու ժողովը վերջացաւ, Տալուրիկի իշխան Համզէն ձեռքերը վեր կարկառեց:

— Փառք Աստուծոյ, մենք ալ մեր հիւքիւմաքը ունինք: Պարոն Սերոբ, դուն մեր ազգապետն ես, մեր կամքը մէկ է, ու քու հրամանը մէկ պիտի ըլլայ ամէնուն համար: Օսմանցու դորութիւնը չունինք, բայց մեր պապիքու սիրտը ունինք մեզի ապուէն: Սիրտս կ'ըստ ծով դարձած է այս

սօր: Սասնոյ ճրագը վառման կը տեսնեմ: Մեր Մովսեսը իր հեքիաթն ունի, մենք այդ հեքիաթին լոյսը մինչև այսօր պահած ենք:

Սերոբ Հետաքրքիր ու անհամբեր մտիկ կ'ընէր լեռնական իշխանը: Կարծես թէ ամբողջ ազգի սիրտէն բխած խորհրդաւոր պատգամն էր, որ կը լսէր:

- Ի՞նչ է այդ հեքիաթը, իշխան, - ըսաւ Սերոբ, - պատմէ՛ տեսնենք լոյս մը կը ծագի՞ ատկէ:

- Մեր հեքիաթը մէկ է, երկուք չ'ըլլար, - շարունակեց Համդէն, - այսօրուան մեր ժողովին, մեր կամքով, մեր լեռներուն վրայ իշխանութիւն մը ստեղծեցինք: Մենք բոլորս ալ իշխան ենք, բայց իշխանական դաւազան չունինք: Հիմա, մեր բոլորին կամքով, դուն, որ հիւր ես մեր լեռնաշխարհին մէջ, մեր զլխուն ու աչքին վրայ տեղ ունիս, մեր ասպետն ես, ինչպէս Ախլաթի շրջանին մէջ կ'ըսեն:

- Վերը Աստուած, վարը Սերոբ...

- Մեզի համար, - շարունակեց իշխանը, - նոյնն է: Սիրտս ելման ծով դարձաւ ու յիւնցի առիւծ Մհերի խօսքը: Մտահոգ էր մեր երկրի տէրը՝ Մհեր, որ դաւակ մը չունէր: Անոր կ'իյնը՝ Արմազան ըսաւ.- «Մհեր, եթէ մենք զաւակ ունենանք, երկուքս ալ նոյն օրը կը մեռնինք, երդում կտար կ'ըլլանք: Մհեր պատասխանեց.- «Թող մէկ դաւակ ունենանք, Սասնոյ ճրագը վառի, թող մենք մեռնինք... Հիմա ես կը զգամ, թէ Սասնոյ ճրագը վառուած է, հանդիստ սրտով կ'ընամ մեռնիլ...

Համդէն յուզուած էր ու յուզած բոլորը:

- Ես ձեր բոլորին հետ պիտի ըլլամ, մեր կամքը իմ կամքը պիտի ըլլայ, ու եթէ մեր գործէն Սասնոյ տան ճրագը վառի, յօժար եմ Մհերի պէս մահը գիմաւորելու, - ըսաւ Սերոբ:

Իշխանները մեկնեցան ու Փետայիները մինակ մնացին, լուռ ու խորապէս զգածուած:

Գիտակցական ողևորութիւն մը կար Գորգէնի մէջ, որ այդ հաւաքոյթին կը մասնակցէր որպէս մտաւորական եւ մարտական գործիչ: Գազախարական այս առաքելալը մտիկ ըրաւ Սասնոյ իշխաններու խօսքերը ու մանաւանդ իշխան Համդէի այնքան հաւատաւոր ըմբռումը հայ իշխանութեան մը վերականգման մասին, դարձաւ Սերոբին:

- Սերոբ, հաւատաւոր ու մարտիկ ժողովուրդ մը ունինք մեզի հետ, եթէ մենք յաջողինք բոլոր շրջանները հրդեհել Մհերի դաշափարով, անշուշտ Սասնոյ տան ճրագը կը վառի:

- Մեր ժողովուրդը դարերով լսեց այդ հեքիաթը ու երազեց Դաւթի վերադարձը Սասուն, - ըսաւ Գեորգ: - Այս ժողովուրդը Հարսութենէ զուրկ է, իշխանական դաւազան ալ չունի, բայց հարիւրաւոր տարիներով իր գոմերուն ու հիւղակներուն մէջ երազեց իշխանապետութիւնը, ու այսօր խուճր մը զինեալ Փետայիներ տեսնելով՝ հայ իշխանութեան վերականգնումի կրակն է, որ կ'արծարծուի սրտին մէջ: Ամէն բանէ առաջ զէնք պէտք է մեր ժողովուրդին: Թուրքը եւ Բիւրաք զէնքով միայն խօսք կրնան հասկընալ:

- Շիրակ կ'ընէ Գեորգ, - աւելցուց Սերոբ, - զէնքի ուժն է, որ դիմ մը պիտի կատարէ ազատագրական այս կռուին մէջ: Այսօր, ամէն ժամանակէ աւելի, պատասխանատուութիւն մը կը զգամ իմ ուսերուս, այսօր աւելի կը պիտակցիմ մեր ձեռնարկած յեղափոխութեան մեծ նպատակին: Ա-

մէն ճիշդ պէտք է թափենք, որ այս ժողովուրդը շնորհաբաժնուի մեզմէ եւ իր երազած մեծ գաղափարէն:

Հայոց ազատութեան դերագոյն գաղափարն էր, որ ալիք կու տար ժողովուրդին ու Ֆետայիններու խումբին մէջ: Մահը իսկապէս կը դառնար արհամարհելի ու գիտակցական մահը՝ անմահութիւն:

Սերոբ խումբը քանի մը մասի բաժնեց եւ անոնք անցան իրենց դործերուն: Գուրգէն եւ Գէորդ, քանի մը գինուորներով, մնացին Կելիէկուզան: Ուրիշ խումբ մը Համբարձումի եւ Անդրանիկի ղեկավարութեամբ տեղաւորուեցաւ Կոփ դիւղը, Ծովասարի լանջերուն: Սերոբ իր ամէնէն ընտիր գինուորները հետը առած՝ անցաւ Տալարիկ, յետոյ վերադառնալու համար Ծովասարի իրենց կայանը:

Մուշ եւ Մշոյ Դաշտ յեղափոխական կորիզներ կազմուած էին ու ամէն տեղ շրջող Ֆետայինները օժանդակ ընկերներ կը գտնէին:

Գէորդի վրայ ծանրացած էր զինման դործը եւ ռազմամթերքի պատրաստութիւնը, որպէս ամէնէն հին ֆեաային, Տարօն աշխարհին բոլոր անկիւններուն ծանօթ՝ ամէն օր իր խումբով շարժման մէջ էր, օր մը Մուշ, միւս օրը Յրոնք, ուրիշ օր մը Բերդակ, զինք ու ռազմամթերք փոխադրելու գէպի Սասուն: Ու այս գիշերային արշաւանքները յաճախ ընդհարումներով կը խաչաձեւուէին, թշնամին դիտկներ կը ձգէր կուտի վայրը ու Գէորդ միշտ անմաս կը վերադառնար Ֆետայական կեդրոնը:

Սերոբի ներկայութիւնը մտահոգութիւն պատճառած էր Մշոյ եւ Պիթլիսի կառավարիչներուն: Երբ Պիթլիսի նահանգապետը Ախլաթի շրջանը տակնուվրայ կ'ընէր, Սերոբի հետքը գտնելու համար, Մուշի կառավարիչը արդէն լրտեսներէն տեղեկութիւն ստացած էր, թէ Սերոբ իր գինեակներով անցած է Սասուն: Այս արագ շարժումները չփոթութեան ու ծանր մտահոգութեան մատնած էին Մուշի եւ Պիթլիսի զօրքն ու օստիկանութիւնը:

Մուշ քաղաքի ամէնէն մոլեռանդ եւ ամէնէն հայատեաց թուրքը Դալիպ էֆէնտին էր, հարուստ ու ազդեցիկ թուրք երեւելի մը: Անոր առաջարկով Մուշի կառավարիչը օստիկաններ հանեց շուրջ՝ Սերոբը գտնելու համար: Դալիպ էֆէնտին անձամբ ստանձնեց ժանտարմաներու եւ օստիկաններու ղեկավարութիւնը: Մուշէն դէպի Սասուն՝ առաջին դիւղը Մեմալն էր, ուր կառավարութեան պաշտօնեաներ կը տեղաւորուէին: Դալիպ էֆէնտին իր լրտեսներն ու վարձկանները դործի դրաւ, իշխաններէն ոմանց մեծագումար դրամ խոստացաւ, որպէսզի մատնանշին Սերոբի վայրը, բայց ապարդիւն անցան անոր սադրանքները, ու ան գլխիկոր վերադարձաւ Մուշ:

Այս փորձը անյաջողութեան մատնուելէ ետք, Դալիպ էֆէնտին խորհուրդով, Մշոյ կառավարիչը իր մօտ կանչեց Եեկոյի տան Գիւրտ ցեղապետ Պարէ Զաթօն ու անոր բաւական ոսկի խոստացաւ, որպէսզի կարողանայ ոչնչացնել Սերոբի խումբը:

Եեկոյի տունը, ծագումով թերեւս հայ, դարեր առաջ իսլամացած էր, իր ցեղապետական իրաւունքները պահպանելու համար: Ու դարեր յետոյ, արդէն մոռցած իր հայկական ծագումը, զօրաւոր քրտական ցեղախումբ մըն էր, տեղաւորուած Ծովասարի հարուստին փէշերուն: Հայախօս էին եւ հնարաւորութիւն ունէին Սասունցի իրենց դրացիներէն իմանալու Սերոբի եւ Ֆետայիններու թաքստոցները: Պարէ Զաթօն իր գինեակներով տեսապէս կը մոտր հայկական շրջաններուն մօտիկ եւ առիթի կը սպասէր:

Օր մը, երբ Սերոբ եւ Գէորգ իրենց ամբողջ խումբով կը գտնուէին Կոփ գիւղը, յանկարծակի պաշարման ենթարկուեցան:

Պշարէ Չաթօն եւ իր ցեղախումբը տակաւին ընդհարումներ չէին ունեցած Փետայիներու հետ եւ գաղափար շունչէին անոնց կոխներուն մասին: Անձնավստահ էին եւ կը կարծէին, թէ իրենց համախմբած մեծ ուժով պիտի կարենան ոչնչացնել Փետայիները եւ առատօրէն վարձատրուիլ Թուրք կտուավարութեան կողմէ:

Պաշարուածները կռիւր ընդունեցին անմիջապէս ու Մուսէնիի գընդակներու սուլոցը խուճուպ առաջացուց Բիրտներուն մէջ: Բիչ մը աւելի ետ քաշուեցան, բաւական թիւով դիակներ ձգելով ու շարունակեցին համադարկերու տակ պահել Փետայիներու ապաստանարանը: Հակառակ այդ հեռաւորութեան, Մուսէնիի գնդակին զօհ կը դառնար այն ջիւրտը, որ իր գլուխը կը բարձրացնէր քարի մը տակէն: Այս անվրէպ զնդակները շժեցուցին Պշարէ Չաթօն, որ զայրոյթով կը տեսնէր Փետայիներու զէնքերուն հրաշարժած աղիւցոյթիւնը այդքան հեռաւորութեան վրայ:

Սերոբ գուրս եկաւ բաց կտուի ու Բիրտները խուճապահար հեռացան Կոփ գիւղի սահմաններէն, անիծելով Թուրքը, որ գիրենք նետած էր այս անիմանալի կրակին մէջ:

— Շէյթանի զէնքեր ունին, մեզ վառեցին: Կտուավարութիւնը չկրցաւ անոնց վրայ երթալ ու մեզ նետեց կրակին մէջ:

Պշարէ Չաթօն ստիպուած իր ցեղախումբը ետ տարաւ, ու անոնք դըրխիկոր ու սգաւոր վերադարձան իրենց տունները:

Երբ Փետայիները իրենց ուժերը համախմբեցին՝ ուրիշ վայր մը փոխադրելու համար, Ալլամ իր դիրքին մէջ վերաւոր գտան: Տարիներու այս փախստականը, որ Գէորգէն անբաժան եղաւ բոլոր կոխներու ընթացքին ու բանտի շղթան կրեց անոր հետ, այդ օր կ'իյնար, ծունկը ջախջախուած ջիւրտի գնդակէն:

Սերոբ բռնեց Տալորիկի ճամբան, իսկ Գէորգ ու Գուրգէն տեղաւորուեցան Կէլիէկուզան, իրենց հետ տանելով Ալլամը: Հակառակ տարուած խնամքներուն, երկու ամիս ետք, մարտիկը իր աչքերը կը փակէր Գէորգի գրկին մէջ:

Վերջին շունչը աւանդելէ առաջ, մրմունջով խօսեցաւ, կարծես կտակ մը ունէր ընելիք.

— Գէորգ, երբ օր մը Սաղտուն գառնաս, կը խնդրեմ երթաս մայրիկս տեսնես: Ըսէ՛ անոր, որ իր մայրական կաթը հալալ ընէ ինծի: Մայր Հայաստանին նուիրուեցայ ու գինք մտոցայ...

Կ. Ս.

(Շար.)

ՆԱԶԷՄ ՀԱՊՐԻ

Վ Ի Ե Ն Ն Ա Ց Ի Վ Ա Ր Դ Ը

ՀԱՅԱՑՈՒՑ՝ Ն. Փ.



1968-ին Վիեննա էի: Փոզմոֆոլիք պահպոկին
մէջ ծանօթացայ Պոլսեցի հայ հին ընտանիքի մը
ազնկան, որ էր մեղրուլուսնի համբարգութեան
մէջ էր: Վարդուհի կոչեցի զայն: Արդարեա ար-
ժանի անուն, որ կ'արդարանար կարճրութեամբը
անոր այտերուն, բոյրովը անոր քաղաածքին,
խոյանքովը անոր հասակին եւ քեզուփեամբը
անոր մտքին:

Բայց կա՛յ արդեօք վարդ ոտանց փուշի:
Այս պերկը նուէր՝ «Վարդուհի»ին, զայն
կոչելով «Վիեննայի վարդը»:



Որտուամ պէս խուլ ձայն մը, լսեցի ես լուսինէն.
– Մի բնամաք, ո՛վ մարդերս – կ'ըսէր ձայնն այդ վեհօրէն.
«Ջարկէ՛ք ուժգին ձեր լարերն, լեցուցէ՛ք ձեր գաւաթներն.
Գինավուրեամբն հեղուկին երկարեցէ՛ք ձեր գիշերն,
նու ընպեցէ՛ք ումպ առ ումպ, մինչեւ վառին նոր լոյսերն:
Մի՛ չարչարէ՛ք ձեր միտերը, գաւթած, անգոր անցեալով,
եւ մի՛ խաբիւք այն կեանքին, որ պիտի գայ հապնեպով:
Սիրտն ալ ունի պահանջներ, ունի սէր, կիրք, կարիքներ,
եւ այդ սէրէն, այդ կիրքէն, ան կա՛մ կ'այրի, մոխրանայ,
Կամ այդ սիրոյ բոցին մէջ, սիրոյ գերին պիտ' դառնայ»:



– Օրերուս մէջ անցուցած, ամէնէն վատ օրն ինձի,
Անսէր օրն է, անկրակ, անսէր օրն է, դառն, լեզի:
Ճամբայ ինկայ, մէն միմակ, փնտռելու սէրն իմ սրտիս,
Փնտռելու անձն անձանօք, գարնոյ զոներն իմ սրտիս:
Վիեննայի մէջ յանկարծ, տեսայ ես գայն: Երա՛գ էր:
Սիրտն ու մարմինը՝ կրակ, տեսայ ես գայն: Ան հա՛ն էր:
Ըսէ՛ ինձի, ո՛վ Աստուած, ե՞րբ ստեղծել կրցար դուն,
Արծաթ լոյսով լուսին մը, այսքան յտակ, կաթնագոյն.
Արծաթին տակ այդ լոյսին, տակն այդ լոյսին շողերուն,

Կարճած են, հասունցած, խնձորներն իր այտերուն :
 Թարթիչները կոպերուն միացեր են գիծով սեւ,
 Ու ներմակը այժերուն, կը շողայ ջինջ փայլի պէս,
 Որ կը նեղէ ու կ'անցնի, կէս գիշերուսն մութը սեւ :
 Թարթիչներն այդ նայուածքին, խոցեցին զիս նետի պէս :
 Քովն իր յանկարծ կ'եցաւ, հասակն չիմարի ծառին :
 Դարձաւ ան ծառ օրորուն, փայլածքովը՝ զինովին :
 Դանձնեց մութ գիշերը, երբ որ տեսաւ սեւ գանգաւրն
 Որ փախած էր վարսերէն, ինկած ֆակտին՝ ուրուն :
 Ո՞վ Աստուած իմ, գթա՛ ինձ, ի՞նչ բերան է սա անգին,
 Որ նման է իմաստուն Սողոմոնի մտնիին :
 Երբունքներն այդ կենսայարդ, վառ կրակ են շիկացած,
 Թէ կտկաչներ կիսաբաց, երկինքներէն վար իջած,
 Իերնին ֆովերն են հանգչած, դառնալով համ, մեղր ու հաց :
 Երանի թէ տեսնէիր, փայլածքն անոր օրորուն
 Ու ըսէիր... «Խորհո՛ւրդ է» :
 Երանի թէ լսէիր, երգն ու բառերն իր ճայնին
 Ու չըսէիր... «Գիճո՞վ է» :
 Բայց մնացեալ իր գանձերն, չեմ խօսիր ես այդ մասին,
 Մարմնական քաֆուն գանձերն, լոկ գաղտնիք են Արարչին :
 Կը գարմանամ թէ ինչպէս, մինչ դուռ վերն ես, երկնի վրայ,
 Կր տեսնեմ քեզ, ո՞վ լսսին, շուրջս, քովս, երկրի վրայ :
 Մի քնանալ կ'ըսես դուն, տե՛ս, անբուն եմ յախտեան,
 Հոգիս, քունս, գարթօնքս, անոր համար են միայն :
 Ես ալ մարդ եմ, ունիմ միս, ունիմ արիւն, սիրտ՝ թերի,
 Ամէնքս ալ պաշտոյ ենք, ամէնքս ալ ենք գերի» :
 Ու հարց տուի կա՞ր կործին. «Ուրկէ՞ կու գաս դուն», ըսի :
 - Ես ծնունդն եմ նուիրման, բխած ակէ մը անբիծ,
 = Բայց մենք ամբողջս արդէն, ծնունդն ենք մոյս մեծ Հայկին :
 Ժամանակով բաժնուած, ժամանակի ընթացքին :
 Այս անգամ, ի՞նք հարց տուաւ, «Ըսէ՛, ինձի, դուն ո՞վ ես» :
 Ու ես ըսի ծպտադէմ. «Մօրաբնոյնս ազգիկն ես :
 Մայրքս քոյրն է քու մօրըդ, մայրքդ քոյրն է իմ մօրս,
 Օրերը մեզ գրկեցին ու դէմ դէմի հանեցին
 Իւ թող տուին որ այսպէս, դէմ դէմի լանձ միասին :
 Այսօր, վաղը, ամէն օր, օր են ինձի տօնական,
 Ու կը կարծեմ ինձգինքս, արքայ հըզօր եւ սուլթան» :



Երբ լուսինը արձակեց արծաթագոյն իր շողերն,
 Աշխարհն ամբողջ լռյս հագաւ, անբուն դարձան իմ աչերն :
 Շատ բաներ ես հիւսեցի, միտքովքս գայն գծեցի :
 Բայց պակսեցաւ խօսքն ինձի, պակսեցաւ բառն առաջին :
 Գեղեցկութեանց մէջ տեղ մը, կորսուեցայ ինձմամոս,
 Էանդարտեցաւ սիրտըս վառ, ու գօրացաւ յոյսն ամոր,
 Առանց փոքրիկ այդ յոյսին, մեռած էի ես անյայտ
 Եւ այդ յոյսով կերտեցի, հոխ պարտէզներ ու պալատ :

Պալատին մէջ այդ հսկայ, եւ առանձին մնացի,
 եւ գայն բերի իմ հովրս, պալատիս մէջ հիւր ըրի,
 եւ այս անգամ ինք դարձաւ, ծաղիկ ու վարդ գեղանի:
 Այդ պարտեզէն մեղմօրէն, այդ վարդը եւ հաղեցի,
 Փայփայեցի, շոյեցի, սիրոյ մասին հարցուցի.
 - Հի՞նչ է սէրը, նայուածք է, թէ ժպիտ մը միշտ օտար,
 Բարե՞ւ է, թէ խօսք միայն, որոնք կ'երթան, չեն մնար»:
 Արցունքի շիթ մը վըրան, ըսաւ ծաղիկը տկար.
 = «Ես սիրեցի շատ առաջ, եղայ սիրոյ ժամագիր.
 Սիրոյ հե՛տ ես անցայ, սիրոյ մէ՛ջ ալ փնտցայ:
 Ի՛չ ոք սակայն իմ սիրոյս, կրցաւ դառնալ պատասխան:
 Տե՛ղ սէրը, հեռացիր, կ'ըլլաս գերին իր դաժման,
 Ան կը գրկէ քեզ քեզմէ, կը գրկէ շատ բաներէ:
 Ես գերին եմ այդ սիրոյն, չեմ կշտացած դեռ անկէ,
 եւ ամէն օր, իմ մէջըս, ան կը մեծնայ, զիս կ'այրէ»:
 - «Ո՛վ հոտուէտ իմ ծաղիկ, աչքերուս արցունքներս,
 Այրեցին սիրտըս անգոր եւ թրջեցին կօպերս:
 Գնաց ինձմէ այդ սէրըս, չունեցաւ վերջ գիշերս.
 Ու այդ սէրէն, այդ կիրքէն, ընկճուեցան խոհերս:
 Երանի թէ Բունիս մէջ, անգամ մը գայն տեսնէի
 Քովմ ըլլայի, ապրէի, համբարէի, խմէի
 Գինին անոր շրթներուն, գինին անոր շրթներէն»:



Բացակայ է ամ ինձմէ, ամ չարչարեց զիս այդտեղ.
 Ու չարչարեց զիս յետոյ, ամէն վայրկեան, ամէն հեղ:
 Լինե՛ք երկուքն ալ այսպէս, կ'այրինք միայն յուշերով
 Հեռո՛ւ, հեռո՛ւ իրարմէ: Իջաւ գիշերն անառք
 Արթուն եմ եւ տակաւին, քուն եմ մարդիկը բոլոր:
 Ու կ'աշխատիմ եւ գրկել, մտապառկերն կենդանի,
 Ու կ'աշխատիմ համբուրել, շրթներն անոր ծիրանի,
 Ու կ'արթննամ ես՝ անյագ, բազուկներս ամայի:
 Թող մրափեմ եւ կրկին, թող տեսնեմ գայն եւ նորէն,
 Խօսիմ հետը եւ ըսեմ. «Մի փայտչիւր սիրոյ դուն կանչէն,
 Համբուրէ զիս մէկ անգամ, մի հեռանար այստեղէն»:



Սիրտ իմ, կեցի՛ր, հանդարտէ, շիջած է հուրդդ արդէն,
 Զունիմ նախանձ, բամբասանք, գրպարտաբիւն, ոյս ու բէն:
 Յրկներեւո՞յթ թէ իրաւ, ինչ ալ ըլլայ սէրը իմ,
 Ես արթուն եմ, բաց աչքով, ես արթուն եմ առանձին,
 Ու կը խօսիմ եւ այդպէս, շրթներս անոր պատկերին,
 Կը լուզամ եւ սիրոյ մէջ, արցունքներու հեղեղով:
 Ես արթուն եմ, ես՝ գինով:

Ն. Ճ.

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Զ. ՈՐԲՈՒՆԻ

Նայեցէք ինչպէ՞ս կը վազէ ժամանակը: Ժամանակը որ անցեալ եղաւ երբեք չի մոռնար, որ անգամ մը, ներկայ կղած է: Պոչը կապուած անցեալին՝ կ'երազէ իր անցեալին, որ ներկան է: Ապառնին կը մասածի, անցեալ ըլլալէ առաջ, ներկայի հանգրուանին, բայց ուր հանդիստ չունի, վառնի անմիջապէս չպատուած է անցեալին մէջ, ներկայի յիշատակներով թարտուն եւ որ անցեալին անցեալն է:

Ներկան համայնակուլ որկոր մըն է, որ միշտ լսփելով է զբաղուած: Ո՛ւր է յառաջդիմութիւնը: Ժամանակը խնշափառի քայլերով կ'ընթանայ: Միշտ ղէպի ետ, երթալ երազելու համար անցեալին տակը: Ներկան է վերջին իրականութիւնը, բայց զատապարտուած՝ երազ չունենալու:

✽

Միայն արուեստն է տէրն ու տիրականը անցեալին, բարձր կեանքէն՝ որ ներկան է: Սրազն անգամ անցեալի տարրերով յղփացած, ամէն ինչ ներկային կը բերէ: Ներկայի բանտին մէջ, ներկայի բանտին մէջ խեղդուկ, որ յաւիտենութիւնն է:

Երազը բրէլն է, որով կը պեղենք անցեալը, գայն ներկային յանձնելու համար:

Այսպէս տեղի կ'ունենայ արուեստի զործը:

✽

«Նդիցի լոյս եւ եղեւ լոյս»: Բայց, ինքը, Աստուած, նախընտրեց խաւարը:

Անտեսանելի՛ իր խաւարէ պաշտին մէջ: Լոյսը մարդուն համար, որպէսզի անտես լսանունն տեսականորէն իրեն տըզեղութիւնները: Գեղեցկութեան ծարաւով ապրելու համար տըզեղութիւններու իր աշխարհին մէջ:

✽

Ո՛վ կեանք, ո՛վ կեանք, ի՞նչ գեղեցիկ ես դուն սակայն: Ինչպէս քու գեղեցկութիւնդ կը վռնտէ իմ մէջէն յաւիտենութեան վերջին նշոյլը: Այնքան՝ որ կ'անիծեմ քունը, որ մեզ իրարմէ կը բաժնէ: Ձէ՛, պիտի կանգնիմ ամբողջ գիշերը զաշտին մէջ, աստղային երկինքին տակ, ասրուտուն, որովհետեւ անպիտի դայ արեւը, դեռ չհասած հորիզոնին, իր զով ձեռքերով պիտի դգուէ ճակատս, նոյն ձեռքերով նաեւ մաթը՝ ուր լոյսը կը յայտնուի դանդաղ, տփույն, երժակալով եւ յանկարծ արեւը, արեւը իր ամբողջ փառքով ու բնութիւնը արթնցած, մօր մը պէս կը գրկէ զիս իր ճառագայթէ բազուկներուն մէջ:

Այն ստեն կը պառկիմ խնձորենիին տակ, բարձր ու կանաչ խոտերուն վրայ:

Արթննալուս՝ արեւը արդէն իր գեներիթին է հասած ու փռուեր՝ ջերմ, մօր մը համբոյրին պէս մորթիս ամբողջ ասրածութեանը վրայ:

Ու համբոյրդ, մա՛յր, ահաւասիկ, բռնկցուցած է մարմինս՝ մանր վէրքեր կը բացուին հոն իրարու ետեւէ թուճաւոր ծաղիկներու նման, ու տե՛ս, ինչպէս տղեղ եմ ու ցաւազին:

Ամէն հաճոյք այսքան սուղ վճարել կու տաս:

✽

Առևտանները խմեր են արիւնս ծակ-ծրկելով մարմինս: Հրդեհ կայ ամբողջ մարմնիս երկայնքին: Եղունգներս չեն հասնիր մարելու կրակը:

Ո՛վ է ըսեր որ մեծը կ'ուտէ փոքրը: Ինչպէ՞ս ըմբռնել սա անտեսանելի մեջատաներուն յանդգնութիւնը, որոնց բազմաամբ հսկայ մըն եմ ես:

Ձէ՛, թշնամիս ամէն տեղ է: Ամէն ինչ թշնամանք է:

✽

Երջանկութի՛ւնը:
Թշնամութիւնը բարեկամութեան փոխել, համեպութիւնը իր ծայր աստիճանին հասցնելով: Սրբանալով:
Ապրելու միակ միջոցը:

✽

Մաթիս կը յիշէ՛
- Սըւոր նայեցէք, ամէն մէկ նկարին սկսելէ առաջ գաղտնի կ'աղօթէ:
Ոսքը Փիքատոյի մասին է:
Աղօթքը ուժ է: Ան ուժերը կ'ամփոփէ, կը խտացնէ ու կամքը կը լծէ գայն նպատակի մը յաջող կատարման:

✽

Տկարը միշտ կը դանդաւոր աչքը ուզուած յաջողածին:
Յաջողածը յաջողած է անոր համար որ յաղթած է վախը:
Կեանքը՝ ինքը, յաջողութիւն է:

✽

Հերոսները արտաքուստ անվախները չեն: Անոնք վախը ներքնապէս յաղթողներն են: Վախը ուրացողները: Ոտարագանցէք վախը որ մինչեւ ձեր հերոսութեան մէջ կը սլքտայ ձեր փէշերուն տակ:

✽

Յաճախ «կը կոտորեմ- թափեմ» ըսող-

ները չեն ամէնէն ուժովները: Անոնց սպանանքը դիմացի մարդէն աւելի՛ իրենց սեփական վախին ուղղուած է:

Ոտարներու ամէնէն խոնարհը, Ասիլի սուրբը, միս մինակ, բանակի մը չկրցածը ըրաւ:

✽

Մարդը, գաւաթ մը ջուր տուողին շնորհակալութիւն կ'ըսէ, բայց երբեք Անոր որ այդ ջուրը տուաւ:

✽

Մարդուն մարմանը, ջունը փախչողն էլ տուողը՝ ամէն ինչ ծախել, ամէն ինչ վաճառքի հանել: Ձուրն անգամ, որ ձրի կ'իյնայ երկինքէն, մարդը կրցաւ սըրուակներու, խողովակներու մէջ առնելով ծախել: Վաղը միւս օր աստղի կը տորտանքներ ալ պիտի ծախեն: Բայց օ՞ղը: Օղն է որ երբեք վաճառքի պիտի չկրնան հանել:

Ո՞վ դիտէ:

✽

Գոտոզը այն է, որ երբեք շնորհակալ ըլլալ չի դիտեր:

✽

Վերջապէս գիտութիւնը կը կարծէ դատած ըլլալ կեանքի գաղտնիքը՝ ADN: Երեք դէր:

Աչքը լոյս վաճառականներուն: Երուտով անոնք պիտի կարենան ծախել նաև կեանքը աղքատներուն փրկիւմի-ձեռքու մէջ, իսկ հարուստներուն սիւր մըրգիւրի խանութներուն մէջ: Ուղածուն պէս: Ամէն մէկուն իր դրամին համեմատ:

Երբ կ'ըսուի թէ արդարութիւն չըկայ այս աշխարհի միայն...

✽

Ժամանակը, կ'ըսեն, կը մաշեցնէ: Արդարեւ, անդադար ան կը սղոցէ կեանքի արմատը: Մեծ հերոսները անոնք չեն,

որ յաղթանակներ նշեցին ու անհետացան կանուխ՝ իլըւած սզոցին ատամնորէն: Հերոսները անոնք են որ կրցան դիմանալ այդ հրէջ սզոցին ութսուն, հարիւր տարիներ:

Ի՞նչ անփառունակ կեանք, մեռնիլ երիտասարդ:

Ըլլալ այդ հերոսը, ամէն բանէ վեր: Բայց ի՞նչ ընելու համար:

✽

Ամէն ինչ ձեռ է: Կորուսիւնը կ'արտայայտուի ձեռով: Ի՞նչ կ'ըսեմ, ձեռն է գոյութիւնը, այն՝ որուն իրականութիւն կ'ըսենք:

Ինչ որ չեմ հասկնար այն է, որ իրավաւորները ըլլան եւ ոչ թէ գաղափարապաշտները ձեռը ժխտողը: Ի՞նչ տարբերութիւն կայ ձեռը ժխտողին եւ գաղափարապաշտին միջեւ:

✽

Պէտք է մտածել այս մասին:

Ըսել որ գառապնի, շաքարի եւ ճարպի բաղադրութիւն մըն ենք: Եւ սակայն այս ի՞նչ անհունորէն այլազան եւ զարմանալի են անոնք իրենց ձեւերով: Այս ի՞նչ հարստութիւն, այս ինչ անհատում շոտլանդ:

Իսկ մեր փնտռածը մէկ է: Երջանկութիւն:

✽

Ատուած բարի է, Ատուած բարութիւն է, կ'ըսեն բոլոր կրօնքները անխաբի: Այո՛, պայմանաւ սակայն, որ յարգես Անոր Խօսքը, այսինքն չփոխես ստորակէտ մը անոր մէջէն:

Սեղծ, հպարտ ու գոռոզ մարդ, որ կը կարծէ ունենալ բոլոր իրաւունքները ու չնչին ստորակէտի մը համար կը շարժուի արքայութեան ծաղկաւէտ մարդագետիներէն դժոխքի կրակներուն մէջ:

✽

Իմաստասէրները ուղեցին բացատ-

րել, շատ բացատրել ու ամէն ինչ կորսրեցաւ բառակոյտերու տակ: Այսպէսով անոնք կորսնցուցին յարգանքի այն բաժինը, որ իրենցն էր: Հիմա գիտութիւնը ձեռք առաւ ինչ որ չկրցաւ իմաստասիրութիւնը: Գիտունները, ինչպէս քիչ մը ամէն մարդ, կ'արհամարհեն իմաստասէրները: Իմաստասիրութիւնը պէտք է հրատարակուի, լքէ բառերու ֆարքըսները եւ սկսի մեկին, պարզ լեզուով մեկնաբանել ինչ որ գիտութիւնը մեզի կ'ընծայէ:

Ինչքան բացատրես, կ'ըսէ Լաօ Յէօ, այնքան կ'աղաւաղես, այնքան կը շարափոխես:

✽

Իրականութեան մէջ իմաստասիրութիւնը չէ որ պիտի հետեւի գիտութեան: Բառերու իրեն տուած գինովութենէն հարամ, իմաստասիրութիւնը եկաւ հաստատել հինաւուրց ճշմարտութիւնը թէ՛ առաջինները պիտի ըլլան վերջինները, վերջինները՝ առաջինները:

Ասիկա կը նմանի մարդու մը, որ ոտքերը վեր՝ դիտուն վրայ կը քալէ:

Ի սկզբանէ մարդը ինքզինք գտաւ հետեւեալ հարցականին առջեւ. «Ո՞վ եմ, ուրի՞շ կու գամ, ո՞ւր եմ եւ ո՞ւր կ'իջնամ»: Իմաստասիրութեան Ա. Բ. Գ. ը: Այս է իմաստասիրութեան հետաքրքրութիւնը եւ ուրիշ ոչինչ: Մարդը կ'ուզէ իր գոյութեան անձկութենէն դուրս գալ, ինքզինքը ճանչնալ, ինքզինքը ճանչնալով հասնիլ ազատութեան, այսինքն՝ երջանկութեան:

Անգամ մը, որ այս մտածումը երեւաց իրեն, անգամ մը, որ սկսաւ մտածել, ուզեց փորձառական դետի վրայ հաստատել, ապացուցանել իր մտածումը:

Հոս կը սկսի գիտութիւնը:

✽

Այո բայց...

Գիտութիւնն ալ սկսած է յողնիլ: Կենսաբանութիւնը՝ տէր զարձած

կեանքի բաղադրիչ տարրերուն, շնորհիւ կենսաբնալուծութեան, կը դառնայ ու կը դառնայ ստիտ-ամիւններու, ստիտ-կտաներու, ստիտ-նիւքլէիտներու, ADN, ARN եւ դեռ շեմ գիտեր ինչերու յորձանքին մէջ: Ու հիմա գիտութիւնը մէկ մտասուեռում ունի: Մեկնելով տուեալ գոյացութիւններէն՝ վերակազմել կեանքը: Ատոսաբար մարդը վաղը պիտի կարենայ եւ արդէն հասած է համոզիչ արդիւնքի, ստեղծել առաջին կենդանի բջիջը: Ու ստիկա դեռ մարդ չէ:

Հոս է ահա, որ իմաստասիրութիւնը, վերստանալով իր կորսուած առաջնութիւնը, հարց պիտի տայ գիտութեան. «Վինչո՞ւ կեցեր ես, քաջէ՛, դնա՛ աւելի առաջ, դէպի սկիզբը՝ որ Բանն է»:

Գիտութիւնը, ինչպէս երեխան շրջապատուած իր խաղալիկներով, դեռ ատեն մը պիտի խաղայ կեանքի բաղադրիչ կորիզային թթուներուն հետ:

Չէ՞ որ ան ունեցաւ իր ամենամեծ յուսախարութիւնը: Գիտութիւնը որ միայն նիւթին վրայ կրնայ գործել, յանկարծ տեսաւ նիւթին աննիւթանալը: Բայց այդ աննիւթը տակաւին նիւթն է,

վասնզի նիւթը ոչինչէն չի կրնար դալ: Սիբիւտրոններու մէջ անտեսանելի դարձած նիւթը, աննիւթն է որ կրկին նիւթի պիտի վերափոխուի: Ինչ որ գիտութիւնը աննիւթ կ'անուանէ, ան պարզապէս քիչ մը աւելի մերձեցում մըն է ըսկըզրնակոսն պատճառականութեան:

Իւրաքանչիւր աթոճ այնքան մեծ է իր անհամար մասնիկներովը, որքան մեծ է տիեզերքը՝ ուր միլիոնաւոր համատեղութիւններ լիւզ կու դան: Եւ այս անհունութեան մէջ մենք տակաւին միայն խեղճ յուսինի մը չուրջ կը դառնանք, երբ անդին, աւելի հեռուները, անհուն տարածականութեան մէջ միլիոնաւոր յուսիններ իրենց արեւներուն չուրջ պտը կը բռնեն, ինչպէս Ալիսիոնի կամուրջին վրայ երեխաները:

Կատակը մէկ դի: Աթոճը, որ նիւթին յետին մասնիկն էր նկատուած, կը տեսնուի այլևս որ նիւթ անպամ չէ, անհունութիւն մը սակայն, որ արդէն նիւթն է, ըլլալով հանդերձ աննիւթը՝ որուն մէջն են Բանին առաջնորդող ճամբաները:

Ջ. Ո.



ԱՐՄԱՆՏ

ՄՂՁԱԻԱՆՁ

Տարուքերում է հոգիս այս գիշեր
 Երկնի ու երկրի նեղ սեմի միջև․
 Ու հանչում են ծխնիններն հագուս
 Տիեզերքի այս ծանրութեան ներքոյ,
 Որ իմ մէջ կը զգամ․․․
 Հնգհարում են իմ մէջս հիմա
 Ե՛ւ կեանքը, ե՛ւ մահ:
 Դարերի ծանր կռանի ներքոյ՝
 Կռած ու կոփուած
 Գանկս մարդկային՝
 Ծանրանում է արդ
 Ուսերիս վրայ –
 Երկրագունդն ահա՝
 Իմ գանկն է հսկայ,

Ուր գալարում է
 Մարդկութիւնն համակ
 Ու հեւում, բայում՝
 Անկումից-անկում․․․

Տարուքերում է հոգիս այս գիշեր
 Երկնի ու երկրի նեղ սեմի միջև․
 Մի՞նչ կառչած ինքս ինձ՝
 Փորձում եմ, ի գո՛ւր,
 Ազատել սոսքս,
 Որ խրուած է խոր
 Տիզմի մէջ երկրի՝
 Ա՛հ, ծո՛ւնկս մինչեւ․․․:

ՈՏՆ ԱՀԵՏՔԵՐԸ

Ոտնահետքեր կան եեզ եղնիկների՝
 Սրտիս պուրակում, զինչ լնակի մտա,
 Որտեղից նրանք խմեցին շատ կուշտ,
 Աչքերը նրանց՝
 Խորհրդաւոր ու մութ՝
 Դեռ մայում են ինձ
 Գրեքի բիւրեղ հայելու միջից․․․
 Ու ահա՛ այն կազմ՝
 Սրտիս շուքում՝ վտակի ափիմ՝
 Ոտնահետքեր կան ազանիների,
 Որոնք ամէն օր իջնում են ջրի:

Իսկ՝ այստե՛ղ, այստե՛ղ՝
 Սրտիս քառաւորում, մարմանդի վրայ՝
 Կան ոտնահետքեր
 Գազանի՞, մարդո՞ւ,
 Գազանի՞, մարդո՞ւ, –
 Որե՞, չեմ յիշում, –
 Որ կոխկոտկոպ ծիլ, ծաղիկ ու խոտ
 Անցան անտարբեր,
 Ու ետքերն այդ խոր
 Արիւնն՝ւմ են դեռ․․․:

ՄԱՆԻՇԱԿԻ ԻՄ

Անուշաբոյբ քաղաքն են ասես եղի
 Ձեռքերն իմ,
 Ո՛վ հեզամազ մանիշակդ իմ.
 Զի բուրում են արդ, նրանք, տես,
 Հոտը նրա քաղցր շնչի, մարմնի, ծամի,
 Որոնք նմրեկում բերքերիդ պէս
 Խրեց քոյրը գոնսեցին արեւի մէջ:
 Եւ բուրում են արիւն արդ՝

ձի՛շո քեզ նման, ճի՛շո քեզ նման․․․
 Ասա՛, սոսա՛, մանիշակդ իմ,
 Գո արմատի՞ց արդեօք ծծեց
 Նա քաղցր նեկտարն այդ հոտեւան,
 Թե՛ դո՞ւ, թե՛ դո՞ւ
 Գողացար այդ նրա շնչից ու մտից վարդ,
 Որոնց անհուն կարօտից վառ՝
 Հոգիս դողում է անդադար․․․

ԹՆՀՐՈՆ

ԱՐՄԱՆՏ

ՋՕՂՐԱՊ ԳԻՐԷՋԵԱՆ

ՔԱՂՔԵՆԻ ԱՂՋԻԿԸ

Սիւլվի տուն մտաւ: Պայուսակը կ'օրօրէր ձեռքին մէջ: Աթոռին վրայ նետեց: Ձեռքի տուփը սեղանին վրայ դրաւ: Մայրը անդիէն ըսաւ, թէ ինչո՞ւ այդպէս կը նետէր պայուսակը: Եր դընած էր տակաւին:

— Հալլօ, մա, ըսաւ Սիւլվի:
Ապա մօրը հարցուց թէ տուրճ կ'ուզէ՞ր:

— Ա՛չ, երբ խմեցի:
Սիւլվի ժպտեցաւ: Աւելցուց թէ պէտք չկար պայուսակի մը համար նեղուելու: Եղածը կաշիի կտոր մըն էր:

— Աչ մէկ բանի արժէքը գիտես, վերայ բերաւ մայրը: Ի՞նչ կայ այդ տուփին մէջ:

— Աչինչ: Կրիայ մը զննեցի:
— Ի՞նչ:

Սիւլվի բացաւ տուփը: Վառուչուկոյ շինուած կրիայ մը ցոյց տուաւ մօրը:

— Բնականին չի՞ նմանիր:
Ապա աւելցուց, թէ շատ հետաքրքրեցական անասուն մըն էր: Ի՞նչ որ ալ ըսես, չի վաղեր: Հաճելի ըլլալու է:

— Ի՞նչ բանը:
— Արանց վազելու այդպէս ապրիլը: Անպիտանը միզմէ խորամանկ է: Գիտէ թէ Հասնելիք տեղ մը չկայ:

Ապա կրիան, հիւրանոցին անկիւնը, ուրիշ պիպլոններու կողքին շարեց: Մօրը հարցուց թէ ինչպէ՞ս կը դռնէր:

— Այս պահաւ էր, ըսաւ մայրը:

Սիւլվի խոհանոց անցաւ: Գաւաթ մը տուրճ պատրաստեց: Բլիք-արին վրայ երդպանակ մը դրաւ: Կօշիկները հանեց: Սիկարէթ մը վառեց: Տիւանին վրայ երկընցաւ:

Մայրը՝
— Հաճոյք կ'ստնե՞ս այդ երգէն:
— Երբեմն:
— Գոնէ ձայնը իջեցուր քիչ մը:

Սիւլվի մարեց քիչ-արը: Կրկին երկընցաւ տիւանին վրայ: Շարունակեց Երիւել, աչքերը դամած պատին:

— Մա... կը ձանձրանամ:
Մայրը աւելցուց թէ նոր եկած էր դործէն: Հանգիստի պէտք ունէր: Այս օրերը շատ նիհարեցած էր:

— Կ'երեւի սիրահարուած եմ, վրայ բերաւ Սիւլվի:
Ժպտեցաւ: Ինքն ալ չէր հաւատար նման բանի մը:

— Ժամը քանի՞ է:
— Ո՛ւր է ժամացոյցդ:
— Գրասենեակ մոռցայ:
— Տակաւին վե՞ց է:

Ըսաւ թէ ժամը իննին պիտի դար Այվէրը: ԷլՔրիտին տարեդարձն էր: Հոն պիտի երթային:

Մայրը աւելցուց թէ հայրն ալ պիտի ուշանար դիշերը: Եւ ինք կրկին առանձին պիտի մնար:

Սիւլվի նստեցաւ տիւանին վրայ: Ուղղակի նայեցաւ մօրը:

— Մա, սիրելի՞մ ամուսնացար:

Մայրը անակնկալի եկաւ: Տատամսեցաւ:

— Չեմ գիտեր: Ինչո՞ւ կը հարցնես:
— Այդպէս:

Մայրը ըսաւ, թէ իրենց ժամանակ այսպիսի բաներ չկային:

— Բայց ինչո՞ւ ամուսնացար:
— Կը բուռէ Սիւլվի:

- Լա՛ւ... Լա՛ւ... նորէն մի ջղաջ- նանար :

Սիւլվի սենեակ անցաւ : Սրուակ մը բերաւ : Սկսաւ եղունգնէրը ներկել :

Մայրը կը նայէր աղջկան : Վարսա- յարդարի գացած էր Սիւլվի : Մազերը հաւաքած էր վեր : Գեղեցիկ զէմքը երե- ւան էլած էր : Քիթը այգպէս միշտ եր- կինք կը նայէր : Աչքերը սեւ էին, խո- շորկեկ : Միայն անոնց նայուածքը եր- բեմն չէր հաւնել : Մանաւանդ երբ հազ- նէր այդ քրանջիօքը : Ջեռերը պահէր գրպաններուն մէջ : Մազերը այգպէս թփուած ճակատի վրայ : Այնպիսի ձե- ւով կը նայէր, կարծես ոչինչ կը հետա- քրքրէր զինքը :

- Կէսօրը ճաշեցի՞ր, Սիւլվի :
- Այո, սանտալի մը կերայ :

Մայրը վարանումի շարժում մը ու- նեցաւ : Ապա մէկ շունչով .

- Նայե՛ Սիւլվի, մէկ տարի կ'ըլլայ, ո՞ր Ալպէրին հետ կ'ըլլես : Եւ...

- Սիւլվի թոյլ շտուաւ շարունակելու :
- Պէտք չկայ ամէն օր կրկնելու :
- Ինչո՞ւ :

- Ձեմ գիտեր... չեմ գիտեր... չեմ գիտեր :

- Կարծածիդ չափ գիւրդին չէ՞ մա, ինչո՞ւ չես հասկնար :

Սիւլվին խոշոր աչքերը, կարծես թրջուած էին :

Ժամը ութին եկաւ Ալպէր : Միշտ այսպէս եղած էր : Ժամագրութենէն ա- ռաջ կ'ու դար : Սիւլվի իր սենեակն էր : Մայրը դիմաւորեց : Ծուռով հիւրանոցը Ալպէրին ձայնով լեցուեցաւ : Թէ՛ շատ յոգնած էր, թէ՛ յաճախողները դադար չէին տուած ամբողջ օրը, թէ՛ մտնուայ ապրանքները հասած էին, թէ՛ յոյս ու- նէր մեծ շահ մը ապահովելու : Սիւլվին մայրը կը հետաքրքրուէր : Կը հարցնէր, թէ ի՞նչ էր, այս տարուայ նորոյթ դո՞յ- նը :

- Հա Ալպէր :

Սիւլվին էր : Թխակարմիր տարապը կը ձուլէր մարմինը : Կը ներգաշնակուէր ծո- վու լոպանքէն սուցած մարմնին հետ :

Ալպէր սքանչացած կը նայէր :

- Նո՞ր է :
- Ո՛ւ, չե՞ս յիշեր, վերջին պարահան- զէսին հագած էի :

- Իսկապէս : Ինչո՞ւ այսպէս մոռաց- կոտ կը դառնամ :

Կը նայէր Սիւլվին, Մայրը ներս անցաւ : Գաւաթ մը սիւնգաձո բերաւ : Ալ- պէր անուշ խմիչքները կը նախընտրէր : Ալպէր Սիւլվին երգապահիկ մը բերած էր : Սիւլվի բիթ-արին վրայ դրաւ : Այդ երգը ոչ տխուր էր, ոչ ուրախ :

Ալպէր նայեցաւ Սիւլվին : Անոր մօ- րը : Ապա ժպտեցաւ :

- Հա Սիւլվի, այսօր Վոսթոյ տեսայ, շարունակեց Ալպէր : Ապա ըսաւ թէ՛ ան բաւական ճարպիկ վաճառական մը կ'ե- բուէր : Եւ սկսաւ թուել պայմանները, ո- րոնք պէտք էին մարդու մը, կեանքին մէջ յաջողելու համար : Մայրը հետա- քրքրուած կը հետեւէր :

Սիւլվի հարցուց թէ յաջողած մարդ ըսելով ի՞նչ կը հասկնար :

Թէ իր Վոսթոյ երկու անգամ սնան- կացած մարդուն մէկն էր, թէ շատ դի- րուեթեամբ կրնար կրկին սնանկանալ : Եւ ձախողած մէկը դառնալ :

- Ի՞նչ ունի Սիւլվի :
- Ոչինչ : Ինչո՞ւ :

Մայրը մէջ մտաւ : Ըսաւ թէ այսօր դարձեալ «Մեկանքօլի» իջած էր Սիւ- վին վրայ :

- Ապուշ բան է, վրայ բերաւ Ալ- պէր :
- Ի՞նչ բանը :
- «Մեկանքօլի» ըսուածը : Ջիղի պա- կաս է :

Սիւլվի ժպտեցաւ :

- Հիմա էլի՞քրիտը մեզի կը սպասէ :
- Հա, երթանք, - ըսաւ Ալպէր :

Էլի՞քրիտը դիմաւորեց զիրենք : Ներ- կաներուն շատերը ծածօթ էին արդէն : Քիչ մը եւս համբերեցին : Ապա սեղանը հիւրանոցին մէջտեղ քաշեցին : Խոշոր տեսակէն կարկանդակ մը բերին ներսէն : Բոլորուեցան սեղանին շուրջ : «Հարի պըրտ տէյ» երգեցին : Էլի՞քրիտ կարկան- դակին վրայի մոմերը մարեց : Մախա-

հարեցին: Միլիի ողջագուրուեցաւ էլ Քրիստին հետ: Անոր երկար կեանք մը ժողովեց: Նուազը շուշացաւ: Միլիի առանձնացաւ անկիւն մը: Կը դիտէր Ալպէրը: Էլ Քրիստին հետ կը պարէր: Ժպիտաւ կը յորդէր Ալպէրին գէճէն: Ալպէր ոչ բարձրահասակ էր, ոչ կարճ: Ոչ դեղնեղէն էր, ոչ տղեղ: Սակայն քանի՞ տարի պիտի հանդուրժէր այդ թիւն, այդ բերանին: Մանաւանդ յաջողած ժարդու այդ ժպիտին: Ալպէր ուրիշ ի՞նչ ունէր տալիք: Եթէ ինք յանկարծ դադարէր հանդուրժելէ: Եւ ան շարունակէր ժպտիլ այդպէս կուշտ ու կուտ: Ի՞նչ պիտի ընէր այդ պարագային: Ի՞նչ ըրած ունէր հիմա: Գուցէ հեթաթ մը կ'ապրէր: Կար ու չկարի պէս բան մը: Միայն թէ Ալպէր հովիւ մը չէր: Եւ ինքն ալ...: Հոս կը բարդանար հարցը: Ոչ միայն իշխանուհի մը չէր: Իրապէս ի՞նչ էր: Աղջիկ մը: Ժպտեցաւ: Գիւտ մը չէր ըրած: Գեղեցիկ էր: Յստակ չէր գիտեր: Այդպէս ըլլալու էր: Տղաքը կ'ախորժէին իր ներկայութենէն: Յետո՞յ...: Գործի կ'երթար ու կու դար աչքպէս: Ամէն օր ութ ժամ «Պօս»ին սիկար ծամելը կը դիտէր: Անոր խոշոր զեթը կ'իջնէր ու կ'ելլէր: Ուրի՞շ...: Գուրս կ'ելլէր ինչպէս այսօր: Քիչ անգամ հաճոյք կ'առնէր: Ընդհանրապէս ալ անտարբեր էր այդպէս: Ուրի՞շ...: Ուրի՞շ բան չ'ունայ: Չէ, ժողովուրդ կարծես: Սակայն ապուշ բան էր: Գոյութիւն մը ի՞նչ արժէք ունէր, անգամ մը որ ինկած ես թակարդը:

Նայեցաւ Ալպէրին: Ան միշտ կը պարէր, Միշտ կը ժպտէր, Երանելին: Չես գիտեր ի՞նչ կը պատմէր: Կը սիրէր պատմել:

Գրան զանդը լսուեցաւ: Էլ Քրիստ վաղից: Երևոյ՞ վերադարձաւ: Ուրախութենէն կը ճառագայթէր: Երիտասարդի մը թեւը մտած էր:

- Մայքն է, - ըսաւ ներկաներուն, եղբայրս:

Միլիի սկամայ մտքերը շտկոտեց: Միշտ այսպէս եղած էր այդ տղուն ներկայութեան: Կը ճանչնար Մայքը: Ոչ

չառ լաւ: Քիչ անգամ կը տեսնուէր շրջանակներու մէջ: Հօրը դրամը ճամբորդութիւններու մէջ կը հալեցնէր: Նոյն իսկ շրջան մը վանք մտած էր, միսիոնար ըլլալու: Սակայն չէր դիմացած սեղմումներու: Մայք շուշացաւ Միլիիին մօտենալու: Ըսաւ թէ այսպէս դեղնեղէն աղջիկ մը իրաւունք չունէր ծանձրանալու: Անմիջապէս զնաց Երևանէն երկու զաւաթ վիսքի բերաւ: Ալպէր միացաւ իրենց: Միլիի ներկայացուց տղաքը իր բարու: Ալպէր շուտով Մայքին հարցուց թէ ի՞նչ դրժնով կը դրաղէր: Մայք պատեց յօնքերը:

- Պայման է որ մարդ բանով մը դրաղի:

Ապա աւելցուց թէ ինք կը նախընտրէր ճամբորդել: Ունէր կարելիութիւնը: Ալպէր զարմացաւ: Մայք հեռացաւ դուռէն լեցնելու: Միլիի ժպտեցաւ: Ալպէր հարցուց, թէ ինչո՞ւ այդպէս կը ժպտէր: Միլիի լուս մնաց: Ալպէր ջրդայնացաւ: Ըսաւ թէ Մայքը անպէտքին մէկն էր: Միլիի տուարկեց, թէ ներուշու պատճառ մը չկար: Ոչ ալ ժամանակն էր: Սկսաւ պարել: Լոռիային կը դառնային իրարու երես նայելով:

Միլիի պատշգամ ելաւ: Գլուխը ցաւիլ սկսած էր: Օդանաւ մը կը ճեղքէր երկինքը:

- Հանելի է մութին մէջ ճամբորդել:

Միլիի ետին դարձաւ: Մայքն էր: Մութին մէջ կը ծիւնէր: Մօտեցաւ: Մի կարէթ մը հրամցուց: Միլիի դուրս տըլաւ ծուխը: Կրկին նայեցաւ օդանաւին: Ապա ըսաւ թէ ամէն անգամ որ օդանաւ մը տեսնէր, իր առաջին ճամբորդութիւնը կը յիշէր: Երբ պատուիրած էին զօտիները կապել, վախցած էր: Ուղտն էր վար իջնել, կարծելով թէ օդանաւը վրտանդուած էր:

- Կ'երեւի կեանքին շատ կապուած ես, վրայ բերաւ Մայք:

- Ո՞վ... Ե՞ս...:

Միլիի զարմացած կը նայէր Մայքին: Ապա աւելցուց, թէ երբեք չէր հետաքրքրուած այս հարցով: Թէ շատ ալ

կենսական չէր: Սիւլի սեւեռեց մութը: Մայք խնդաց: Ըսաւ թէ ժամանակը չէր այս նիւթին մասին մասածելու: Ապա չարցուց, թէ վաղը դիշեր ազա՞տ էր:

Ձեմ դիտեր, ըսաւ Սիւլի: Վաղը կը հեռամայնեմ:

ԷլՔրիս վրայ հասաւ: Հարցուց թէ ի՞նչ կ'ընէին մութին մէջ: Եղբորը դարձաւ:

- Եկուր, Անդլիոյ արկածախնդրութիւններէդ պատմէ:

Մայք փորձեց խուսափիլ: Ըսաւ թէ դայթակղութեան անդի առ չէր ուզեր: ԷլՔրիս պնդեց: Առարկեց թէ երեխաներ չկային: Եղբորը ձեռքէն քաշեց ու ներս տարաւ:

Սիւլի սիկարէթ մը եւս վարեց: Մօտեցաւ փանդակին: Թռչնիկը սթափեցուց: Մտաւ ճաղերուն մէջ երկարեց: Փորձեց փետուրէն բռնել:

Իրապէ՞ս կապուած էր կեանքին: Ո՞վ կը կապէր զինք: Ալպէ՞րը: Ձէ՛, գուցէ Վօսնին խոշոր քիթը: Թոյլ տուաւ որ թռչնիկը կտցահարէ մտալ:

Խնդուքի ձայներ լսուեցան: Սիւլի ներս անցաւ: Մայք սենեակին մէջտեղ կանգնած բաներ մը կը պատմէր: Թէ ինչպէ՞ս ձեռք ձգած էր այդ պաղարիւն անպլուհին: Սիւլի շատ ալ չհետաքրքրուեցաւ: Ալպէր մօտեցաւ իրեն: Ըսաւ թէ ժամանակը անցած էր: Թէ ժամադրութիւն մը ունէր առտու կանուխ, վաճառականի մը հետ: Սիւլի չհակոտակեցաւ: Սենեակին մենութիւնը երբեմն ամէնէն տանելին էր:

Ալպէր լուռ էր ինքնաշարժին ղեկին առջեւ: Միշտ այսպէս եղած էր: Հանդարտ կը քշէր: Կը վախնար արկածէ: Սիւլի կը սիրէր այսպէս ծովեզերքէն անցնիլ: Սակայն սուբալով: Չառիվերները ու զստիվարները կտրելով: Ի՞նչ մը խեղդելով:

Ալպէր սովորականին նման ինքնաշարժը ամայի անկիւն մը կեցուց: Մով, լուսին ու դիշեր: Կատարեալ էր: Մօտեցաւ ազդկան: Սիւլի թոյլ տուաւ որ համբուրէ զինք: Եոյ՛: Այս մէկն ալ սովորութիւն մը դարձած էր ասրիէ մը ի վեր: Ալպէր ակերուն մէջ առաւ Սիւլիին ձեռքը: Այս նորութիւն էր կարծեալ: Հարցուց թէ կը սիրէ՞ր զինք: Սիւլի զարմացաւ:

- Ձեմ կարծեմ, ըսաւ:

Ալպէր լուռ մնաց: Սիւլի կը դիտէր ծովը: Մութին մէջ միայն ակիքներու պղպջակները կ'երեւէին:

- Մա՞րն է պատճառը:

- Ձեմ դիտեր:

- Ուրե՞մն, վրայ բերաւ Ալպէր:

Չարունակեց: Անցաւ ղեկին առջեւ: Նոյն ընթացքով շարունակեց քշել: Տան առջեւ սովորականին նման բաժնուեցան: Միայն համբոյրը պակաս էր: Սիւլի սպասեց որ ինքնաշարժը հեռանայ: Ապա պայուսակը ձեռքին մէջ օրօրելով շէնքին աստիճանները բարձրացաւ: Վաղը պիտի ընդունէր Մայքին հըրաւէրը:

Արդեօք այդ մէկը...:

2. 9.

ԽՈՍՏՈՒՄ

Մայր
 Եթէ մեռնիս
 Քեզ չես յանձներ
 Սա գարշ հողին
 Նշուով պիտո՞ւ
 Սուտի
 Մեղքի
 Եւ սակիի
 Այլ քոխիքովը հողիս
 Անքրպետները չմանչցող
 Անգամ միևնու աստղերը հուր
 Կը սլանամ
 Ուր ոչ մէկ ձեռք մարդկայնակամ
 Հպիլ անոնց չէ կրցած ցարգ
 Ես գանձեմ մէկ առ մէկ շալկած
 Վար կը բերեմ
 Ինչպէս կը յղկեմ
 Աղամանդը ազատանդին
 Շփելով յար
 Նայնպէս եւ ես
 Աստղը աստղին
 Քսելով միշտ
 Կը կուրծքիս մուրր շիրմաքարեր
 Որ դամբարանդ ըլլայ երկինք
 Շաղախ իբրեւ
 Կը գործածեմ
 Լայսը ցօղին հետ մառնեքովս շաղուած
 Որ դամբարանդ ըլլայ արեւ
 Մարմինդ համ կը հանգչեցնեմ
 Միածանը պատանք բքած
 Որ միբհես յաւերժօրէն
 Անուշ ճամով երեշտակի
 Խոստումս է այս
 Ապուինած ոչ թէ մարմնիս հօրութեան
 Այլ հողիս
 Որ հիւլէն է աստուածութեան...

ՎԱՐՔԱՆ ԶՕՐԵՆՑ

Սիրտ
 Որ ծագիկի մը մահով պարզ
 Կը փղկի
 Ու կը դառնայ գետ արցունքի
 Այդ սիրտը երբ մարդը տեսնէ
 Հանդէպ մարդուն
 Չար անիրաւ
 Այդ սիրտը նայմ
 Կը վագրանայ
 Կ'ըլլայ սիրտ քար
 Կը յօշոտէ
 Մարդը վայրագ...

Վ. Զ.

ՇՐՋՈՒՆ ԼՐԱԳԻՐԸ

Յուզիչ ու մեղան շէր ան: Միս ու սակոր էր: Ա. Ելի սկզբը զան միս:

Երկար ու բարակ աշտարակ մը, եզրափակուած կարծես Ֆլետով մը, որ նորութեան հետ մասնաւոր առնչութիւն մը չունէր:

Դէմքը՝ սակրուտ: Քիթը քիթ էր, բայց քիչ մը կուռազան տքլորի կտուցին կը նմանէր:

Կոնակին վերարկուն ո՛չ Փետրուար կը նանչնար, ոչ Օգոստոս: Փակած էր իրեն, ինչպէս պարտատէրեր փակած կ'ըլլան իրենց յաճախորդներու օձիքներուն:

Կարելի չէ պնդել այդ վերարկուէին կարծութեանը վրայ, որովհետեւ զաւած տունն կ'աւելէր՝ կը զէնք փողոցին փոշիները:

Չեռքի համրիչին հատիկները համբուտ տոխթ չեմ ունեցած, բայց իրատունք չեմ տար ես ինծի, 1575ն պակաս թերագնահատելու դանոնք: Բովէ ջով շարուած հատիկները, մշտական հաղորդակցութեան մէջ կը պահէին Բենիամին ազան, անունն ալ այդ էր, ինչպէս որ ծառի մը արմատները ծառը գեանին կապած կ'ըլլան...

Կեանքին մէջ գործի հետ գործ չէր ունեցած: Բայց հակառակ այդ իրողութեան՝ վերջերս հանգստեան կոչուած էր, այսինքն գեր-անգործութեան, եթէ երբեք կարելի ըլլայ այդպիսի բառ գործածել:

Հասած տղաք ալ ունէր, որոնք մերթընդ մերթ վերարկուէին անդնդանման գրպանին մէջ կը լեցնէին մանրուքի կրտորներ: Ձէին մոռնար օդին զէմ զինք պաշտպանելէ: Բայց անօգուտ...

Մխախտի տուփ յունէր, չէր պըտրացնէր հետը, բայց օրական երեսու-

նէ-քառասուն ծխիկի հետ... կը համբուրուէր...

Առտուանց կանուխ՝ դեռ «նկարիչ» Սարգիսը իր խանութը շրացած, զգահ-ուէնի» Մինասին ջով կ'ելլէր: Կը թառէր խարխլած աթոռի մը վրան, արգէն ուրիշ տեսակ աթոռ չէ տեսած Մինասին սրճարանը:

Աղուոր դաւաթ մը ջուր ինք կ'ապըսպէր, իսկ Մինասը՝ սուրճը կը հըրամցնէր: Մնայուն յաճախորդ էր Բենիամին ազան, եւ ատոր համար էր, որ Մինաս՝ սուրճին եւ ջուրին փոխարժէքը չէր դանձեր:

Ապա կու գային իր զլրատուները: Համալ Փանոսը, մասաբոծ Եռուտեֆը, երկաթագործ Հաճի Արթիւնը, յաւե՛րժ երիտասարդ Սամը, փայտագործ Մինիորը որ Ամերիկայի դռներն իսկ ծեծելու տոխթ ունեցած էր, կօշկակար Վեդիբը եւ այլն...:

Այս լրատուները անվճար էին: Բայց պէտք է արդարութեան սիրտին մատնանըլի թէ՛ անթերի կերպով կը կատարէին իրենց ուսերուն ծանրացող պարտախնութիւնը:

Նախ համալ Փանոսն էր, որ օրուայ ազգային եւ միջազգային կացութեան մասին համառօտ տեղեկագիր մը կը ներկայացնէր: Այդ տեղեկագիրը կաղմըւած կ'ըլլար կարածին մէջ, շօֆէր Գառնիկին եւ շօֆէր Գաբրիէլին հայհոյանքներուն խօսակցութեանց թափթը՝ փուշներէն:

Մսագործ Եռուտեֆը կու տար այն ինչ որ լսած կ'ըլլար հովիւ Լընդէն, որմէ կը գնէր իր մորթած մսացու այծերը: Մսագործ Եռուտեֆը պարկեշտ մարդ էր որպէս լրատու, իսկ որպէս մսագործ՝ ... ո՛չ:

Նրկաթագործ Արթինը, որ գինագործ էր նսեւ, զէնքի, սպառազինութեան եւ զինաթափութեան մասին որոշ տեղեկացրեր կը հաղորդէր...

Երիտասարդներու երիտասարդ, ըստ արտակահեր Սամը, կատարուած եւ մինչեւ չորս հինգ ամիս կատարուելիք հարսանիքներու, նշանադրութեան եւ մահուանց մասին մանրամասն զեկոյց մը կը ներկայացնէր:

Փայտահատ Սիւնիորը, որոշ տեղեկութիւններ կու տար ժանտարմաներու վարած բարձր քաղաքականութեան մասին: Երկուսի ելեւմտական վիճակին մասին եւս կրնար զեկոյց կարգաւ...

Արզէն կէսօր կ'ըլլար: Իւրաքանչիւր լրատու իր հաշիւը Միհասին հետ փակելէ ետք, կը մեկնէր: Իսկ Բենիամին սղան, որ անտիպ լրագրին տէրն ու տընորէն էր, ինչպէս նսեւ պատասխանատու խմբագիրը, իրեն վոխանցուածները սրտճալով կը խմբագրէր, աւելորդ մասերը զնկատելով, իսկ պէտք եղած պարագային թերի տեղերը ուղեցնելով... Այս բոլորը կ'ընէր երբ ընտանիքին հետ սեղան նստած կ'ըլլար:

Կէսօրէ ետք Նօֆէրին սրճարանը կ'երթար: Հոն եւս ունէր մէկ քանի լրատուներ: Անոնք եւս իրենց պարտականութեան զխտակից մարդիկ էին: Ասոնց անունները թուել աւելորդ է թէպէտ, բայց նորէն կ'արժէ զէթ Նեւտոնին անունը յիշել: Թէպէտեւ օր մը, դժուար մը ջուրին մէջ խեղդուելու վտանգը անցուցած է, բայց անկարելի է ուրանալ անոր բազմակողմանիութիւնը: Մարդ մըն է, որ ամենայն ճարտարութեամբ կրնայ ճանել Սոկրատէն, Պլատոնէն, Նարեկացիին, Արովիանէն, աստղաբաշխութենէ, զպատկարավարանքութենէ, զխաղաղութաննութենէ եւ այլ կարեւոր նիւթերէ:

Ահաւասիկ այսպիսի մարդ մըն էր, որ զլիտաւորաբար անտիպ լրագրին գրական, գիտական եւ փիլիսոփայական սխալներուց տակ, իր ճատորազրութիւնը կը զնէր...

Բենիամին սղան, Նօֆէրին սրճարանէն Մահչէին սրճարանը կ'անցնէր: Հոն

եւս մէկ քանի լրատուներ, եւ մանաւանդ քաղաքական մեկնաբաններ ունէր. արդէն ո՞ր Գեոսպիցի քաղաքական մեկնաբան չէ որ: Մեղուի պէս այդ ծաղիկներուն ճեղքարանք ալ ծծելէ ետք, Բենիամին աղան տուն կ'երթար:

Յետմիջօրէի տեղեկութիւններն ալ կը խմբագրէր, երբ արդէն իսկ անկողին մտած կ'ըլլար:

Այսպէս էր ամէնուն սիրելի Բենիամին աղան: Եարթուայ վեց օրերուն տեղեկութիւններ կը քաղէր, իսկ Կիրակիներուն գիւղերը կ'երթար իր բաժանորդներուն այցելութեան...

Այս հիման վրայ, ասոնց լրագրական օրէնքներուն զէմ մեղանչած ըլլալու, կարելի էր դաշն շարաթաթերթ կոչել...

Երջակայ բոլոր գիւղերուն մէջ ունէր հաւատարիմ բաժանորդներ, որոնք տեղի ու տեղը կը վճարէին իրենց բաժնեգինները... Քախտաճանկով, սուրճով, չոր թուզով, լամիչով, իսկ բացառիկ առիթներով... օղիով...

Տ

Գարնան լաւ կ'ըլլար: Բոլոր գիւղերու կարգին մեր գիւղն ալ կ'այցելէր: Կիրաւարտ դպրոցին ետին գտնուող կահաշ խոտերուն վրայ կ'երկննար: Իր ժամանումի լուրը կայծակի արագութեամբ կը տարածուէր ամբողջ գիւղին մէջ: Երևումը կը հաւաքուէին իր հաւատարիմ զննորդները:

Կը յիշեմ, այլ պարագաներու, կըրիայի պէս դանդաղաբայ Աբէլը, ուժ կու տար քայլերուն վայրկեան աստղ տեղ հասնելու համար, եւ բառ մ'իսկ չգիտացնելու մտահոգութեամբ: Մշակ Նշանոյը, կոզիբը դպրոցին քով կը ձգէր, իսկ ինք ձեռքին երկար դաւազանը կու տար մեղի, որպէսզի կոզիբուն ուշադրութիւն բնէինք, որ վնաս չհասցնէին ուրիշներու պարտէզներուն: Ճեմատեմէն Հաջէմը, թամբի պէս կուզիկը կ'անակին, ձեռքերը կուրծքին խաչաձեւած կը մօտենար: Դեռ կարելի է յիշել Երբեմնի փերեզակ Կիւրկուրը, ճակապո՞ Միսաքը,

որ պատերազմի ատեն Անգլիացիներու ջուր աշխատած էր, եւ բաւական թեթեւացոցած անոնց մթերանոցը... Ո՞րք Միւնասը, որուն շնորհով Եւրոպայի իր բոլոր ելեւէջներովը, կտրելի էր ունկընդորէլ վաթսուն-եօթանասուն քայլ հեռուութիւնէ... Նախկին քահանայացու ատաղձադործ Ստեփանը, մետաքսագործ-ատաղձադործ Եամոն, փերեզակ կայսրադործ Յովսէփը, մուկթաք Նշանը, փերեզակ Յովսէփին եղբայրը Չափուը:

Այս բոլորին կեղծոնը երկնցած կ'ըլլար Բենիամին աղան: Կը չփշփշեցնէր ուղտի շրթներուն պէս կախուած, թոյլ ու նօսր չրթները: Տո՛ւր հա կու տաս: Քեսապերէն թերթը կը թափէր հա կը թափէր իր դրամազուտը ու զէջերը կը դանակային ինքնաբերաբար:

Գիւղին ծերունիները, դեղձի հունտերով շինուած համրիչներուն չրխկ-չրխկոցներու երգին, եւ յաճախ կայծքարերու չրթ-չրթոցներուն, սունկի տնուշ բոյրին եւ իրենց ձեռքերով փաթթըւած հաստ ասիկառաններուն ծուխին ընդմէջէն կը յագեցնէին իրենց զընթերցասիրութեանն պապակը...

Մերթ ընդ մերթ, ատաս թուքով փակցուած ասիկառաններ կը հրամցուէին շարաթաթերթին... Թէպէտեւ շարունակ շոգեկատքի պէս ծուխ դուրս կու տար քիթէն եւ բերնէն, բայց նոր հրամցըւած ասիկառանները չէր մերժեր երբեք: Ողջ ըլլալին իր լայնածաւալ ասիկառանները... կրնային մէկական սիկառայով ծանրաբեռնուիլ:

Ճ

Ձմեռները ուղղակի Արէլին առնը կ'երթար, որովհետեւ իր բոլոր ընթերցողները հոն կ'ըլլային եւ «վաթսունվեց» կը խաղային...

Ճ

Արդար ըլլալու համար պէտք է ըսել, թէ իր հազարաւոր լուրերը չէր չափազանցեր շատ, ինչպէս որ այսօր արդուած լրագիրները կ'ընեն: Եթէ օրինակ

քաղաքագէտի մը ոտքը դառնայ, երկու ամիս շարունակ, այդ թերթերը կարծիր է: Խոչոր փերտառութիւններով, այդ դարձած ոտքին որպիսութեան մասին լուրեր կը հազարդեն:

Ինք՝ Բենիամին աղան օր մը սա ձեռով սահմանեց զինաթափութիւն ըսուածը.— Թուրք, Ամերիքան, Ինկիլիզը, Չինը, Ֆրանսըզը, Աֆրիքան համաձայներ են զինաթափութիւն կատարել: Ասի գործադրութիւն այս որոշման, Քեսապի ժանտարմաներն ալ, չըջանի բոլոր օրսի զէնքերը, իրենց ճէշփսանայտովը միատեղ, պիտի հաւաքեն եւ այրեն եղիւր...

Ճ


«Պարզացուելիք» լրագիր էր Բենիամին աղան: Բարի մարդ էր: Աղքատներուն թերթն էր: Ամէն տեսակի լուր ունէր: Թէ ճշմարտա՞ ունէր եւ թէ ալ մահազգ եւ հարսնիքի ու նշանտուքի լուրեր: «Փիլիսոփայական» տեսութիւններ՝ զորս ինք եւս չէր հասկնար... Մէկ քան կը պակսէր իրեն... այն ալ նուիրատուութեանց ցանկերն էին, որոնցմով կը վխտան մերօրեայ լրագիրները... Թէպէտեւ խալառ չունէր, բայց շատ մը հին «մասալներ» եւ հանելուկներ ունէր...

Ճ

Վերջերս Հալեպ փոխադրուել էր: Բայց չէր կրցած Գէսապի մէջ ունեցած հաւատարիմ բաժանորդներուն պէս հաւատարիմ բաժանորդներ դառնել: Թէեւ նիւթական նեղութիւններ կ'ունենար, բայց տակաւին կը շարունակուէր «հրատարակուիլ»...

Անցեալները, Ատուած երկնային տեղեկատուութեանց նախարար՝ Ղուկաս առաքեալի ստորագրութիւնը կրող հրովարտակ մը յանձնել էր Գարբիէլ հրեշտակապետին: Այս վերջինն ալ, իրեն տրուած իշխանութեանց համեմատ, միանգամ ընդմիջտ փակել է այդ ազգագրու եւ ընթերցանի շարաթաթերթը...

ԳԷՈՐԳ ԱՄԷԼԵԱՆ



ԳՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Արևմտեան տշխարհի գրական կենտրոնն իրայ արագ բայց համապարփակ ակնարկ մը կանգ կ'առնէ երեք յարաւոր՝ հակասական երեւոյթներու վերայ: Սահմանափակելով մեր ակնարկը Պորճրոյսին Միութեան, Գերմանիոյ, Ճրանսայի, Անգլիոյ ու Միացեալ Նահանգներու ծիրին մէջ, այս երեւոյթները կրնանք տարագել որպէս Բնկերվարական Իրապաշտութիւն, Նիւիլիզմ ու վերջապէս, որպէս Առետրակամացում:

Ատնցմէ եւ ոչ մէկը գրական երեւոյթն է, ու շատ բնական է ստիկա, որովհետեւ գրականն ու գրականութիւնը չեն զուգահեռի որ այլեւ իրարու: Աւելի բարձր համադրութիւն մը կը յանգի ընկերարանութեան՝ եթէ վերլուծենք իմաստասիրական, քաղաքական ու արնտեսական նշանակութիւնը այդ երեւոյթին: Ու ստիկաին, այդ երեք յղացքներէն առաջին երկուքին միջեւ անհաշտ հակադրութիւն մը կը պրկէ մտածումի ու ստեղծումի թելերը, մինչ երբորդը կը պարունակէ արդէն գրականութիւն դադարարին եթէ ոչ քայքայումի հունտերը՝ դէթ անոր մէկ նոր, յեղափոխական սահմանումը:

Ասկէ տասնըհինգ տարի առաջ գրականութեան կացութեան մասին հաւանաբար կարելի ըլլար վերջնական, ինքնա-

մբոտան շեշտով մը արտայայտուիլ, կարելի ըլլար վերլուծել աւանդական Էմքէթիֆը, փորձ մը ըլլար մեր դարու տենդագին, հիսթորիէ թափին դէմ պատուաստուիլ ու ցոյց տալ քանի մը յուսադրիչ եզրակացութիւններ: Հիմա օսկայն այդ կարելի չէ: Ոչ միայն անոր համար որ տպարաններու արտադրութիւնը աներեւակայելի համեմատութիւններու հասած է (Եւրոպա, Պորճրոյսին Միութիւն ու Միացեալ Նահանգներ միտսին տարեկան մօտաւորապէս 100,000 անուն դէրք լոյս կ'ընծայեն, որու մօտ 10,000-ը զուտ գրական-իմացական յատկանիշ ունին) ու ալ կարելի չէ ոչ ալ ցանկոյթ՝ հասարակաց գետին մը նըմարել: ոչ ալ մասնաւորաբար որովհետեւ այսօր առհասարակ մարդիկ դէմ են եզրակացութիւններու ու ըսնածեւումներու (գիտութիւնն իսկ կը խրաչի օրէնքի յղացքէն), այլ որովհետեւ գրական երկի մը ստեղծումին, արժեւորումին ու շղարձակումին մէջ, որ անդի կ'ունենար գոյնութիւն, երեսակայութիւն, դատողութիւն ու ստեղծագործական մղում կոչուած իրողութիւններու տիպէթիէ պնացքով՝ մուտք գործած էրոլորովին նոր ազգակ մը, անձեւ ու անդետեղելի ճիւղ մը - զարգացած բայց անձակ միջին զանգուածը, գլխաւորա-

բար քաղաքներու բնակիչները, իրենց գորշ, անքուն, կարծր գիտակցութեամբ իրարու դատապարտուած հեռուէն հեռու, հետաքրքիր, շատախոս մարդիկ, որոնց ուներուն յեցած է մեր խարխուլ քաղաքակրթութեան ամբողջ պատասխանատուութիւնը:

Սպանաւից, անյետաճկի իրողութիւնը այն է, որ այսօր, եթէ դրակահաւթիւնը արուեստի օգեկան ու իմացական կալուածին կը պատկանի տակաւին, ան նաեւ ու անծխոտիւրէն մաս կը կազմէ տնտեսական աշխարհին, ճարտարարուեստ մըն է բառին այն բովանդակ իմաստով ու եղերականութեամբ՝ որով պարսպի մէջ արժէքներ կը մաշիցին ու կը դատարին, որով մարդիկ կը վերածուին ապրանքի ու առարկայի Փայրիքներու մուտքերուն: Հարց տալ թէ ո՞վ կ'որոշէ, մեր օրերուն, դրէք մը ճակատադէր՝ կը նշանակէ բան շնանշնալ մեր ժամանակներու զիմազծէն: Միջին հաշուով օրական 25 ձեռագիր ստացող հրատարակչական տուն մը երբ կ'որոշէ տպել նոր գրողի մը գործը, որ արդէն տարիներէ ի վեր կը աշխարհ մէկ հրատարակչին միւսը՝ այդ որոշումը շատ թոյլ կապ մը միայն ունի գործին գրական արժէքին հետ: Գրականի գիրք մը երկու օրէն կը ծնի ու մէկ շաբթուայ կեանք ունի, դնուելէն վերջ: Զգնուելու պարագային իր կեանքը կ'երկարաձգուի մինչև մէկ տարի: Քաղաքական կլիմայ, տնտեսական վիճակ ու շուկայ, հանրութեան ճաշակի քայքայող շարժումներ, սեռականութիւն ու սեփական Պաշտեքագր ու քրտեսութիւն - առ առաւելն մէկ սարուայ կեանք ունեցող այս ազգակներու ծիրին մէջ պէտք է գործէ երկի մը կեանքը ու միջնորդը, ըստ հրատարակչին: Կայ նաեւ երկրորդ անձ մը - քննադատը, որ եթէ ասկէ 25 տարի առաջ ամենազօր էր, այսօր դուն է տրտեսական կացութեան: Անպիտոյ մէջ, օրինակէ համար, շաբթական մօտ 30 վէպ կը նետուի քննադատի սեղանին վերայ... Ի՞ր մէկը կարգայ, ո՞ր մէկու մասին լուրջ ու վերջնական դատում

տայ (1): Խմորադրաման մէջ իր դէմը նստած խմորադրը դեռ իրմէ ալ աւելի զօրաւոր է: Ան է որ լսուել կ'ընէ գիրքը պտոնակի դուրս հանրութեան մը ախորժակներուն (2): Նոյնքան հզօր անձ մըն է զրավաճառը, որ գիրքերու դասաւորումին ու մատուցումին մէջ կ'առաջնորդուի միջին հանրութեան ճաշակով:

Գիրքը մշակութային կեանքի խորհրդանշան է մեզի համար, մաս կը կազմէ ընտանիքի մը հարստութեան, բարոյական ու ժառանգական դասնձ մըն է, նման դերգաստանի խոշոր Աստուածաշունչին, մաշած գորգին, հին ու պատառլուսանկարներուն: Առ երբ նոր մը կը շնորհէ, դանակին ձայնը՝ երբ կ'ընթերցանէ, մելուխի բարկ հոտը, ընթերցումի ժամանակ ծալուած անկիւնները, զրազարանի մէջ ստեղծած իր միջավայրը - այս բոլորը վաւերական զգացութեանական ապրումի մը նկարագրերը ունին: Գիրք մը գիրք չէ առանց յիշողութեան ու յիշատակի: Սակայն ի՞նչ է որ կը կատարուի ներկայիս քաղաքակրթ աշխարհին մէջ: Գիրքը վերած-

(1) Լոմոսի Քայմ Լիթերէրի Մարտիտի-ը, որտ կ'աշխատակցին, անտորագրք, Անգլիայ 3000 լուսադրոյ մտադրակամները, շաբթական առ առաւել 100 գիրք կը ձեռնարկէ, որան միայն մէկ տարեթոյր զուտ գրական երկեր են: Եթէ Երբ Քայմ Պուք Բիլիու-ն շաբթական 50 գիրքէ աւելի չի ձեռնարկէր, մինչ Փրամական Լէ Երբ Լիթերէր-ը առաւելադրոյ 25 գրախօսական սեմի մտն շաբաթ: Ոչ գրա միւս յաւանաւորական կացութիւնն այ կ'արժէ մշի ու անգրի - ընթերցողը ո՞ր գիրքը վագէ ու գնէ, սանտուիլը իրանը կարոյ այ մայրը կարած պահուն մտածումները դատարար: ու սիմետայի կիշիմ պոյ բանած՝ իստի այդ մտքին վեր ի վտայ, աճապարզ մարդու մը հետ:

(2) Քայմ Լիթերէրի Մարտիտի-ը շաբթական մտադրապետ 175 գիրքի փրկուելի կը շնէ, Եթէ Երբ Քայմ Պուք Բիլիու-ն՝ 125, արանցմէ մէկ ժամին կ'արժանանան երկու տարեթոյ երբու տարածքին, շնորհիւ ցեղային ճակատմանը կամ միւսական միջոցներու:

որած է սպրանքի: Կ'ակնարկենք անշուշտ պրպանի պրքերուն, կակուղ, գունազև կողքով, նոյնածուալ Հատորներ՝ Ողբ-սակունդն մինչև մըջիւններու Հոգեբանութիւնը, անցնելով Հեկէլէն ու Յան Յիւսէփիկէն եւ որոնք կը ծախուին դեղարաններն ու կայարանները, գրատուններն ու մեծ վաճառատուները, կը ծախուին նոյն անուշադիր ու անճիշ մեքենակա-նութեամբ, որով կը սպառին ծխախոտի կամ Բլիսէֆի տուփերը, արտիկներն ու շեղիները: Կը կարգացունին, այսինքն իրենց նպատակին կը ծառայեն՝ ու յետոյ կը նետուին հին թերթերու հետ: Մշակոյթի անօթը ու ծխախոտի անօթը նոյն յարդանքին ու գուրգուրանքին կ'արժանանան: Ու այս դործին կը լծուին մեր շքեղ քաղաքակրթութեան բոլոր շողշողուն միջոցները - ձայնասփիւռ ու քէլ-լիվիզիոն, պրական մրցանակներ ու փիւլայիլիթէ, քիչ մը սնօղիզով ու դիւրամանչիլիթիւն: Ու մանաւանդ՝ դանդաղաներու Հոգեբանութիւն: Այս բոլորը՝ կոթնած արդի ճարտարաբանե-տի ամէնէն կատարելագործուած միջոց-ներուն: Գողգոթար մը տալու համար, թէ ինչքան արագ անած է այս նոր ճարտարաբանութիւնը, յիշենք Անգլիոյ պարագան: 1960-ին Անգլիոյ մէջ սպրանք է 5866 անուն դրպանի գիրք, 1962ին՝ 9578 ու 1965-ին՝ 14,000էն աւելի: Պրանսա նոյն-քան արտակարգ է կացութիւնը - 1961ին ճարտարակուած է 11960 անուն գիրք ու սպրանք է 167 միլիոն օրինակ: Միացեալ Նահանգներու մէջ կացութիւնը նոյն-քան ծայրայեղ է: Յետոյ, այս նոր ճարտարաբանութեան միւս երեսներն ալ շահե-կան են ու կը հպատակին պահանջ-մա-տուցում անուսական ամէնէն մերկ ու անգութ օրէնքին: Միացեալ Նահանգնե-րու մէջ, առաջին տպագրութիւնը ան-ծանօթ հեղինակի մը դործին կը հասնի շատ դիւրաւ 100,000՝ որ Պրանսայի պա-րագային կը մագլցի 300,000-ը: Ու եթէ պէտք-սէլը ըլլալու յոյսեր ալ կան, Ա-մերիկեան որոշ տուններ մինչև կէս մի-լիոն տուրքի կանխավճար ըրած են հեղինակին: Մրցակցութիւն ու շուկայ

գրաւելու մղումը այնքան կատարելա-յործած են արդիական մեքենաները, որ 200 կ'ընոց գրքի մը 30,000 օրինակի տը-պագրութիւնը ու էջերու ծալուելու գոր-ծողութիւնը, Պրանսայի մէջ, 3 ժամէն աւելի չ'առնէր...: Բարդեցէք ասոր վը-րայ քաղաքական, ցեղային ու Հատուա-ծական անթիւ ուրիշ ազդակներ ու կը հասկցուի ինչու համար այլեւս կիսա-գրագէտ, անպարուած ու աննորոգած գանգուածներու քմայքին ու քանի մը ճարտարաբանութեան անհպելի կիսաստ-ուածներուն ձգուած է ոստիկանական վէպի մը, ավան-կարտ վէպի մը ու զուտ գեղարուեստական գրութեան մը միջև սանկ քսան ամտուայ համար ընտրու-թիւն ընել, ու յետոյ նետել անքուն լը-ռութեան մը դիրկը, ճշգիլ գրական հը-րագրակի բարեխառնութեան շափը, գրողին իօսքին իր տեղը հասնելու կա-րելիութիւնը, եթէ գրաքննութիւնը (որ այնքան կեղծ ու փքուած ու հիւանդագին նկարագիր ունի Միացեալ Նահանգներու մէջ) եթէ քաղաքական իշխանութեան բարոյական ջողարկեալ ճնշումը (որ Անգլիոյ մէջ եւրպայիլիզմը անունին ծ-տին պաշտպան լրտեսի մը պէս կը հսկէ գրողին վրայ, որ ըլլայ թէ ընկերային կարգը թունաւորելու աստիճան անկա-խանայ, ըմբոստանայ) նկատի ալ առ-նենք, պատկերը շատ աւելի յստակ կ'ըլ-լայ: Կ'արժէ՞ յիշեցնել, թէ Եան Յիւ-սէփիկի ձէլմզ Պօնտ վէպերը, որոնք ցարդ 32 միլիոն հատ սպառած են միայն Միացեալ Նահանգներու մէջ ու 200 մի-լիոն տոլարնոց ճարտարաբանութեան մը ըս-տեղծած են, իրենց ներկայ ժողովրդա-կանութիւնը կը պարտին նախագահ Քլե-նէտին մէկ խօսքին, ուր կը յայտնէր 1961-ին, թէ ինք ձէլմզ Պօնտ կը կար-դար, պարագ ժամերուն...: Եւ կամ ինչպէ՞ս բացատրել Քէնէտի մասին ցարդ դրուած մօտ 175 անուն գիրքերը, որոնք միլիոններով կը ծախուին, առանց նկատի ունենալու քաղաքական այլապէս ազդակներ:

Այս ամբողջը՝ բացատրելու համար թէ հարցը այնչաւ ելած է գրողին ու

քննադատին ձեռքէն: Զուտ գրական տեսակետէն, ներկայ կացութեան բանալին հաւանաբար ուրիշ երեւոյթ մըն է – գըրոզին ճիգը լեզու գտնելու այս փոփոխութիւններուն ու անոնց լծակներուն հետ, առանց նաշանջելու իր արուեստագէտի հպարտ բայց յուսահատական դիրքերէն, ինչպէս կը նշէր անգլիացի զընհուզատ մը վերջերս: Գիրքը այսօր դարձած է մեծ քաղաքներու, ճարտարարուեստի իշխաններու հաշուեցանկերու գոյք, կ'ըսէք ան: Հեղինակի նոր տիպար մը տակաւ ձեռ կ'առնէ, կը շարունակէր ան, մէկը՝ որ ոչ միայն գրելու արուեստը նուաճած է, այլև կը տիրապետէ աչք շլացնելու, դիրքին ծախուելու, հասարակական դասնալու թէքիքին, ինչպէս ու սպառնական, նկարագրական ու այլ ձևի թէքիքներու: Եստակ մը բեմայրի՛ք՝ որ հրատարակչին հետ միասին կ'որոշէ ամէն բան, սկսեալ ձեռագրի խմբագրութենէն մինչև ընթերցողին ստանալիք վայելքը:

Հարցը սակայն հոս չի վերջանար, բարեխախտութար: Եթէ զրական հոսանքի բնոյթը, ճաշակը եւ ուղղութիւնը մեծ մասով անտեսական ու ընկերային ազդակներն են, որ կ'որոշեն՝ զրոզն ալ իր կարգին հակազդեցութիւն ունեցած է: Վերջին տասնամեակին, գրողներու միջնազգային համագումարները փէրաի քօլայն փոխ-տնօրէններու համագումարներու շտի յաճախակի ու անոնցմէ շատ ունի աղմկայարոյց եղած են: Անցեալ տարի Սեպտեմբեր 2-էն 6, 40 երկիրներէ աւելի քան 400 բանաստեղծներ հաւաքուած էին, ինչպէս ամէն տարի, բայց Քամատտեղծը ու իր Աշխարհը նիւթին շուրջ: Անցեալ տարի կրկին, Լէնինկրատի մէջ եղած մտաւորականներու համագումարը, Բ. Է. Ն. Էլսալի տարեկան համագումարները 30 տարի է ի վեր, Ֆըրանքֆուրթի Գիրքի Միջազգային ՏօնաՎաճառը, որ ամէն տարի կը հաւաքէ աշխարհի բոլոր մեծ հրատարակչական տունները, 65-ի ամբան Լոնտոնի մէջ կայացած հրատարակչային բանաստեղծական ամուսնիքի անասիրնթաց հանդէսը,

ուր 6000 հոգի Ա երկիւղած, աղմկոտ ու խանդավառ ժամեր մտիկ ըրին 20-է աւելի բանաստեղծներու ընթերցումները, ինչպէս եւ նշանաւոր Էլթուշէնքոյի ու Վոզնէսէնքիի Եւրոպական ոտաններու մէջ կատարած այցին ընկերացող ցոյցերն ու զգացական շտապութիւնը – Ե՞ր մէկը յիշել (3): Թէքիքի, աստիկանի ու հրատարակչորի ճիրաններուն մէջ բռնուած մտաւորականը իր գոյութեան իրաւունքի պայքարն է որ կը մոզ ու կը փորձէ ինքզինքը պարտազրկել պատմութեան մեծ որոշումներու ժամանակ: Տակաւ բռնաախրող, կեղբոնացող ու անանականացող քաղաքական ուժին ու տակաւ աճող, նկարագրի փնտռող զանգուածներու ուժին միջև, մտքի մարդը հարկազրուած է թէ՛ ընտրութիւն մը ընել եւ թէ՛ ալ խուսափել ընտրութենէ ու հակադրել երկուքին միասեղ: Ազդէն վերջին տարիներու հիմնական հարցերը զանգուածներու հարցեր են – զաղթավայրերու ազատագրում, կրօնական միութիւն, ցեղային պայքար՝ Հարաւային Ափրիկէի ու Միացեալ Նահանգներու

(3) Այլապէս շտեկան ու խանդավառ է ձիան Մեթոյի մը պարագամ, որ անցեալ տարուայ ամբան իտալական Սթուէթօ գիւղը հրատարակեց, իր անձնական միջոցներով, 14 երկիրներէ 30 ականաւոր բանաստեղծներ, մէյն ըլլալով միջազգային համալսի հասած բանաստեղծներ, ինչպէս Էլթուշէնքօ, Սթեֆան, Քազիմատ, Էլթու Քատուտ, Ֆելիքսիքի, Քալյօ Ներուտա, Ալըմ Թէյք, Տեգման Օկրեյտի հայրն: Ու մեկ շաբաթ անկերջ ամտիպ քերթուածներու ընթերցում սեպ աւանգալ գիւղի զգուի քատրոնի մէջ, վե՛ն ու քննադատութիւն, վայելք ու պայտար: Բանաստեղծները անշուշտ մարդկութեան ամենն այլապէս ամենն են, սակայն երբայրելու է որ այսպիսի ստիքներու է որ ամեն հասարակաց դատի մը, երբ այլ զգայութեան մը, առիթ ձեռկայութեան կը գիտակցին: Պիտի զա՛յ արդեօք որ որ հայ բանաստեղծութիւնն ալ, ամուսնով հայ բանաստեղծը՝ իր շեշտը դնէ մեր դարաւ սպումներուն վրայ...:

մէջ, անօթուժեան սպառնալիք, զանգուածի դատախարակութիւն, աթոժական փոստիկ, դադափորարանական տապնապ ու այլանեղում՝ ընկերվարութեան ու մարքսիզմի պարագային, ՄԱԿ-ի տաղանայ, զրպանի գերքի յեղափոխութիւն եւայլն: Ու այս բոլոր հարցերուն դեմաց զբողոքներու հակադրեցութիւնը ու ներգործութիւնը նոյնքան դաւախ է - Փըրանսացի մատուցանելնրու 121-ի մտնիփէտը, Գերման գրողներու կրուք 47-ը, Իտալացի գրողներու կրուք 63-ը, Միացեալ Նահանգներու թիշ-ին շարժումը, Անգլիացի մտաւորականներու Պան տը Պոմպ շարժումը ու թատերագիր Արնըլտ Ուէտզըրի նախածնունդութիւնը, բանաստեղծական հրապարակային աստուծները, Փորտ Փառնետէլընի Պերլի-նի մէջ կայացուցած մտաւորականներու համագումարը եւայլն, ցիր ու ցան բայց անկապ երեսոյթներ չեն անկասկած: Երբ Սարթը կը մերժէ Միացեալ Նահանգներ այցելել՝ ընդունելի վերջ Ծիտէլ Գասթրոյի հրաւերը, երբ ամերիկացի բանաստեղծ Բոյլըրթ Լոուըլ կը մերժէ նախադատ ձոնարի անձնական հրաւերը, երբ Մայրո, Նորմըն Մէյլը կամ Կիւնթըր Կրաս իրենց ձայնը լսելի կը դարձնեն քաղաքական բարձրագոյն մակարդակներու վրայ՝ այս կը նշանակէ թէ ընկերային պատասխանատուութեան նոր ու սուր դրացում մը, զանգուածներու ճակատագրին հանդէպ նոր հետա-

գրքերութիւն մը ծնունդ կ'առնէ քիչ մը ամէն կողմ: Խօսիլ դրական հոսանքներու մասին մեր ժամանակներու այսքան խառնակ ու անկայուն կացութեան մէջ, խօսիլ այնպէս ինչպէս կը խօսէին ժամանակի իւր մանրիք, գերբրապաշտ ու այլ դպրոցներու մասին՝ կը նշանակէ դիտակցարար, նոյնիսկ շարամտօրէն անտեսել դարուն հիմնական տուեալները: Անցեալի անբուժելի կարօտ, մերժում անտարազելի ապագային կամ առնուազն շուարած վա՛խ այդ ապագայէն, ջղապիղկ ներկայէ մը անջատումի ճի՞ք, կարելի համադրումի մը անհրաժեշտ փո՛րձ - ամէն պարագայի, պէտք է որ երբեմն սահմանափակենք զբաղանդներն բար ու չոր իմաստին մէջ ու փորձենք հասկնալ անոր նշանակութիւնը: Այսինքն, թէ դրական երկ մը ազատագրումի, բնութագրումի ու ինքնափրկութեան եւ մասամբ ալ դեղագիտական վայելքի արարք մըն է էսպէս եւ որ, երկրորդական ուղղութեամբ մը կը ձգտի ու երբեմն կը յանդի, մարդկային կարելի հազարգահանութեան մը ապրումին: Այս լոբոնումի տուեալներու ծիրին մէջ է, որ կը զետեղենք զբաղանդ երկու հիմնական երեսոյթներու, ընկերվարական Իրապաշտութեան ու նիւհիլիզմի արագ ընդունելիւնը:

Վ. ՕՇԱԿԱՆ

(Շար. 1)

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՒՆԸ

Մ Ե Ր Մ Է Ջ

(ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՓՒՒՌՔ)

Դժուար կացութեան մը առջև կը
 Կտնուի մարդ երբ կ'ուզէ խօսիլ Հայ բա-
 նաստեղծութեան մասին (չե՞մ ըսեր՝ Հայ-
 կական)։ Ի՞նչ ըսէ եւ ինչպէս... Բանաս-
 տեղծութեան մասին իր ունեցած բոլոր
 ծանօթութիւնները որոնցմով պիտի կըր-
 նար գրականութիւն ունեցող որեւէ ժո-
 ղովորդի բանաստեղծութիւնը բացատրել
 կամ մեկնարանել, անգոր են Հայ բանաս-
 տեղծութեան առջև։ Որովհետեւ առա-
 ջին Հարցումը որուն պարտի նախ ան
 պատասխանել՝ Հետեւեալն է. «Ո՞ր է
 ան, ո՞ր կը գտնուի, Ո՞ր կը սկսի եւ
 ինչպէս...»։ Բայց կա՞յ վերջապէս Հայ
 բանաստեղծութիւն մը՝ այսօր։

Ուրեմն բացատրել բանաստեղծու-
 թիւնը ընդհանրապէս եւ Հայ բանաս-
 տեղծութիւնը - եթէ զայն ունինք - մաս-
 նաւորապէս, կը նշանակէ երկու տար-
 բեր հրեւոյթներու առջև դանդաղ, որ-
 քան ալ որ յայտնած կարծիքս տարօրի-
 նակ թուի ըլլալ շատ շտապեալ։ Կարելի՞
 է միթէ երկու չափ եւ երկու կշիռ գոր-
 ծածել Համապատասխան եւ նոյն բանին
 Համար։ Կը կրկնեմ սակայն, երկու տար-
 բեր երեւոյթներ՝ որոնց մին՝ բոլորովին
 կը Հակադրուի միւսին կարծէք զայն
 ժխտելով։

Հոս, ճշդեմ դիրքը նախ Հայ բանաս-
 տեղծութեան։ Բնականաբար խօսքը մեր
 աւսորուան բանաստեղծութեան մասին
 է։ Բայց ո՞ր պիտի փնտռէք զայն։ Երկ-
 րադունտին ո՞ր կողմը, մարդկութեան
 ո՞ր Հատուածին մէջ եւ ի՞նչ ժամանա-
 կով կամ ժամանակաշրջանով ներկայա-
 ցած։

Իրապէս դժուար Հարց մըն է որ կը
 դնեմ մէջտեղ, մինչ, այդ դժուարութիւ-
 նը գոյութիւն չունի, երբ մտնեմ այլ
 ժողովրդի մը բանաստեղծութեան՝ զոր
 կրնամ անմիջապէս կապուիլ իր ծանա-
 նակով եւ զետեղել իր միջոցին մէջ։ Ո-
 ղովհետեւ ան անմիջապէս կը մատնէ
 ինքզինք իր նկարագրով։

Ընդհանրապէս առած, ինչպէս պի-
 տի տեսնենք քիչ մը վերջ, Հայ բանաս-
 տեղծութիւնը որուն ո՞ր գտնուիլը եւ
 ե՞րբ (ժամանակին եւ միջոցին մէջ)
 կ'անդիտանանք, զուրկ է ամէն յատկանը-
 շական նկարագրէ, եթէ այդ գրկուած վի-
 ճակն իսկ իր նկարագրերը չի կազմեր...

Ուրեմն կը տեսնուի որ բանաստեղ-
 ծութեան Գաղտնի է որ նկատի կ'առնեմ
 այս գրութեամբ։ Քառորդ՝ ուր ծնունդ
 կ'առնէ բանաստեղծութիւնը, Հանճարի
 Հարց մը չէ որ կը ծագի Հոս սրբան ալ
 որ անհրաժեշտ ըլլար ան։ Այլ այն ըն-
 կերային տուեալներն ու պայմանները ո-
 ղոնք որեւէ ձեռով Հանճարին անհատա-
 կանութիւնը կը կերտեն։ Ուրեմն այդ
 կէտը դուրս կը մնայ իմ նիւթէս։ Կ'առ-
 տնանեմ նաեւ ցուցադրութիւնը զետա-
 վիտական տեսութիւններու եւ վիճել
 այդ մասին, Հակառակ որ անխուսափելի
 կերպով Հարկադրուած պիտի ըլլամ եր-
 մեմ կատարել սնունդ Համապատասխան
 արտայայտութիւններ։

Ճ

Ամէն ժողովուրդ իր բանաստեղծու-
 թիւնը ունի։ Նոյնիսկ այսօր՝ Միտքը կը
 միջազգայնանայ, բարձրը կ'իւրացուին

մէկէն միւսը, ընդուսական սխաթէմներ գիրւաւ կը ճամբորդեն երկրէ երկիր, երբ սահմանադաշինները մասամբ կը դառնան բարոյապէս գոյութիւն ունենալէ ու ամէն արժէք կը ձգտի տիեզերական հանգամանք մը ստանալ: Որովհետեւ ամէն ժողովուրդ, կազմուած դարերէ ի վեր, սերոյն հաւաքականութիւն մըն է... ցնոր տնօրինութիւն...: Ինչպէս իր բոլոր արտադրութիւնները, բանաստեղծութիւնն ալ լաճալիզէ եղած է տարածութեան մը սահմաններուն մէջ՝ որ ժողովուրդին երկիրն է: Այդ ժողովուրդը իր պատմութեան մէկ պահը կ'ապրի իր իսկ երկրին վրայ, տուեալ ժամանակաշրջանի մը ընթացքին՝ որ իր ներկան է: Այդպէս է եղած քնականաբար, յարատեւ կերպով իր անմիջական, մտաւոր կամ հետաւոր անցեալին մէջ եւ: Իր զարդիք բանաստեղծութիւնը կրնանք միշտ լաճալիզէ ընել ամէն անգամ այդ ներկային մէջ, որ ըլլալով Հանդերձ նոյն Հողմատան վրայ, խզուած է իր անցեալէն զայն իրեն մէջ ունենալով: Կը ձգտի զէպի դալիքը, որովհետեւ կեանքը ձգտում է իր էութեամբ: Ներկայով է որ ժամանակաշրջան մը (գրական) կը սկսի:

Կ'առնենք Հարցը քնականաբար իր լաւագոյն պայմաններուն մէջ: Այդ ժամանակաշրջանը կրնայ ըլլալ անկման ժամանակաշրջան մը նաեւ:

Բայց այս բացասական պարզան ոչ մէկ բան կրնայ փոխել տալիք բացատրութիւններէս: Տեսակէտը կը մնայ միշտ նոյնը երկու պարագաներուն մէջ ալ, որոնք կրնան բացատրուիլ նոյն պատճառարանութեամբ:

Բայց ժամանակաշրջանը որուն մասին կ'անդրադառնամ, միայն բանաստեղծութեամբ չէ որ կ'արտայայտուի: Բանաստեղծութիւնն ալ իր կարգին մէկ երեսը կը կազմէ քնկերային երեւոյթներու քննարկութեան, որովհետեւ բանաստեղծութիւնն ալ ընկերային երեւոյթ է: Ուրիշ իտարով, ան ժամանակաշրջանի մը արտայայտութիւնն է, որովհետեւ ամէն ժամանակաշրջան իր մասնութեամբ կ'առնէր կը չափէ, կը ձեւաւորէ

նաեւ նոր պայմաններու մէջ՝ իր խաչալը: Իր կեանքը կ'ապրի:

Օրինակ, այսօր կարելի է վիզուապաշտ կամ դասական համարուած գրականութիւն մշակել: Ինչպէ՞ս տեսնել կիներ որոնք իրենց դառաւոր փոքրցները պիտի աւելին թալած պահուն կամ այրեր իրենց քլորիմիզոթով եւ սիլիմիտով:

Կարելի չէ բոցել, սակայն, որ ընկերային երեւոյթներուն ամբողջութեան մէջ ամէն մէկ տարր հաւասար եւ համարժէք ընթացք մը ունի համեմատաբար միւսներուն: Այս բոլորը կ'ազդեն իրարու վրայ: Ոմանց առած ընդլայնումը կրնայ ուրիշի մը անկման նպաստել: Այդ պարագային ժամանակաշրջանը կը լայնայ յորջորջուի իր անունով: Մեր ժամանակաշրջանը կը թուի թէ գիտութեան եւ թէքնիքի դարն է:

Այս ընդհանուր ակնարկը պէտք է ըլլայ նաեւ մեղի համար ալ: Եթէ ժողովուրդները ժամանակաշրջաններ սունին՝ մենք ալ պարտինք ունենալ մերինը իբրեւ ժողովուրդ: Եթէ գոյն ունինք՝ ե՞րբ կը սկսի ան, ո՞ր եւ ինչո՞վ... Ըսողներ պիտի ըլլան, որ ան Հայաստանով կը սկսի: Ուրիշներ՝ գաղթախարհի մէջ պէտք է փնտռել ունոր սկիզբը, քանի որ՝ երկուքին ալ ծագումը գրեթէ կը զուգարկուի: Երբ որ մը վերջապէս՝ ամէնքով:

Անտարակոյս: Բոլոր այս կարծիքները իրենց մէջ ճշմարտութեան բաժիններ ունին, առանց որ անոնց ամբողջութիւնը հարցը լուծէր: Ո՞ր կը գտնուի Հայ բանաստեղծութիւնը, ո՞ր փնտռել գոյն իր ժամանակով եւ միջոցով... Հետո՛ւ ենք վերը տուած բացատրութիւններէն:

Մասն վերջին վրայ կը զննմ արդէն ցուցնելու համար կարեւորութիւնը արծարծած հարցիս, որ առանցքը կը կադմէ գրութեանս:



Տեսանք որ բանաստեղծութիւնը լաճալիզէ եղած է միշտ: Անոր Հանգրուանն

է հոն՝ ինչպէս ընկերային ամէն երեսօր-
թի, ուր ժամանակը եւ տարածութիւնը
իրարու կը հանդիպին ժողովուրդին ներ-
կան կազմելով: Որովհետեւ ժամանակը
վերջ ի վերջոյ տեղ մըն է որ կը դան-
ւի եւ շնորհիւ բանի՛ մը՝ որ ժողովուրդն
իսկ է: Կը խօսիմ՝ հաւաքական ժամանա-
կի մասին:

Կը տեսնուի որ այդ է միշտ հո՛ս
իծնորոյ առարկան եւ ոչ՝ անհատակա-
նը՝ որ կեանքի մը տեսողութեան արտա-
յայտութիւնն է՝ զոր կը տեսնէք ձեր ժա-
մացոյցով մարմնաւորուած:

Մեկնելով այս տեսակէտէն, Հարկա-
դրուած ենք ընդունել, որ ամէն ժողո-
վուրդ իր ժամանակով կը տարբերի
միւսներէն: Եւ սակայն, անոր Համար
եւս, երկու տեսակ ժամանակներու առ-
ջեւ կը գտնուինք: Մէկը ա՛յն՝ որուն
մասին անգրագարմայ, որ իրն է՝ ժողո-
վուրդին: Անով է որ կը շարունակուին
անոր աւանդութիւններն ու բարքերը
բայց մասնաւոր մտայնութիւնը՝ որ ա-
նոնց գոյութիւնն ու տեսականութիւնը
կ'ապահովէ: Սա ազգային ժամանակն է
որով ժողովուրդին իւրայատուկ քաղա-
քակրթութիւնը կը յատկանշուի: Այդ
ժամանակով ժողովուրդը կը մասնակցի
իր պատմութեան: Միւսը՝ ձգտում մըն
է նոյնանալու Համար համատարած ժա-
մանակին: Այլ արտայայտութեամբ, դա-
րուն՝ որուն կը մասնակցի ամէն ժողո-
վուրդ: Մարդիկ կ'ազդին ազգային իրա-
կանութիւն մը, բայց կ'ապրին նաեւ գա-
րուն ոգին:

Առաջինով ժողովուրդները կը բաժ-
նուին, կը հեռանան իրարմէ: Երկրոր-
դով՝ կը մերձին, կը նոյնանան: Ժողո-
վուրդի մը վարին խաւերը կամ, ինչպէս
կ'ըսեն, պահպանողական Համարուած
դասակարգը եւ գեղջկական կեանքը յա-
ւազոյնս կը ներկայացնեն առաջինը: Որ-
քան բարձրանանք զէպի Լիթթը այնքան
կը կորսուինք դարուն մէջ իբրեւ իմա-
ցականութիւն, մտայնութիւն եւ բարք:
Կայ նաեւ դասակարգ մը, որ կ'ուզէ
կապելի զանոնք: Մտայնորու դասակար-
գը: Կ'անտեսեմ այս պարագան:

Ազգային ժամանակը օրուան Հարց
մը չէ ոչ ալ դարունը: Անոնք կը կազմը-
ւին աստիճանաբար կամ յատկանշական
երեւոյթի մը յայտնութեամբ, որ զգալի
եւ բացարկի կերպով ազգային գոյու-
թեան ընթացքը առաւել կամ նուազ շա-
փով կը փոխէ, ինչպէս նաեւ դարունը՝
եթէ յայտնուող երեւոյթը համատարած
արժէք մը ունի:

Ճ

Ուրեմն ժողովուրդ, երկիր եւ պատ-
մութիւն (ներկայի պահը՝ ուր անցեալը
կը հանդիպի) միութիւն մը կամ աւելի
ճիշդ՝ ձեռնարկ մը կը կազմեն, որ ար-
տայայտին է ժողովուրդին ո՛չ թէ՛ ֆիզի-
քական, զոնէ այս առթիւ, այլ բարոյա-
կան եւ մտաւորական գոյութեան:

Կը բուէ ուրեմն Հաստատել, որ այս
ձեռնարկը կայ կամ ոչ մեր մէջ՝ Հաս-
տատելու Համար որ կայ կամ ոչ՝ Հայ
բանաստեղծութիւնը, ինչպէս բազմա-
թիւ այլ ընկերային երեւոյթներ որոնք
մաս չեն կազմեր նիւթին:

Եթէ կայ այդ ձեռնարկը պէ՛տք է
բանաստեղծութիւնը վնասել հոն՝ ուր
անով ժամանակաշրջան մը սկսած է մե-
ղի Համար:

Եթէ կայ եւ ունինք երկիր մը, կայ
եւ ունինք Միփուքը: Այս վերջինը, իր
ընդհանուր գոյութեամբ ունենալով մո-
տաւորապէս նոյն ծննդեան թուականը
զոր Հայաստան ունի, կը նմանի իբրև
իւրաքանչիւր գաղութով, անըտ ժողո-
վուրդի մը իւրայատուկ ժամանակով
որ քնականաբար կը տարբերի միւսնե-
րէն: Քիչ մը վերջ պիտի արտայայտ-
ուիմ այս մասին: Բայց բոլոր գաղութ-
ները Հասարակաց շունչ մը ունին իրենց
միջեւ: Անոնց իւրաքանչիւրը կազմուած
է անցեալէն բերուած որոշ չափով դրա-
կան աւանդութեամբ մը, զոր կը շարու-
նակէ իր նորադոյն պայմաններուն եւ
միջավայրին մէջ՝ հետու բուն երկրէն:

Հայ գաղթաշխարհը արշիպեղապոս
մըն է: Յրուած է ան այնպիսի շոր ուղ-
ղութիւններով, շատ անգամ քանակով եւ
որակով իրմէ գերազատ ժողովուրդներու

ծոցին մէջ: Նոյնիսկ եթէ այդ գերազա-
ս»ի պարտական եւս գոյութիւն չունենար՝
չընկալաւոյ ժողովուրդին քանակը միայն
եւ անոր պետականացած վիճակը չէին
կրնար իրենց որոշ դրոշմը չղնել զազու-
թիւն վրայ որեւէ կերպով, գրական թէ
բացասական: Եւ սա եթէ նոյնիսկ դա-
դութը ուզէ որոշ չափով մեկուսանալ
չընկալաւոյ ժողովուրդին ծոցին մէջ՝
կրօնական կամ այլ պատճառներու հե-
տեւանքով: Կարելի՞ է ընդունիլ, որ փոք-
րամասնութիւն մը չկրէ, իրերու իսկ
բերամար, աստիճանաբար, ազդեցու-
թիւնը մեծամասնութեան՝ որուն խառ-
նըւած է ինք, նոյնիսկ եթէ անոր մէջ
որոշ չափով անկախ գոյութիւն մը սու-
նենայ: Անոր ազդեցութիւնը միշտ կը
կրէ բնդհանուր գծերով:

Մենք կը գտնուինք ուրեմն բազմա-
թիւ գաղութներու առջեւ որոնք անդրա-
դարձած պայմաններով կը ներկայա-
նան: Սա է մեր իրականութիւնը՝ Հա-
յաստանի ամբողջութեան կողքին եւ
յ՛լ: Աւելի քան քառասուն տարիներէ ի
վեր մեր գաղութները կազմուած են
տարբեր մտայնութեամբ եւ բարքերով:
Ունինք անոնց մէջ գրականութիւն մը,
հոս բոժմ, բանաստեղծութիւն: Անոնք
իրարու չեն նմանիր երբեք: Անոնք ա-
մէնք ի մի՝ չեն կրնար ներկայացնել
«Հայ բանաստեղծութիւն»ը: Կամ եթէ
նախամեծար կը համարուի, անոնք կը
ներկայացնեն «Հայ բանաստեղծութեան
արդի վիճակը»:

Անոնց միջեւ կայ ոչ միայն միջոցի
կամ հեռաւորութեան տարբերութիւն,
այլ ժամանակի: Անոնք շատ անգամ նոյն
ժամանակներուն չեն պատկանիր:



Գաղութներ ունինք Արեւելքի մէջ՝
Լիբանան, Սուրիա, Պարսկաստան, Թուր-
քիա եւն. եւն.: Գաղութներ՝ Եւրոպայի
մէջ եւ ուրիշներ՝ տարածուած հիւսի-
սային եւ հարաւային Ամերիկա կամ աբ-
լուր: Ո՞վ պիտի կրնար ըսել, որ այս
բոլոր գաղութները նոյն մտայնութիւնը
ունին եւ ստացած են նոյն դաստիարա-

կութիւնը: Բաղդասեցեք անոնց բանաս-
տեղծութիւնները իրարու հետ:

Գաղութներու կողքին ունինք Հա-
յաստան:

Բայց Հայաստան գաղութի մը վի-
ճակով չի ներկայանար մեղի: Ան՝ Մայր
Երկիր է: Հանդամանքները, պայծառնե-
րը, պարագաները այլեւս ամբողջովին
կը փոխուին ամէն բանի համար հոն:
Ընդ որս՝ բանաստեղծութեան:

Հայաստան երկիր մըն է ինչպէս ա-
մէն երկիր որ իր բնակչութիւնը ունի:
Հոն, չենք կրնար ահանել ժողովուրդի մը
մեծամասնութիւնը որ բնականօրէն պի-
տի ազդէր իր մէջ կազմուած փոքրութիւ
գաղութի մը վրայ: Ամբողջ մը կայ հոն:
Ազգային իրականութիւն մը՝ իր պետա-
կան կառուցուածքով եւ ըմբռնութեամբ:
Հայր՝ իր լիութեամբ: Կարծուածէն շատ
ուշի խոր է տարբերութիւնը արիւսքի
եւ Հայաստանի Հայութիւններուն բն-
կերային պայմաններուն միջեւ: Երկու
տարբեր ժողովուրդներու առջեւ կարծէք
կը դրուինք հոս, որքան ալ որ կը փո-
փաքինք դանոնք ի մի նկատել:

Հայաստան իր «այսօր»ը կ'ապրի որ
կը շփոթուի իր «երէկին» հետ՝ ուր
ծնան: Այնքան մօտ են անոնք իրարու:
Բայց կը շփոթուի նաև իր ծնունդով՝
գաղութներու ծննդեան թուականին հետ:
«Երէկին» հետ շփոթուող իր «այսօ-
ր»ով ան կ'ապրի իր «ազգային ոգին»:
Բայց ան կ'ապրի դեռ այդ նոյն «այսօ-
ր»ով՝ «պարուն ոգին»: Որովհետեւ ան
կը մասնակցի անոր պահանջներուն դո-
հացում տուող իր բոլոր արտադրութիւն-
ներով՝ իր գոյութեան յարատեւման: Եւ
արտադրութիւններ, որոնք կը կատար-
ուին դարուն ընծայած բոլոր միջոցնե-
րով:

Ազգային եւ դարուն ոգիներուն հան-
դիպման կէտը կը կազմէ Հայաստանեան
քաղաքակրթութեան արդիական մակար-
կը:



Հակառակ որ երկուորեակներ են տ-
նոնք, Հայաստան եւ գաղթայիստը՝

պէտք էր որ տրամաբանօրէն առաջինը դերակառող դերք ունենար երկրորդին վրայ: Սա ընկերաբանական երեւոյթ մըն է:

Կազմակերպուած էրկիրն է որ կը ղեկավարէ ու կը տնօրինէ: Մայրաքաղաքն է որ պարտադրելի կը դառնայ: Ան է որ կը վերածուի մտաւորական, արուեստի եւ գիտութեան կեդրոնի եւ ուրիշներ կը հետեւին իրեն: Անոր լեզուն է որ կը դառնայ ժողովրդական եւ դժբաղկան: Ելիք համարուած դասակարգն է որ ժողովուրդը կը ներկայացնէ, որ իր կարգին կ'երթայ անոր ճամբէն: Ժողովուրդի մը վերին եւ ստորագիծն է ան լի ճիշդ՝ բառը վերաբերել չթուելու համար - վերին եւ ժողովրդական խաւերուն մէջ ձգողական ուժ մը կայ: Երկրորդը ձգտում ունի առաջնոյն ճամբէն քաշելու, յաճախ զայն կրկնելու եւ կապկելու եւ առաջինը՝ տարածուելու երկրորդին վրայ, ինչպէս նուազանք (սաէրն)՝ անտարբին (քոֆան): Սոսիալիզմը մէկ ուրիշ օրինակն է անոր՝ ինչպէս Ը-ոյ:

Հետեւելով ընկերային այս օրէնքին եւ յարուցած բոլոր հարցերու՝ տեսնենք հիմա թէ ի՞նչ պայմաններու մէջ կը ներկայանայ Հայաստանեան բանաստեղծութիւնը: Յետոյ անցնինք զաղթարձարհեան բանաստեղծութեան: Եւ վերջապէս տեսնենք թէ ինչքան ազդրուած կ'ընայ ըլլալ երկրորդը առաջինին եւ ինչպէս: Կամ այլ բացատրութեամբ մը՝ կա՞յ արդեօք այդ ազդեցութիւնը որեւէ ձեւով, դրական կամ բացասական:

Փխիտփայ, ընկերաբան, գեղագէտ, Հոգեբան կամ դրականագէտ ըլլալու հարկ չկայ: Կը բաւէ որ պաշտպանութիւնը քննութեանց պատրաստուող աշակերտ մը պահ մը դրուի, ընդհանրապէս առանձն, ծանօթ քաղաքակրթութիւններու գրականութիւնէն բերուած բանաստեղծութիւններու առջեւ մէկ կողմէ, ու միւս կողմէ՝ Հայաստանեան բանաստեղծութեան, Հաստատելու համար ակերտի տարբերութիւնը որ կայ անոնց միջեւ:

Անոր առաջին տպաւորութիւնը այդ պիտի ըլլար:

Արդարեւ, բանաստեղծութիւնը Հայաստանի մէջ, իր ընդհանուր վիճակով, այնքա՞ն հեռու է բանաստեղծութիւն ըլլալէ որքան բանաստեղծութիւնը անկէ: Ի զուր չէր որ այս գրութեան սկզբնաւորութեան կ'ընէի թէ ինչ որ համատարած կերպով ճիշդ է իբրեւ ընդունուած իրականութիւն, կը գաղթի ըլլալէ, երբ ուղեւէ զայն կ'երարկել մեր ընկերային կեանքի բոլոր արտայայտութիւններուն՝ որոնցմով բոլոր արժէքները յեղաշրջուած են:

Ձի բաւեր զբանաստեղծութիւն» որակել ամէն ինչ որ բանաստեղծութիւն չէ: Բառը երբեք նոյն նշանակութիւնը չունի զոր կ'ուզեն տալ անոր՝ Հայաստանի մէջ: Մկրտութեամբ մարդ միայն քրիստոնէայ կարելի է դարձնել: Բայց այդքան միայն: Հոն կատարուած աշխատանքով - բանաստեղծական - մենք կը տարուինք շատ նախնական վիճակներու: Աւելի նախնական քան շրջանները աշուղական երկերու՝ որոնցմէ գեղեցկութիւն կը մայթէր:

Ձի բաւեր զգորացումսի մասին խօսիլ, թէ անով կը յորդին Հայաստանեան բանաստեղծութիւնները: Ձգացումը բանաստեղծութիւն չէ, ոչ ալ բանաստեղծութիւնը զգացում: Ձայն կը գտնէք ոչ միայն արուեստի այլ մարզերուն մէջ, այլ անոնցմէ բոլորովին դուրս, ձեր առօրեայ եւ Հասարակ կեանքին իւրաքանչիւր քայլափոխին առթիւ՝ առանց որ ան բանաստեղծութեան նշոյլն իսկ ունեցած ըլլար:

Կաթիլ մը արցունք ամէն տեղ կրնանք տեսնել: Երբէ՞ն ի վեր ան բանաստեղծութիւն նկատուած է եթէ կրնայ բանաստեղծական ըլլալ երբեմն:

Ձգացումը նախնական եւ կենսունակ արտայայտութիւնն է Հոգեկան աշխարհին: Ձայն կը գտնէք կենդանական նոյնիսկ բուսական աշխարհներուն մէջ, իր ամէնէն տարբային վիճակներով շատ անդամ: Ձգացումը կեանքի մը յայտնութիւնն է բայց կեանքը ոչ արուեստ է, ոչ

բանաստեղծութիւն: Որովհետեւ նախնական բարձրագոյն եւ կենսունակը ընկերա-մարդկային արտայայտութեանց վերածուի, անհրաժեշտ է որ զօրացումը միքամորփոյի մը ենթարկուած ըլլայ: Այդ կատարման մէջ պէտք է փնտռել բանաստեղծութեան տանող ճամբան: Բանաստեղծութիւնը գերազանցապէս մարդկային է ընկերութեան բովէն անջած:

Ձի բուռեր ըսել դեռ որ Հայաստանի մէջ բանաստեղծութիւնը ժողովուրդին համար կը գրուի:

Առանց խնդրոյ առարկայ դարձնելու այլեւս դատական դարձած եւ Հին-ցած այս նիւթը, կարելի է սակայն անցողակի բսել, որ ժողովուրդը մը արտաբնապէս առած՝ անօրինակ հաւաքականութիւն մըն է, միակտուր, իր ամբողջութեամբ: Բայց ներքնապէս, ան կողմուած է դաստիարակութեան եւ կրթութեան բազմաթիւ աստիճաններէ որոնց իւրաքանչիւրը իր ճաշակը, հասկացողութիւնը եւ ըմբռումները ունի: Իր պահանջները միջնակէս՝ որոնք իրենց քանակով եւ որակով կը տարբերին միևնորէն: Եւ զոհացման աղբիւրները անոնց՝ որոնք երբեք նոյնը չեն:

Ո՞րն է ժողովուրդը այս դասակարգերէն: Ո՞ւր կը սկսի, ո՞ւր կը դադարի, ո՞ւր աւարտելու համար ան: Բանաստեղծութիւնը հասցի նմանող արտադրութիւն մը չէ որ ամէնուն ուղղուի: Մնաց որ ամէն մարդ նոյն քանակութեամբ հաց չ'ուտեր եւ սքաթիսքի մը անպայմանօրէն ցոյց պիտի տար մեզի, որ անոր սպասումն իսկ դասակարգէ դասակարգ կը տարբերի:

Եթէ Հայաստանեան բանաստեղծութիւնը ուղղուէր ժողովուրդին՝ պէտք պիտի ըլլար ատկից հետեւցնել իսկոյն՝ թէ որքա՞ն կրնար յետմնաց ըլլալ իր Հասկացողութեան, ըմբռումներուն եւ ճաշակին մէջ՝ այդ ժողովուրդը: Բայց չէ՞ որ բանաստեղծն ալ իր կարգին այդ նոյն ժողովուրդին մաս կը կազմէ բանաստեղծ ըլլալէ առաջ եւ անով հանդերձ: Կը սեռնուի որ այս ընթացքով

եզրակացութիւնս ի՞նչ սահմաններու կը հասնի...

Բայց խօսքս բանաստեղծութեան մասին է եւ չիմ ուզեր զայն ընդհանրացնել եւ տալ անոր բացարձակ իրականութեան մը արժէքը: Չաճապարեմ սակայն, սխալ կարծիքներու տեղի չտալու համար: Չարութիւն չկայ դրածներու մէջ ինչպէս պիտի ուզէին ի գին ամէն բանի տեսնել մարդոցմէ ոմանք, կայ լուկ՝ առարկայական տրամաբանութիւն մը: Գրութեան ընթացքին ամէն ինչ իր բացատրութիւնը կը ստանայ եւ հաւանաբար ալ իր մեղմացուցիչ պարագաները որոնք որոշ չափով արդարացում կը նշանակեն:

Հարցը այս բոլորով կը դնեմ միևնոր իր ընկերային գետնին վրայ՝ որովհետեւ նիւթս այդ էր: Ուրիշ եզրակացութեան մը պիտի չյանդէի, եթէ բանաստեղծութիւնը ուզէի առնել ինքն իր մէջ, իրբեւարուեստ: Բայց տարբեր յօդուածի մը նիւթ է այդ: Հոս նիւթէս չեմ կրնար չեզել:

Հայաստանեան բանաստեղծութեամբ, ամբողջական եւ ընդհանուր կերպով առնելու, միջնակայի մը առջեւ կը դանդախնէ որ ամէնուն քով կը յայտնուի նոյն ձեւերով, նոյն զգացական վիճակներով, գրեթէ նոյն մակարդակով, նոյն ներշնչման աղբիւր եղող նիւթերով: Այն սպասողութիւնը կը կրէ մարդ, որ կարծէք այդ միջնակայը եղած ըլլոր համարտարած միօրինակութիւն մը որ կը պարտադրուի ամէնուն՝ չկարողանալ անկից դուրս հլլելու աստիճան: Ամէն ոք կը դրէ նոյն բանը եւ սա՞՝ այնքան շեշտուած՝ որ քննադատ մը կամ պախալորեանի պատրաստուող աշակերտ մը պիտի դիւրաւ ըսէր որ մէկ հոգի միտին գրած կրնար ըլլալ բանաստեղծութիւններու ամբողջութիւնը՝ զոր Հայաստան ցարդ արտադրած է: Կարծէք ամէնքն ալ արտադրութիւնը եղած ըլլային նոյն մեքենային որ կ'արտադրէ սերիով:

Տխուր հաստատում մըն է սա որ ըսել կու տայ ընթերցողին՝ թէ գրողին քով անհատականութիւնը կը պակսի, թէ՛ չի կրնար զանազանուիլ ուրիշներէ: Ը-

սել կ'ուզեմ՝ իր արտագրած բանաստեղծութեամբ իւրայայտուկ կեցուածքը բանաստեղծին՝ իւրաքանչիւր ներշնչման պահուն առջև՝ որով ինք իսկոյն պիտի զատորոշուէր իր նմաններէն:

Ներշնչման ազդիւրներու կամ նիւթերու հասարակաց բլաւը ամէն բանաստեղծի՝ արտասովոր կերպով յատկանշական երեւոյթ մըն է: Երջանակ մըն է դժուած՝ ուր ամէն ոք կը դառնայ հաւասարապէս, մեկնման եւ հասնելիք կէտերը նոյնը ըլլալով: Հայաստան, Հայքիմիք, Երևան, Արարատ կամ Մառիթ, Մայրեմի Լեզու: Կամ առիթներու բերձամբ՝ Մաշտոց, Կոմիտաս, Մայր-Նուզա: Կը բաւէ որ այդ առիթները ներկայանան... ամէնակներով, մահուան կամ ծննդեան՝ ամէն բանաստեղծ անոնց վերայ կը թափի:

Այս է ահա համատարած շրջանակը իր ընդհանրութեան մէջ ուրիշ՝ իր դուրսիցին ու ներկայութիւնը ապահովելու համար, բանաստեղծութիւնը սնունդ կ'առնէ: Կը սկսի ու կ'աւարտի ասոնցմով, միայն կարծէք ասոնցմով (*):

Այս նիւթերը անխոր եւ անվերապահ կերպով բուրբիս համար աւելք քան սիրելի իրականութիւններ կը ներկայագրեն՝ կրօնական հաւատալիքներու համարժէք: Այլամերժօրէն սակայն հեռու՝ անըդհատ, առանց դադարի, յաւիտենապէս բանաստեղծութիւն ըլլալէ, եթէ նոյն իսկ պահ մը բանաստեղծութիւն թուին ըլլալ: Որովհետեւ բանաստեղծութիւնը ստեղծագործութիւն է միանգամ ընդմիջտ եւ ամէն անգամ որ է յայտ կու գայ: Մինչդեռ հոս՝ միայն կրկնութիւն: Եւ

ստեղծագործութիւն մը - եթէ կայ - երբ կը կրկնուի՝ կը դադրի ստեղծագործութիւն ըլլալէ իր կրկնութեան մէջ:

Բանաստեղծութիւնը, ինչպէս ամէն արուեստի գործ՝ ընտելան ու կեանքը կը ստեղծէ նորազոյն հորիզոններու մէջ՝ ուր անոնք չէին կրցած հասնիլ ու պիտի չկրնային հասնիլ առանց իրեն: Բնութեան եւ կեանքին պակասն է զոր կը լլորացնէ ան՝ նոր ստեղծումով: Անտարակոյս՝ հաւաքական արտայայտութեան ընդմէջէն (Րըբրէգաեթասիօն քոլլէթիվ):

•

Այս բուրբ ենթագրել կու տայ, թէ բանաստեղծին կամ ամբողջ Ժողովուրդին համար՝ որուն զգացումներուն արտայայտիչն է ան, մտածման քաղաքու եւ հոգեկան տրամադրութեանց վիճակներ ստեղծուած են՝ որոնցմէ դուրս եւ վեր ամէն ինչ կը դադրի բանաստեղծութիւն ներշնչելէ: Կամ այդ վիճակներէն դուրս եւ վեր՝ մտածումը կ'անց կ'առնէ, որովհետեւ ընդհանրապէս ոչինչ կրնայ հետաքրքրել զինք: Հողին՝ կը դադրի ապրելէ:

Հարցը այս պայմաններուն մէջ ներկայացած, արտաքնապէս, դիտողին համար դժուար պիտի ըլլար անտեղ մտաւոր եւ հոգեկան աշխարհ մը՝ ուր միայն եւ միայն քաղաքալիկ եղած, միօրինակ, փոքրաթիւ ներշնչարան-նիւթեր կը պարզուին: Մինչ բանաստեղծութիւնը համակ ձերբազատում է ամէն կապանքէ, իր հորիզոնը ինքն իսկ ըլլալով:

«Բանաստեղծական աշխարհ» մը ահա, միշտ նոյն յանկերգով որ ուրիշ քան չէ եթէ ոչ, իր ընդհանրութեան մէջ, ինչպէս կը հաստատեն յիշած նիւթերս, հայրենիքն իսկ՝ որուն սէնայոնները կը դառնան իրենք: Ճշմարտութեան աւելի քան մեծագոյն բաժինը կայ հոս՝ որուն բացատրութիւնը դեռ պիտի տեսնենք: Բայց եթէ սա է ճշմարտութիւնը - անկասկած - պէտք է ընդունիլ ուրեմն որ բանաստեղծութիւնը կը շփոթուի, կը նոյնանայ հայրենիքի դադարաբեկ, ի-

(*): Ուրախութի երեւոյթ է նստաստի, որ վերջին շրջաններու ձգտում մը կայ այդ շրջանակը պատուելու՝ ամից դուրս աստիճանաբար տեսնելու նամար՝ որ ներշնչման թոր եօրիզումներ կրճաք բացուի: Աւելի ճիշտ պիտի ըլլար ըսել՝ «այդ շրջանակը պատուելու...» իրերու իսկ բերձամբ:

Պիտի անդրադառնամ ետագայիմ այս կարծիքը ինչպէս մտախնդիր:

բանաստեղծական եւ անոնցմով ծնունդ առնող գործարարներն՝ Հայրենասիրութեան հետ։ Արդ, բանաստեղծութիւնը Հայրենասիրութիւն չէ, նորինսկ եթէ ի սպաս դրուած ըլլալ անոր, ոչ ալ այս վերջինը բանաստեղծութիւն։

Եթէ ասոնք կրնան պահ մը իրարու մերձիլ սա կամ նա առթիւ, սա կամ նա պատճառաւ եւ իրարմով արտայայտուիլ, մին ոտանալով Հայրենասիրական պարտաւորութիւն, միւսը բանաստեղծական շունչ, սա ըսել չի կրնար տալ մեզի որ մէկը՝ միւսն է ընդմիջաւ, որմէ դուրս ո՛չ բանաստեղծութիւնը բանաստեղծութիւն կրնայ ըլլալ ոչ ալ Հայրենասիրութիւնը՝ Հայրենասիրութիւն։ Ամբողջ եղանք այս պարագային կը կայանայ Հայրենասիրական բանաստեղծութիւն մը գրուելուն մէջ ինչպէս պիտի գրուէր սիրայինը, սէրը կամ ազնիւ մը երգելու Համար։ Բայց Հայրենիք կամ սէր, իրենք իրենց մէջ առնուած՝ ոչ մէկ կերպով բանաստեղծութիւն կը բուրեն, այլ անտարբեր ամեն բանի՝ եթէ ոչ՝ շատ շատ իրենց դոյութեան եւ դոճացման։

Ուրեմն կայ աշխարհ մը, աւելին դեռ՝ տիեզերք մը Հաւաքական գիտակցութեան առջեւ (Քոմսիանա Բալլէթիլ) որ ներշնչարանն իսկ է Հայաստանեան բանաստեղծին։ Այդ տիեզերքը՝ Հայրենիքն իսկ է, որ իր ամէն մէկ յատկանշականով կը յայտնէ իր ներկայութիւնը ամէնուհեւ եւ Հետեւաբար բանաստեղծին զիտակցային վիճակներուն մէջ, անընդհատ եւ անվերջ։

Անկասկած որ կարելի չէ խուսափիլ անկէ որ տիրակալն է հոգեկան եւ մըտածման աշխարհներուն։ Կազմած է զանոնք՝ զինք լեցնելով անոնց մէջ։ Անոր յարաբերաբար է որ կը չափուի ամէն ինչ։ Բանաստեղծին շունչը չի կրնար իրականանալ առանց անով արտայայտուելու կամ զայն խորհրդանշող տարրով մը, որպիսին են արդէն իսկ յիշած նիւթերս։

Այս է պատճառը նաեւ որ յաճախ Հայրենասիրութեան ի սպաս դրուած բանաստեղծութիւնը կը վերածուի ամ-

բոխավարութեան, Հակառակ որ ան ի յայտ եկած էր իբրեւ բանաստեղծութիւն։

Հետեւեալ երկու տողերը որոնք ամբողջ գրութեան հետ այնքա՛ն ջերմ ծափեր խլած են ու կը խլեն արտասահմանի մէջ, լուսագոյն մէկ օրինակն է յայտնած կարծիքս։ Զանոնք կու տամ իբրեւ միակ մէջբերում՝ աշխատանքիս ընթացքին։

...«Թէ մօրդ անգամ մտից համեա Քո մայր լեզուն շնորհաւ»

Մեռած է Հոս բանաստեղծութիւնը։ Սո ամբոխավարութիւն կը կուրի, ընթերցողին Հայրենասիրական ամէնէն նախնական զգացումները հրահրելու ծառայող միայն։ Տգեղ է...

Գոհունամ ամամարար այստեղ Հաստատումով մը։

Հալլանիմն է որ կը տիրապետէ բանաստեղծութեան, իբրեւ իրականութիւն։



Բայց բանաստեղծական պահը ամէն պահու է նմանիւր պարզ այն պատճառաւ որ ստեղծագործ է։ Ինչպէս տօնական օր մը երբեք չի կրնար նմանիլ ուրիշ օրերու պարզ այն պատճառաւ որ սուրբ է, սրբաբազան կամ սրբագործ (սաքրէ) մինչ միւսները՝ աշխարհիկ կամ սրբազանց (քրօֆան)։ Տարօրինակ արդարեւ՝ որ բանաստեղծը Հայաստանի մէջ իր գրական գրիթէ առօրեայ դարձած վիճակն իսկ չի կրնար գերազանցել Հաստեղծութեան անոր՝ որուն անունով սակայն կը խօսի։ Բանաստեղծութեան։ Ստեղծագործ պահը չի զանազանութիւն երբեք անստեղծագործէն, ինչպէս կը վերկային բանաստեղծութիւնները որոնց մասին կը խօսիմ։ Մէր փնտուել ստեղծագործութիւնը անոնց մէջ։

Շէնքի մը հիմերը գնելու Համար հոգն է փորուած միայն եւ սա պէտք է ընդունիլ իբրեւ կառուցուած չէնք։ Փորուած մասը - աւելորդ է ըսել - կը դուրսուի հողին մէջ։ Շէնքին կատարը ամբողջ շէնքով՝ հողէն դուրս, արեղակին

տակ՝ դէպի երկինք բարձրացող որ բուրրովին կը պակսի: Հոն է սակայն բանաստեղծութիւնը իր հիմերէն արձակուած:

Ուրեմն բանաստեղծական միջավայր մը ունինք որ «նոյնն» է ստիճանն համար: Այդ միջավայրէն կը ներշնչուի բանաստեղծը միայն աւ միայն սահմանափակ «նոյն» նիւթերով, որոնք բացառիկ կերպով հոն կը գտնուին իրրեւ յատկանշական եւ խորհրդանշանոր: Անոնք «նոյն» արտայայտութեան «նոյն» ձեւերը կ'ուսեն ռադուելու համար ամէնուն հասարակաց «նոյն» ժողովուրդին՝ եմթադիրով որ այդ ժողովուրդը իր ամբողջութեան մէջ «նոյնն» է միշտ թէ՛ իրրեւ տարածութիւն, թէ՛ իրրեւ տեսչութիւն:

Բնականաբար, այս բոլոր զննչները մեզ կը դնեն արտասովոր կերպով ինքնատիպ վիճակի մը առջեւ, ժողովուրդներու զրականութեան պատմութեան արժի՛ւ բաց որ արտասովոր կերպով գուրկ է ինքնատուլութենէ:

Տխու՛ր, շատ տխուր պիտի ըլլար սակիք եզրակացնել որ կենսաբան Հայաստանի մէջ կորսնցուցած է ամէն տիկնամիզով եւ վերածուած՝ ինքրթ, կայական վիճակի մը (սքաթիֆ) որ չի կրնար եզրափակման (էվոլուսիան) իսկ ենթարկուիլ: Նման եզրակացութիւն մը հակադրող բացառիկ կերպով գեղեցիկ եւ կենսունակ ապացոյցներու ջրվէժ մըն է Հայաստանն այսօր:

•

Հայաստանեան բանաստեղծութիւնները զգացական վիճակներու արտայայտութիւններ են, անկասկած: Անոնք մընացած են սակայն այդ արտայայտութեանց նախնական ձեւերուն վրայ՝ որովհետեւ չեն կրնար ձերբապատուիլ, եզրափոխուիլ (էվոլուսիա) զգացական վիճակներու նախնական եւ անմիջական ձեւերէն: Սա յատկանշական պարագայ մըն է: Ըսել կ'ուզեմ որ այդ ըզզնացական վիճակները գոյութիւն ունին իրենց անմիջական շարահայտով՝ կամ

«նիւթով», առանց կարողացած ըլլալու եզրափոխուիլ եւ ստանալ զուտ ենթակայական գոյութիւն մը իրրեւ ապրում եւ գտնաբեր: Անոնք գոյութիւն չունին, ներկայացուած պայմաններուն մէջ, անմիջականորէն իրենց ծնունդ տուող առարկայէն, անկախաբար՝ զտուած եւ բերեղացած վիճակով: Անոնք չեն կըրցած իրենց առարկան կամ նիւթը գերազանցել: Անոնք առարկայական են քան թէ ենթակայական: Անոնք կը կրեն առարկային ծանրութիւնը բայց ոչ ոգին: Անոնք աւելի յուզողական վիճակներ են քան զգացական: Սա պատճառ մըն է իր կարգին, որ անոնք շուտով ամբարձարական արտայայտութեանց վերածուին:

Ուրեմն այդ զգացումները չեն կըրցած բանաստեղծին էութեան մէջ զըտուիլ եւ բերեղանալ իրենք իրենցմով, թօթափել իրենցմէ ինչ որ կայ ծանրութեան անմիջականութիւնն եւ անմիջական ծանրութիւն, վերածուիլ ուրոյն ապրումի՝ որով բացարձակ ազատութեան անձնատուր՝ պիտի կարենային յայտնուիլ իրրեւ նոր ստեղծագործութեան մը աչբերէր արուեստի մը գործին մէջ՝ որ հաս բանաստեղծութիւնն է: Որովհետեւ իսկույն պիտի ստանային արտայայտութեան եւ արտարբման իրենց ինքնուրոյն ձեւը՝ որով միայն իրենք՝ իրենք են, փոխանակ կաղապարուած մնային իրենց ճնիւթով:

Այս է պատճառը նաեւ որ այդ զգացական անմիջական վիճակները արտայայտող բանաստեղծութիւնները՝ մնացած ըլլալով շօշափելի եւ նախնական՝ կը մնան դրեթէ անարուեստ:

Եւ այս բոլորը մեզ կ'առաջնորդեն դեռ շա՛տ աւելի հեռուն, որովհետեւ բանաստեղծութիւնը իր էութեան վստեղութեամբ եւ վստեղութեան էութեամբ իրապէ՛ս շատ բարդ է վերլուծել:

Զգացական վիճակներու արմատաբերութիւնը՝ ինքնին բաւարար չէ ըստ ստեղծագործ արարքին համար: Պէտք է որ անոնք արտայայտութեան ձեւ մը ըստանան ամիստակամութեան մը կնիքով եւ կեանքով: Հոս է որ ի յայտ կու գայ

աղբերգականը: Ողբերգականը՝ զգաց-
կամ վիճակներու արտայայտութեան ձե-
ւերուն: Այլապէս կը մնանք զիւրիկն, հա-
սարակ կամ ամբողջային, մանկուսակ
կամ արդէն իսկ հազար անգամ կոխա-
ուած ճամբաներէ թալոզներ:

Հայաստանեան բանաստեղծութիւն-
ներուն կը պակսի այդ աղբերգականը որ
այլ բան չէ եթէ ոչ տառապամբ փրկ-
ւորութեամբ: Ծնունդի պահը՝ որով ըզ-
րացումը ի յոյս կու գայ կերպարանք
ատած՝ որ չի նմանի որեւէ ուրիշի:
Կ'արժամարնէ, կը պատուէ, կ'ոտնակո-
խէ ամէն արդիւք, որ պիտի ծառանար իր
ծնունդին նորութեան եւ նորութեան ծը-
նունդին առջեւ: Արդիւքը՝ արդէն իսկ
գծուած ճամբաներն են՝ որոնցմէ չ'ուզեր
հոսիլ ուր պիտի կորսուէր: Տառապիլ
այդ բացասական կեցուածքով որ աւելի
քան դրական է յանուն կեանքին եւ ըս-
տեղծագործութեան: Տառապիլ՝ սովոր-
ականը ուրանալու համար, գտնելու
համար իւրապատուկ համբան բանաս-
տեղծութեան ծնունդին:

Իր «ներկայ»ի պահուն մէջ ուր ըս-
տեղծագործութիւնը պիտի կատարուի՝
բանաստեղծը «ամբողջ» մը կը կազմէ -
անհատականութիւն մը բոլորովին ան-
կախ - որ չի կրնար անտեսուիլ համա-
տարած ապրումներու միջեւ: Իր այդ
«ներկայ» տիրապետով է համակ, մինչ ա-
նոնք սքաբիթ վիճակ մը կը ներկայացը-
նեն իրենց առօրեայ եւ յարատեւ գոյու-
թեամբ:

Հայաստանեան բանաստեղծութիւնը
կը դանուի այս վերջնորն մէջ:

Մենք՝ այդ բանաստեղծութեամբ
ունինք զեռ շատ զիւրիկն, սովորական
գրեթէ զերջ մը, որ լուսադոյն արտայայ-
տիչ է անոր զգացական մակարդակին:
Որ ընթերցողին չի տար (ենթադրելով
որ այդ ընթերցողը Հայաստան չի գըտ-
նըիր) իր կարգին՝ դայն հասկնալու
տառապամբիմ համոյքը: Զուրի պէս
դայն կը խմնէ ու այդքան միայն, կար-
ծէք մարդ որեւէ առթիւ կրնայ նստիլ,
զրէջ շարժել, գրել այն ինչ որ իր ձեռ-
քին տակ կու գայ, առանց ամենազոյզն

չափով իսկ իրեն պարտադրելու որ ան
չազրի իրրեւ հեղուկ հոսելէ:

Ճ

Իոյր տուած բացատրութիւններու
մեզ կ'ատաճորդեն կարեւոր հարցումի
մը պատասխանին եւս: Ո'նչ է զիւրքը հա-
յաստանեան բանաստեղծին՝ բանաստեղ-
ծութեան հանդէպ: Ան, կը տեսնուի որ
ուսիլի քան բասիլի է: Համակերպող եւ
համակերպած սքաբիթ վիճակի մը՝ ա-
ռանց որեւէ մտաւոր եւ հոգեկան ընդ-
վզման ընդդէմ անոր՝ որ բանաստեղ-
ծութեան առթիւ բանաստեղծութիւն չէ:
Կը պակսի իրեն անհատականութեան յե-
ղափոխութիւնը, իր իսկ անմին զէմ-
որդէսի մեկնելով իրմէ՝ կարողանայ
հասնիլ Իրեն՝ իրմով լիացած... Ըսել
կ'ուզեմ՝ մեկնելով հասարակ մարդէն որ
ինք է՝ հասնելու համար յատուկ մար-
դուն՝ բանաստեղծին: Ներշնչարան-նիւ-
թերու շրջանակին միօրինակութիւնը,
զգացական վիճակներու նախնական ձե-
ւերը, արտայայտութեան ձեւերու հա-
մանման եւ նոյնը ըլլալը ամէնուն ջով,
վերջապէս զիւրիկն գրեթէ կերպը որով կը
զրահեորուի ամէն ինչ, ամբողջ մը կը
կազմեն, որ մեզ շատ ետ կը տանին մեր
այսօրուան ժամանակէն:

Բանաստեղծը չէ կրցած ցնցուիլ Հա-
յաստանի մէջ, թօթափելու համար իրմէ
այն ինչ որ կուսական է, կրկնութիւն եւ
միօրինակ եւ քաբիթ, որպէսպիսի իրմէ
արձակուի նոր ճիւղեր՝ իրենց վրայ
զարնանային բողբոջներով:

Բնականաբար այս բոլոր խորհրդա-
ծութիւնները կը կատարուին արտասահ-
մանի մէջ ուր կեանքն ու մտայնութիւնը
տարբեր են: Բայց խորհրդածութիւններ՝
որոնք թերեւս խորթ թուին հայաստանե-
ան բանաստեղծներուն: Սորհրդածու-
թիւններ սակայն՝ որ կը կատարուին յա-
րտերաբար բանաստեղծութեան ըմբռ-
նումին՝ զոր կը ներկայացնէ ընդհանրա-
պէս տիրող քաղաքակրթութիւնը:

Թող չզրուին մէջտեղ դասակարգա-
յին խնդիրներ այս առթիւ, թող չըսուի
թէ դրամատիքական երկիրներու տեսա-

կէտներ են ասոնք: Նման պատմութեաներ խուսափողական են բայց ոչ պատասխան: Ընդհակառակն, ոգին՝ որով մօտեցայ նիւթիս՝ յառաջդիմութիւն կ'ենթադրէ, մինչդեռ Հայաստանեան բանաստեղծութիւնը կարելի չէ նոյնիսկ յետադիմականի պիտակին տակ դասաւորել:

Հետագային տալիք բացատրութիւններս լաւագոյնս պիտի հաստատեն դժբանքներու ճշմարտութիւնը:

Հայաստան նոր երկիր մըն է եւ Յեղափոխութեամբ մը իր կեանքը գրեթէ կը սկսի: Ի՞նչպէս այդ ոգին չէ կրցած տարածուիլ որ բանաստեղծութիւնն ալ ինքզինք յեղաշրջէր...

✽

Ընկերային բոլոր երևոյթներուն եւ արտադրութեանց միջև, զորս Հայաստան կը ներկայացնէ այսօր, հակասանքներ կան, որոնք առաջին ակնարկով մը կը խուսափին շատերէ: Պէտք է քննել դանձը, խորատուգուիլ անոնց մէջ, հաստատելու համար իրականութիւնը ինչպէս որ ան կը ներկայանայ:

Հայաստան նոր երկիր է բայց կը ճարտէ: Ազգային հանճարը կոնկրետ չի դիտարուել կրնար կանգնիլ անպամ մը թռիչք առած: Ան՝ նետք մը չէ միայն, այլ շօշափելի եւ մարմնեղէն իրականութիւնը այդ նետքին հոն՝ ուր պետական կազմակերպութեան մը հովանիին տակ ծնունդ առած է:

Ընկերային կեանքի այժմէական բոլոր արտադրութեան միջոցներուն եւ արտադրութիւններուն մէջ հայրենիքը կ'ուզէ անմիջականօրէն այժմէանալ:

Ճարտարարուեստ, գիտութիւն, թեքներէ մէկ կողմէ: Հայաստան աստիճանաբար համարժէք դիրք կը ստանայ ամէնէն արդիական պայմաններով ներկայացած ժողովուրդներուն:

Արուեստի գեանի վրայ ոչինչով ետ կը մնայ ուրիշներէ: Ճարտարապետութիւն, երաժշտութիւն, նկարչութիւն, պար են. եւն. թեւեր առած են:

Բայց տարօրինակ չէ՞ տեսնել որ այդ բոլորին կողքին՝ ճարտարարուեստ, թեքներէ, գիտութիւն՝ մէկ կողմէ եւ միւս՝ արուեստները՝ բանաստեղծութիւնը եւ միայն ան՝ կը կաղայ: Կարծէք իդրած կապ մը գոյութիւն ունեցած ըլլար բոլորին եւ բանաստեղծութեան միջև: Մին՝ նախնական, միւսը՝ արդիական: Եւ սակայն կեանքի նոյն տեսողութիւնն է որ անոնք ունին հաւասարապէս, նոյն թուականն ունենալով յնկերութեան ծոցին մէջ:

Երբ հարցը այս ձևերով կը ներկայանայ՝ կամ այն է որ բանաստեղծութեան մասին մեր ունեցած տեսակէտը պէտք է յեղաշրջել Հայաստանի բանաստեղծութեան մասին խօսուած ժամանակ, որպէսզի կարելի ըլլայ մեզի՝ զայն դասել միտներուն համարժէք, կամ այն՝ որ բանաստեղծութեան ընկերային պայմանները բոլորովին կը տարբերին միւսներէն: Թէ բանաստեղծութիւնը իւրաքանչեւ եւ բացառիկ հող մը ունի իր անմասն համար որ միայն իրեն կը պատկանի:

Անհեթեթ է առաջին պարագան: Երկրորդն է որ մեզի կու տայ, կը թուի թէ բացարձակութեան բանալին: Թէ բանաստեղծութիւնը բոլորովին ուրոյն պայմաններէ կախում ունեցող երևոյթ մըն է, ընդհանուրին ծոցին մէջ ուր կ'անհի միտները:

Որքան ալ որ տարօրինակ թուէր նման եզրակացութիւն մը՝ կը թուի թէ ան է ճիշդը սակայն:

Քննել այդ բացառիկ պայմանները շատ հետունքը պիտի տանք դիտելու: Ամէն ինչ ժամանակի հարց է եւ նման նիւթ՝ նիւթ է շատ աւելի խնամուած եւ լուրջ ուսումնասիրութեան մը քան յօդուածի՝ որքան ալ որ երկարած ըլլայ ան:

Փորձեմ սակայն այս աթիւն ամփոփել տեսակէտս:

ԳՐԻԳՈՐ ՃԻՉՄԷՃԵԱՆ

Փարիզ

(Շարունակելի)

ՀՆԻՎԱՆՈՒՐ ԵԿԵՆՐԿ

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ
(1945 - 1965)**

Ա. ՆԵՐԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Գրականությունը կը նշանակէ գրելու արուեստին սկզբունքները եւ անկէ ծնող պորձերը: գրականութիւն կը նշանակէ մանաւանդ մարդկային ընկերութիւնը արտայայտելու ընտիր ձեւը, այսինքն՝ մտղովորդի մը եւ ժամանակաշրջանի մը գաղափարներուն եւ գիշտութիւններուն հարազատ հայելին:

Այնպէս որ, հեղինակի մը գործը պէտք է ուսումնասիրել իր ժամանակի գաղափարներուն եւ դէպքերուն լոյսին տակ: Այդ գաղափարները ըլլան փիլիսոփայական, քաղաքական, ընկերային կամ կրօնական. այդ դէպքերը ըլլան տնտեսական, կրօնական կամ քաղաքական:

Մինչեւ 20-րդ դարու սկիզբները իւրաքանչիւր ազգային գրականութիւն կ'աւարէր զրեթէ ինքն իր մէջ եւ անոր կրած ազդեցութիւնները կ'ըլլային մասնակի, անկանոն եւ դանդաղ: Այսօր շէնորհիւ փոխադրական միջոցներու արագութեան, շնորհիւ թարգմանութիւններու, մամուլի, հեռատեսիլի եւ աստիճանի՝ ազդեցութիւնները կը գործեն արագ եւ տեւական:

Թողբոյժի մէջ տպուող գործ մը կամ յօդուած մը, գրեթէ նոյն օրը կը կարգացուի Փարիզի, Մոսկուայի, Նիւ Եորքի եւ Պէյրութի մէջ: Բուպացի, Շիլլերի կամ Սենեկայի գրող մը իր աշխարհահայեացքը կը պարտադրէ փեքինի,

Լոնտոնի կամ Հոմի գրողներուն եւ ընթերցողներուն:

Մեր օրերուն, այս պայմանները ծրնունդ տուած են տիեզերական գրականութեան մը, որ կը սնանի ազգային գրականութիւններու հարստութիւններով եւ դիւտերով:

Եւ սակայն, այս հսկայ գետին ազդեցութիւնները կը դնուին ազգային եւ աւաւանական գրականութիւններու կարուածներուն մէջ: Որովհետեւ չի՛ բաւեր կապիւն այսինչ կամ այնինչ համաշխարհային գրողը, չի՛ բաւեր նաւարկել այդ գրականութեան հսկայ հոսանքն ի վար, արժէքաւոր գործ մը տալու համար: Ազգ մը, իր գրականութեան տիեզերական տարողութիւն տալու համար, պէտք է պատուէ անոր օտարէն փոխ առնուած դիւտը, եւ անոր հազցնէ իր ձեռքերով պատրաստուած գլեհոտ մը՝ հիւտուած իր ազգին տառապանքներով, առաքինութիւններով եւ երազներով:

Հակառակ այս տիեզերականութեան, իւրաքանչիւր երկրի գրականութիւնը կը պահէ իր ազգային դիմագիծը, ունի իր ուրոյն գաղափարները, միջոցառում եւ ոճը: Ոչ մէկ գրականութիւն կարելի չէ անշատել իր անցեալէն առանց փոխելու անոր դիմագիծը եւ էութիւնը:

Մեր ընդգրկած շրջանը մաս կը կազմէ 20-րդ դարու գրականութեան: Երկու համաշխարհային պատերազմներ այդ 65 տարիները բաժնած են երեք մասերու:

1900-1919

Կը շարունակուէին մշակուիլ 19-րդ դարու վերջաւորութեան ի զօրու եզոց պաշտօնները եւ տեսութիւնները: Ամէնուն բնարանն է արուեստը արուեստին համար սկզբունքը: Գրողին, նկարիչին եւ երաժիշտին նպատակն է գեղեցիկ գործ մը տայ, արուեստի օրէնքներուն համապատասխան: Նկատի չեն առնիր բնկերային շահերը, բարոյականը եւ ոչ իսկ ճշմարտութիւնը, եթէ անոնք խոչընդոտներ հանդիսանան դործի գեղեցկութեան:

Տիրոջ յատկութիւնը՝ իմացականութիւնն է: Լեզուն կը դառնայ յատկ ու ժուժկալ: Տիրոջ դպրոցները կը կոչուին նոր դասականութիւն, նոր վիպապաշտութիւն, իրապաշտութիւն եւ խորհրդապաշտութիւն:

1920-1945

Համաշխարհային առաջին պատերազմը կը ցնցէ գեղարուեստի այս հոյակապ շէնքը: Եւ սակայն, այս շրջանի դրողները, իրենց ամենայնզուգն արկածանկարութիւններուն մէջն իսկ, կը պահէին, անդիտակցաբար, գեղապետական եւ իմացական արժէքներուն պաշտամունքը: Պատճառը այն է որ, այս շրջանին բոլոր մեծ դրողները կազմաւորուած էին 1914-ի պատերազմէն առաջ եւ կը շարունակէին փառարանել իրենց երիտասարդութեան լուսատեսութիւնը:

Հակառակ ասոր, այդ սերունդը եղաւ փնտռողներու սերունդ մը: Անոնք կը վերադարձին Պղատոնը եւ Արիստոտելը, նոյն ասան կը կը գտնէին Ֆրէժոյտը: Կ'ընդունէին օտարները առանց խորութեան: Ասկէ՝ սակայն պիտի տուած էր իրենց դործը:

Մինչ դրականութեան մեծ դարերը տեսակ մը ճիգերու կեդրոնացման արդիւնքը եղած են, մղում մը գէպի նոյն նպատակակէտը, այս շրջանը, բնականաբար, մեղի կը տայ պատկերը կեդրոնախոյս երեւոյթի մը: Իրաքանչիւր

հեղինակ կ'ուզէ անջատուիլ ընդհանուրէն իր դադափարներով, իր ոճով, իր բառամբերքով: Կը դադրի հաւատալէ մարդկային արժէքներու, - բարոյական, կը բռնէր եւ նոյնիսկ տրուեստ, - եւ կ'ուզէ ընթերցողը զարմացնել իր տարօրինակութիւններով:

1930-ի տեսնական տագնապներէն վերջ կը յայտնուին նոր դրողներ: Տընտեսական փլուզումին կը յաջորդեն քաղաքական պատերազմներ: Քաղաքական եւ ընկերային վարդապետութիւններ աղաւտ հող կը դտնեն շուարած ժողովուրդներու մէջ. կը հիմնուին մենատիրական պետութիւններ, ըլլան անոնք Ֆաշիստական կամ համայնափարական: Ժամանակները մութ են: Հեղինակները կրօնցուցած են իրենց կողմնացոյցը եւ հաս ու հոն կը փնտռեն հիւսիսային աստղը: Ուրեմն պէտք է դործել գտնելու համար լաւագոյն ճամբան եւ մոռնալու համար մղձաւանջը: Այո՛, գործել, բայց ո՞ր ուղղութեամբ եւ ի՞նչ նպատակ համար: Շուարումը ընդհանուր է: - Երկիրը ամայի է, ըսած էր Նիցշէ: - Ճըշմարտութիւնը յարաբերական է, ըսած էր Փափալ ելիք դար առաջ: Բարոյականը կեդրէք է, կ'ըսէ Անարէ ժիտ:

Եւ այս պատր մթնոլորտը աւելի մթացնելու համար կը պայթի Երկրորդ Համաշխարհային պատերազմը:

1946-1965

Քաղաքներ կը քանդուին, երկիրներ կը վերածուին աւերակի, ժողովուրդներ կը քայքայուին այս ընդհանուր սեղանտեսութեան մէջ: Մարդիկ կ'ենթարկուին անասելի տանջանքներու, իրենց դադափարներուն համար. զանգուածներ կը մաքրագործուին ամէնէն արդիական միջոցներով: Նոր հերոսներ եւ սուրբեր կը յայտնուին ամէն օր: Հին կուռքերը կը փշրուին ընդմիջ: Ընթացիկ ցեղեր կը սկսի իր բացարձակ դերակայութիւնը կրօնցնել որչ ջամբամասերու վրայ: Բանականութեան տիեզերականուհոյթիւնը եւ անսխալականութիւնը կը

միտումին ի շահ էրեւակայութեան եւ ներգործութեան: Անհասկնալին եւ անբացատրելին՝ բռնաստեղծութեան ծուծը կը կողմեն: Բնական զգացումները եւ աղբիւրները տեղ չունին այլեւս նոր գրականութեան մէջ: Վէպերու հերոսները անդամ էակներ են, կամ չյարմարողներ ընկերային կարգ ու սարքին: Անոնք մղում կը ստանան իրենց բնազդներէն եւ բախումներ կ'ունենան զիրենք չըլլապատող աշխարհին մէջ աղբոյ բիրտ կամ սպիկար հակներուն հետ: Յաճախ վէպին հերոսը վախկոտ մըն է, որ դատարարութեամբ է աղբիւր մղմանը: Եւ միտումնաւորութիւնը եւ խորհրդաւոր պատիժի մը:

Արուեստը, որ ջանք մըն է դէպի կառարեւութիւնը, ծաղրի եւ անարգանքի առարկայ կը դառնայ: Երազել, աշխատել իրականացնելու համար զիջեցիկ գործ մը՝ դատաւանութիւն է մարդկութեան հանդէպ: Եւ սակէ կը տուժէ լիզուն: Գերբարակայանները կը զործածեն իրենց յատուկ բառամբերը մը, իսկ կարգ մը վիպասաններ իրենց գրիչը կը թաթիեն դռնակութեան կոյտղիներուն մէջ:

Եւ բանականութեան փլուստակներուն վրայ կը ծիւն անիմաստ ալպիւրսը, մըտահոգութիւնը ծնունդ կու տայ անբուժելի անձկութեան:

Առաջին համաշխարհային պատերազմը միայն մարմինները անդամահատած էր եւ վերջացած՝ լուսաւոր վազորդայիններ խոստանալով: Երկրորդին՝ հոգին ալ վերաւորուեցաւ եւ ստացաւ թերեւս անբուժելի վէրքեր: Արդեօք ժամանակ պիտի ըլլա՞յ դարմանելու այս բոլոր աւերները: Բարի կամեցողութիւնը չէ որ կը պահպի:

Այսօր գրողին եւ մտածողին երկու թշնամիները՝ կը կոչուին բանականութիւն եւ արուեստ: Հեղինակին կը մնայ նախնականը, անպաճոյճը եւ ինքնարուեստը արտայայտել: Առանց արուեստի գրուած օրագրի էջ մը աւելի արժէք ունի՝ քան խնամքով գրուած վէպ մը:

Մէկ բան կարեւոր է. ճշմարիտը

տալ իր բոլոր մանրամասնութիւններով եւ արդարութիւններով: Եւ այս ընկերով, ստեղծողարար, գրողը կ'ըլլայ կողմ, կ'ըլլայ աններող իր հակառակորդին, կ'ունենայ ճշմարտութիւն մը որ բոլորին ճշմարտութիւնը չէ:

Ներկայ մարդը որ կործնուցած է ուղղութիւն եւ հաւատք, կը խաբիափէ խաւարին մէջ, գտնելու համար նոր արժէքներ, ալբերու նոր պատճառներ: Եստեղ վերադարձած են հին արժէքներուն, ուրիշներ տակաւին փնտռուող մէջ են: Արդէ միջազգային զրահանութիւնն ալ կը ներկայացնէ նոյն պատկերը:

Յաջորդաբար պիտի տանք այբերենական շարքով ընդհանուր ակնարկներ այն երկիրներու գրականութեան մասին, որ արժանի են յիշատակուելու:

1. ԱՆԻՒԼԻԱ

Շատ դժուար է անբնական գրողները դատարարել ընդհանուր պիտակներու տակ, եւ այդ դատարարման երեւան հանել անգլիական գրականութիւնը ուղղող գրիչները: Գրողները կ'ապրին առանձնացած. եւ եթէ այսօր անոնցմէ շատերը Լոնտոն կը բնակին, այդ ըսել չէ որ մայրաքաղաքը դարձած է գրական կեդրոն մը:

ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՇՐՋԱՆ

1920-1945

Այս շրջանի գրողներէն շատերուն անունին ջով, կարելի էր դնել մակդիր մը: Օրինակ՝ Ժոզէֆ Գոնրատ, ծովայիններու վիպասանն էր. Վէլս՝ տեսակ մը մարգարէ գալիքի տարօրինակութիւններուն. Ռոտտարտ Գիլիլիակ՝ անգլիական կայսրութեան երգիչը. Պէրնար Ծօ՝ կատարի երգիծարան մը:

Բայց ի՞նչ մակդիր տալ ճ. Պ. Փլորիսթիէի մը, ծնած 1894-ին, որ հետապնդելով հանդերձ հակաընկերային բարոյական մը, կը զործածէ արտայայտութեան զանազան մեղեր, դասականէն մինչեւ գերարդիականը: Օրինակ՝ «Անգ-

լիակամ մամրորդուքիւնը՝ ըրժորթատ մթն է. մինչեւ Բարի ընկերները՝ վէպ մը, գրուած կարծես ժԸ. դարու Հեղինակի մը կողմէ: Իսկ «Գաղտնի» ստիկան մը սեղ կ'ուզէ տեսնել յոր տարօրինակ թատերգութիւն մը:

Բանաստեղծութեան մէջ զգալի են ձայնակողմեան դաղափարներու ազդեցութիւնը: Եւ այս դաղափարներուն ազդերը կարելի է գտնել Օքսֆորտ համալսարանի շրջանակներուն մէջ: Առատներ, Սթէֆան Սփէնտրի եւ Լուիս Մաքնէյսի պէս բանաստեղծներու առաջնորդութեամբ, մտքաբխտ տեսակէտները կը հրատարակէ ժողովուրդին՝ հրատարակչ ձեւի մը սակ:

Սնուին, ձորմ Օրվէլ մը, ոչ միայն կը բարոզէ ձայնակողմեան դաղափարներ, այլ կ'ապրէ զանոնք: Կը մասնակցի Սպանիոյ քաղաքացիական պատերազմներուն եւ կը գնահատէ ազատութեան համար կռուողներուն զոհարարութեան արժէքը: Օրվէլ ապրեցաւ 1933-էն մինչեւ 1950:

Պարլի Մորիս, (1894-1958) ինքնատիպ եւ զեղարուեստական ոճով կը ջանար տարածել մեկուսացման փրփրափայտութիւն մը, Հեռու յետագարուած ամբողջութիւն: Կը միացնէր իր դործին մէջ սիրային, դեղարուեստական եւ իտէալիստ փնտռութեան, զերմարդկային ճշմարտութեան մը պայծառութեան մը ընդունումներին մէջ: Զրկուիլ՝ սեփականացներու համար, կը քարոզէր Մորիսին իր երկու զիրքերուն մէջ՝ Արիւր եւ Սփարմն պրաք, որոնք մեծ հռչակ վայելցին օտար շրջանակներու մէջ: Մանաւանդ Փրանսայի եւ Զուիցերիոյ մէջ, Մորիսն կը վայելէր տեսակ մը մարգարէի, աւելի ճիշդը, մտքի վարպետի մը համբաւը:

Լաւրանս նաեւ ունէր իր պատգամը եւ Հետեւորդները: Պատգամը, մարդուն վերակենդանութիւնը բնական ու Հեթանոս կեանքի փառաբանութիւնով Ազատ եւ անկախանդ կեանք՝ մարդուն եւ կենդանութեան: Սակայն իր Լէյտի Զէրվէյի սիրահարը վէպը, այնպիսի ձեւով մը կը

պատկերացնէր իր այս Հեթանոս դաղափարը, որ ընթերցողները չէին կրնար թափանցել մինչեւ անոր խորհուրդը, եւ կը տեսնէին միայն անոր էրոթիք եւ զայն ազդեցութեւնը կրնար:

Ալտրա Զաբալի գինուած վոյթերակուն սրամտութեամբ մը, մեր առջեւ կը պարզէր գիտութեան փառաւոր եւ լեզի պատկերը իր Գոնքրափուրի եւ Ալշարիներու լաւագոյնը դիրքերուն մէջ, նախատեսելով մեր ներկայ եւ գալիք ժամանակներու մեքենայականութիւնը: Սակայն Լուրանսի եւ Զնդկաստանի ազդեցութեան տակ կը ջանար Սոկրիներու խաղաղութեան տիրանալ:

Մինչ հակառակ Հորդոնին վրայ կը բարձրանային նոր աստղեր, նորոգուած դրօշակով մը: Բողոքական Անդլիոյ երկիրներին վրայ կը փայլէր կաթողիկէ վերածնունդը: Փրանսացի ժողովարարները մը ազդեցութիւնը միանալով Զէսթրիթները մը յորդորներուն, մէջտեղ պիտի բերէր ինքնատիպ եւ խորունկ դրօշներու հոյ մը: Վիպասաններ՝ ինչպէս Մորիս Պարիսի եւ Շէյլա Բէյ Սմիթ, պատմամաներ՝ ինչպէս Լիլիթ Պէյրք եւ մանաւանդ քաներորդ դարու մեծագոյն բանաստեղծներէն մէկը՝ Թ. Ս. Իլիոթ:

Իլիոթ, ծնունդով (1888) Ամերիկացի, իր բարձրագոյն ուսումը ստացած է Լարուրա համալսարանին մէջ եւ յետոյ դարձած Բրիտանական քաղաքացի: Իր բանաստեղծութիւնները, իր փորձերը եւ ստամաները, մանաւանդ Սպանիոյ Մայր աճարիմ մէջ, որ կը պատկերացնէ թոճա Պէթթի սպանութիւնը իր երբեմնի ընկեր, Հանրի Բ. Թագաւորի ստիկաններուն կողմէ, զինք դրած էին կաթողիկէ գրողներու առաջին կարգին վրայ: Իր թատերգութիւնները, ունին կրօնական եւ քնարերգական շունչ, հակառակ որ անոնց մէջ պատկերացուած գէպերը առօրեային կը պատկանին: Իսկ իր բանաստեղծութիւններուն ճորտութիւնը եւ կատարելութիւնը նմանը շուրհին անպիտանի ունէ ուրիշ բանաստեղծի մօտ:

1945-1965-ի ՇՐՋԱՆ

Ի վրիթ կը շարունակէ տիրել բանաստեղծութեան վրայ, աւելցնել նոր գլուխ-գործոցներ: Աւերած Երկիրի հեղինակը կը շարունակէ ինքզինքը գերազանցել Մոսկուայի Չորեքշաբթիով: Ան կը շարունակէ կառուցանել իր հոյակապ Մայր Եկեղեցին:

Անդին սակայն տարբեր է պատկերը:

Աշխատաւորականները ջնջելոցին ժառանգական հարստութիւնները: Ընկեր-վարութիւնը հաւատարեցոյ դասակարգային մակարդակը. եւ սակայն իւրաքանչիւր Անգլիացիի սրտին մէջ մնաց անհաւատարութեան դաղափարը, ուրիշներէն տարբեր ըլլալու աւանդութիւնը, մէկ խօսքով սնտալիզմը:

Պատերազմը, հոս ալ քանդեց հին ճշմարտութիւնները: Ինչպէս միւս երկիրներու մէջ, հոս ալ անձկութիւնը պարզեց իր սեւ դրօշակը ուղեղներու մէջ: Մտքերու մէջ, կապած ծնաւ բուր իզուով ներկայացող իրականութիւններու եւ փրկաստիակութիւններու հանդէպ:

Ծործ Օրմիէլ, որ առին մը շփոթած էր համայնագրութիւն եւ պատմութիւն դաղափարները, սկսաւ պատերազմի շրջանին փառարանել հայրենասիրական ըզրացումները իր Անգլիա, ձեր Անգլիան գրքին մէջ: Բայց երբ պատերազմը վերջացաւ, ինքն ալ, շատերու պէս յուսու-խաբ, իր ժամանակը գիտեց յոռետես աչքերով: Անասուններու Ազարակ գրքին մէջ կը ձագիկէ սարսափները եւ բռնակալութիւնը:

Այս քայքայուած եւ յուսահատեցնող համայնապատկերին կարելի է հակադրել Արթիւր Քէօսլէրի գործերը, ինչպէս նաև Ջոյրայցած Երիտասարդներու յայտարարութիւնը: Դժբախտաբար այս յայտարարութիւնը արդիւնք չէր գործադրութեան մը, այլ երկրի մէջ տիրող կացութիւնէն գծագրուած պոթկում մըն էր լոկ:

Աճը ընդգրկած չըջանին գրողները

կրնանք դասուորել հետեւեալ ձեւով: Ընտրանիքին յատուկ գրականութիւն, գարգացած դասակարգի ժամանցի գրականութիւն, եւ ժողովրդային գրականութիւն:

Ա. ԸՆՏՐԱՆԻՒՆ ՅԱՏՈՒԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Առանց հեռուները երթալու ըսինք, թէ այս դասակարգին լաւագոյն ներկայացուցիչները կը պատկանին նախորդ սերունդին: Ըէյմս Ճոյս, որ Իւլիսիս վէպին մէջ մանրակրկիտ ձեւով կը պատմէ Տուալիցիի մը կեանքին քանջըրք ժամերը, ծանրանալով մանաւանդ անոր սեռային գործունէութիւններուն վրայ: Իրարու խառնելով Թագրլէն եւ Ֆրէճոյս: Կոր ճամբայ կը բանայ իր հետերդնե-րուն: Վերծննիս Վուլֆ կը կառուցանէ յանդուզն գործ մը: Աւելի ամօթխածութեամբ, Կրթութեամբ եւ շնորհքով կը նկարագրէ զգայնութիւնները, գաղափարները եւ գրացումները, որոնք չեն չափուիր ժամացոյցին ամէնէն արագ սլաքովն իսկ: Իր կեանքը, իր անձնաւորութիւնը նիւթ հայթայթած են իր գործին: Եւ իր նախատեսութիւնը այնքան զորաւոր եղած է, որ սպառնացող ինչ-յոպարութեանէն խուսափելու համար, անձնասպան կ'ըլլայ ինքզինքը Կետի մը մէջ, 1941-ին:

Ճոյս Քարթ, (1888-1957), շատ ուշ եկաւ գրականութեան, եւ մանաւանդ շատ ուշ ընդունելութիւն գտաւ: «Տաք աարի տրեկայ, ինծի յատուկ ընթերցողներ գտնելու համար», կ'սէր: Ստեղծագործութիւնը Ֆիլիքսական շարժարանք մը եղաւ Քարթին համար: Յառաջացող անհամալուծութիւնը չկրցաւ ընկճել իր կամքը: Իրեն համար շինուած մասնաւոր սեղանի մը կառչած կը գրէր, կը ջանար մեռնելէ առաջ քանի մը տող եւս աւելցնել իր ձեռագրին:

Իր գործերը կարելի է բաժնել երեք պիտակներու տակ. ափրիկեան, անգլիական եւ տեսութիւններ՝ գեղարուեստի մասին: Յիշենք. Սառն, Միսիլ ժողով-

սրն, Լուսնային կլիմաներ, Սարապինի ուրախութիւն մը, եւ Ձիռն երայր: Այս գործերուն մէջ գէպերը երկրորդական են. կարեւորը՝ ստեղծումն է ինքնուրոյն աշխարհի մը, ներքին եւ միասին:

Վիլիլմ Մլմարն, ծնած 1912-ին, վարդապետութիւններէն կը նախընտրէ գեղարուեստականը: Նկատելի է իր մէջ տեսակէտի ինքնուրոյնութիւնը: Օրինակ մտա գործին մէջ, գէպերը զգայացունց են, գտնած եւ բացատրուած սպասու- չիքի մը կողմէ, երբ ան զբաղուած է գե- տինը լուսլու գործողութեամբ: Իր Մար- վինը վէպին մէջ կ'ուսուժնասիրէ նա- խանձը. սափրիչ մը իր նախանձին սեւ մթնոլորտը կը սփռէ իր շուրջի աշխար- չին վրայ: Նեղիկակը կը զգուշանայ մի- ջամտելէ եւ դատելէ, այլ կը կառուցա- նէ իրակոնութիւն մը, որուն աղբիւրը կը գտնուի առօրեայ կեանքի եւ հասա- րակ անձերու մէջ:

Հարրի Կրիմ, - ծնած 1905-ին, - ա- նորը կը ձգէ իր նիւթերուն թեմաները, նա ա ղիչ տեղ կը յատկացնէ նկարա- գրութիւններուն, այլ մեկի մանրամա- նորէն կը հրամցնէ իր Հերոսներուն խո- տակցութիւնները եւ մտքի որոշումները: Իր բով մանրամասնութիւնները ունին մեծ կարեւորութիւն՝ յանկերդ՝ դարձած բառեր, սինկոլներ:

Ստեփան Կարեւորագոյն պատկա- նող կարեւորագոյն գրողը, կին մըն է՝ Այվի Քրմթիւն Պրնէթ, ծնած 1892-ին, որ հակառակ իր տարիքին, կը գտնուի գրականութեան յասակագր գիծին վը- րայ: Կարօտը ունի իր երիտասարդու- թեան աշխարհին, նախապատերազմեան կեանքին: Իր նիւթերը կ'աւանդ բարձր զասակարգի կեանքէն, ուր կը տիրէ բա- րոյական կեղծաւորութիւն մը: Իր ոճը անպաճոյճ է, գրեթէ կմախային, շատ փիչ նկարագրութիւն, բայց անվերջ խո- սակցութիւններ: Եւ այս նկարագրու- թիւններու եւ անմեղ խօսակցութիւննե- րու հակադրութիւնը ծնունդ կու տայ մարտագ մթնոլորտի մը, եւ գէպերը կը զծագրուն մէկը միւսէն տպաւորիչ: դո- ղեր, ոճրագործներ, շնորհներ, որոնք

սակայն յարգուած անդամներն են քա- ղաքակրթուած ընկերութեան մը: Յան- ցաւորներուն համար չկայ ո՛չ արդարու- թիւն եւ ո՛չ պատիժ, կը բաւէ որ անոնք յարգեն անպիղծի օրէնքները:

Այս դասակարգին պատկանող հեղի- նակները կը կարգացունեն միայն համա- լրատրաններու, մտաւորականներու եւ քննադատներու կողմէ: Սակայն հակա- տակ որ անոնք սակաւաթիւ ընթերցող ունին, իրենց նիւթակներ կ'ապահովեն զանազան միջոցներով. կամ կ'ըլլան խոր- չրդատու. հրատարակչական մեծ առա- ներու մօտ, եւ կամ կը վայելեն օժան- դակութիւնը պետական ռատիոկայանին որ կը ձայնասփռէ իրենց գործերը:

Բ. ԺԱՌԱՆՑԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Առաջին կարգի վրայ կու գայ ռատի- կանակաճ վէպը, որ շնորհիւ Քառն Տոյ- լի ստացաւ իր արուեստականութեան թուղ- թերը, 19-րդ դարուն վերջերը: Այդ սե- ուի մշակիները ընդհանրապէս եղած են կին գրողներ: Ակաթա Քրիսթի, որ իր լոն- տոնեան հանդարտ բնակարանէն աշխար- հի չորս ծառերուն կը հրամցնէ սարսու- ցուցիչ եւ հետաքրքրական վէպեր, եւ որ Մէրի Վէստաքոթ ստորագրութեամբ, որ իր բուն անունն է կը զբէ նաեւ հոգե- բանութիւններ վերլուծող գործեր: Յի- շինք նաեւ Տարթի Մէյրս եւ Մէրճըրի Ալիւլմ:

Ժամանցի միպասանները աւելի ճանչցուած են ընթերցողներու կողմէ: Մըմբսէթ Մոլմէն կաթ, ամէնէն ծա- նօթներն են էյիգապէթ Կուճ, Ա. Ժ. Քը- բոնին եւ Տաֆնէ տի Մօրիէ:

Գ. ՄԻՋԻՆ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ ԳՐՈՂՆԵՐԸ

Հոն կը հանդիպինք նաեւ աշխարհա- հրուշակ գրողներու եւ մեծ տաղանդնե- րու: Կան վիպասաններ, նորաձեւ գրող ներ, թատերագիրներ եւ բանաստեղծ- ներ: Պէյքս, որ պատմական եւ ընկերա- յին հարցեր շօշափելէ վերջ, կը վերա- դառնայ բնութեան եւ զգացումին: Բէթ-

րին Մէնսֆիլտ, զգալուն եւ մեղամտազան, չեխովեան երանգը զարգացուց Անդրիոյ մէջ:

Էլիզապէթ Պոլրն, ծնած 1899-ին, որ իր վէպերուն մէջ կ'արտայայտէ զբարեացած յուզականութիւն մը: Ողբերգութիւններու հետեւանքները միայն կը պատմէ մեզի, որպէսզի դէպքերը չկորսընցնեն իրենց բանաստեղծական եւ մեծաբային մթնոլորտը Գործեր՝ Գաշինէ Սասնայիմ հետ, Աւերակ սրտեր, Էմբլին:

Ռոզմըմա Լէնամ, ծնած 1906-ին, կը օրէն թափանցել կենդան հողինքէն ներս: Իր դործերը Վալտի հրատերը, Զայնամիշը, Պալլատը եւ Ալքիւրմեր:

Նիքել Պալլին, ծնած 1908-ին, հողերան, դնող, կը շարունակէ մեծ ճարտարութեամբ մեզի հրամցնել հետաքրքրական վէպեր, ուր կ'ուսումնասիրէ խեղճութեան աշխարհը մինչև յետին սահմանները: Յիշիք Ընտելացած մտեր, Սեփական դախիս, Սու, Սեփա Պորմիս:

Հարրիէ ծնած 1895-ին, կը դիտէ աշխարհը յուշումով: Իր վէպերուն հերոս ընտրած է ընդհանրապէս մանուկները: Եւ անոնց աչքով դիտուած պատկերները կը ստանան դոյն, դեղեկութիւն, տարօրինակութիւն:

Ինչ որ տարօրինակ կը թուի մեզի, այն է որ, ներկայ սերունդը չէ սուած երդմտարանութեան վարպետներ: Վերջին դէպքերը այնքան մտախուզ սքիւտած են ուղեղներու վրայ, որ անդիական աւանդական ելուտը խեղդուած է ախրութեան մոխրագոյն ծովուն մէջ: Այդ ելուտը նշմարելի է միայն Փիթըր Ուսթինովի Փիլմերուն, եւ Թէրէնս Ռաթկանի փիլաներուն մէջ:

Հունձքը աւելի առատ է արկածախրմարական եւ գերբնական մարգերուն մէջ, ուր կը փայլէ կրէյնը կրիմի աստղը:

Կրէյնը կրիմ; ծնած 1904-ին, նախ սուած է ժամանցի վէպեր. Վալտի նախարարութիւնը եւ վարական սպաննիչը: Իսոյց էթէ դարձած է աշխարհահրու-

չակ եւ դարուս մեծագոյն գրողներէն մէկը, այդ կը պարտի իր հետեւեալ երեք վէպերուն. Պրայքլնի ժայռը, Զորութիւնը եւ փառքը եւ Խնդրիմ խնդրութիւնը, ուր գեղազիտական դարձուածքներով մեզի կը հրամցնէ կրօնական եւ բարոյագիտական փնտասուքներ: Կատարած ըլլալով իր տուրքը քրիստոնէութեան, Կրիմ կը վերադառնայ արկածախրնդրութեան եւ պատերազմի աշխարհին: Շատ համոզարտ Ամերիկացիմ, Հաւանայի մեր գործակալը եւ Երրորդ մարդը շատ բուն չեն աւելցներ իր արժէքին եւ համբախն:

Լուրանա Տիւրիլ, ծնած 1912-ին, իր հերոսները կը պտտցնէ Միջին Արեւելի դանապան շրջաններուն մէջ, կեդրոն ունենալով Աղեքսանդրիան: Ընդգրկած մեթոտը կը յիշեցնէ Փրոուսթը, Պէրկսոնը եւ կամ ձոյսը: Իր վէպերը կը կոչուին՝ Ժիւլիան, Պաղտասար, Գլխա:

Էնկլա Վիլսոն, ծնած 1913-ին մեզի կը հրամցնէ արդի անդիական ընկերութեան կծու երգիծանքը: Եւ սակայն կ'աշխատի լաւատեսութեամբ իր վէպերուն: Էմիլ Զոյայի աղբեցութիւնը զգալի է իր գործերուն մէջ, բայց ունի կըտոյթի եւ կըտոյցի շատ արդիական դադարները:

Ինչ որ ալ ըլլան իրենց հակումները, այս բոլոր վերը յիշուած գրողները, կապ մը կը պահէին աւանդութեան հետ, երբ յանկարծ երեւան եկաւ գայրացած երիտասարդներու խումբը: Ասոնք կը տառապէին դարուն հիւանդութենէն, զբոսնէին քաղաքական եւ ընկերային կաջութիւնէն, ըլլան անոնք աջակողմեան թէ ձախակողմեան: Ասոնց պոռթկումը անընկատ շահցաւ, որովհետեւ իրենց շարքերուն մէջ կային արժէքաւոր եւ խոտարմնալից գրողներ, ինչպէս Տորիս Լըսինկ, Իրիս Մըրտոք, ձոն Պրէն, կը ջանային ունենալ իրենց հանրութիւնը եւ ոչ թէ աւանդապաշտ, կեղծաւոր եւ նեղմիտ բնութեցողներ:

Ասոնց շարքերուն մէջէն է որ պետի բարձրանան Անգլիոյ ապագայ մեծ գրողները: (Շար.) ՆՈՒՊԱՐ ԶԱՊԵՆՈՒՏԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՆԾ ՓԻԹՐ ՎԻՐԷՃԻ ԴԱՍԱՌՈՍՈՒԹԻՒՆԸ

ՄՐՏԵՐՈՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ՄԸ

Պէջրութի Ամերիկեան Համայնարանի շրջանաւարտներու ակումբին մէջ, 3 Յունուար 1966-ի իրիկունը, ժամը 7-30-ին, ամերիկացի բանաստեղծ Փիթըր Վիրէջ, միաժամանակ պատմութեան դասախօս Մաունթ Լոյիսը Համայնարանին, (Մասաչուսէթ՝ Ամերիկա) մօտ մէկ ժամ տեւող դասախօսութիւն մը կու տար սրտերու յեղափոխութեան մը մասին, որ տեղի կ'ունենայ ներկայիս աշխարհի մէջ, եւ կարելի կը դարձնէր սահմաններու վրայէն, երկաթէ կամ այլ վարդադրանքներու վրայէն ձեռք երկարելը, երիտասարդ ու հոգիներուն մէջ ծարաւ ու նեցուղ սերունդներու:

- «Յեղափոխութիւն մը տեղի ունենալու վրայ է ներկայիս Սովետ Ռուսաստանի մէջ, - կ'ըսէ Փրոֆ. Վիրէջ, հանդարտ ու կէս մը զուարթ ձայնով, զգացընելու համար թէ քաղաքական դասախօսութիւն մը չէ իր տուածը, այլ զբոսական, արուեստագէտի մօտեցումով զեկուցում մը պատահաներու, որոնց ներկայ եղած է ինք, զբնթէ մասնակից՝ հօգիտով, ու խանդավառ՝ մտքով:

«Յեղափոխութիւնը, որուն մասին կը խօսիմ, քաղաքական չէ, կ'ընդգծէ դասախօսը, այլ հոգեկան, ներքին յեղափոխութիւն մըն է»:

«Արդիւնք է դժգոհութեան, ձանձրոյթի: Երիտասարդ սերունդ մը դժգոհ է դադափարարանութիւններէն, ինչպէս նաեւ մեքենակոնսցումէն մարդուն, եւ բողոք ունի ընդդէմ անդիմադրելի տիրութեան: Մարդկային ապրում մըն է,

եւ մարդկային պահանջն է, որ ալիքաւորութեան է ուսական տարածքի մէկ ծայրէն միւսը»:

«Մարդկութեան ոչ շատ յառաջդիմած մասը, այն մասը, որ տնտեսական զարգացման կարիք ունի, գիտեմ, կը ձգտի Թեթրոնիկոնի շնորհիւ ազատագրուիլ տնտեսական ճնշող պայմաններէն. պէտք է անդրադառնալ սակայն, որ այդ տնտեսական ազատագրումը ձեռք բերելէ ետք, պիտի ստիպուիք ուրիշ պայքար մը մղել՝ պայքար, ազատուելու համար այս անգամ Թեթրոնիկոնի: Մարդոց ամենազգալունները, ըլլայ Ամերիկայի մէջ, ըլլայ Սովետական Ռուսաստանի, ներկայիս այդ ձգտումին մէջ են, այդ ուղղութեամբ յեղափոխութիւն մը առաջնացնելու վրայ են. գրականութեան ու արուեստի յառաջապահ սերունդն են անոնք»:

«Պայքարը ծանօթ տիքիադորի մը դէմ, որ մարդ մըն է, գիւրբին է համեմատաբար, զիտե՞ս թէ ով է թշնամիդ, ո՞ւր է թշնամիդ, ի՞նչ կ'ուզէ թշնամիդ: Պայքարը գծուարին կը դառնայ երբ թշնամին չ'երեւիր, չկայ. իսկ մեքենականացումը կեանքին, ԱՆԱՆՈՒՆ ԹՐԾ-ՆԱՄԻՆ է ՄԱՐԴՈՒՆ»:

«Կրնայ պատահիլ որ Սովետական Ռուսաստանի մէջ տեւի մեծ փոփոխութեան, կամ մինչեւ իսկ քաղաքական ազատութիւններ առաջանան: Մշակութային եւ քաղաքական ազատութիւնները կրնան միասին ընթանալ, Ռուսաստանի մէջ սակայն պայման չէ որ երկուքը միա-

ս)Ա ընթացման: Ներկայիս այնտեղ դո-
յուսթրին ունեցող ազատութիւնները քա-
ղաքական շին, այլ անհատական կեան-
քին մէջ ձեռք բերուած ազատութիւն-
ներ են: Ըմբոստութիւնը, որ կ'արտա-
յայտուի նոր սերունդի բանաստեղծնե-
րուն մէջ, ԱՆՀԱՏԻՆ ԸՄԲՈՍՏՈՒԹԻՒՆՆ
է, անհատի ոչնչացման, մեղենականաց-
ման դէմ»:

«Այս ըմբոստացումը իբր կը միա-
ցընէ Ամերիկայի եւ Ռուսաստանի բա-
նաստեղծները: Տարբերութիւններ կան
անշուշտ, եւ մեծ են. Փուշկինէն ի վեր
բանաստեղծները Ռուսաստանի մէջ, ազ-
գային զիտակցութեան ներկայացուցիչ-
ներն են. Ամերիկայի մէջ՝ ոչ»:

«Ի՞նչ բանի պիտի ծառայէ մաթե-
րիայի դժի տիրապետութիւնը, երկու եր-
կիրներուն մէջ ալ: Ենթադրենք որ նաեւ
Սովետական Ռուսաստանը տնտեսապէս
ամերիկեան մակարդակին հասաւ, ի՞նչ
ձեռք պիտի բերուի, հեռատեսիլ մը,
կամ սիւսքը մաթքէթ» շուկայ մը...
Թեոթոյ»:

«Ըմբոստութիւնը ատոր դէմ է, ըս-
տեղծաբարձ հրեւեակայութեան ըմբոս-
տութիւնն է նիւթին դէմ: Երկու երկիր-
ներուն մէջ ալ, երիտասարդութիւնը
կ'արթննայ ազատ կեանքի ըմբոստմին:
Զգացումներու դաւադրութիւն մը կայ,
որտեղու դաւադրութիւն մը աշխարհի
բոլոր բանաստեղծներուն մէջ»:

Բանաստեղծ դասախօսը մոռցած է
ինքզինքը, դասախօսութեան ձեւական
կողմէ, եւ կը խօսի այլեւս ինքնիկ ձե-
ւով մը, տաք, վարակիչ, համոզուած:
Մոռցած է իր գտնուած սրահը, երկիրը,
ժամը, ու փոխադրուած է մոլորով, կը
ցլացուի ատկա իր նայուածքէն իսկ,
դէպի հեռու որ սթեփները Ռուսաստանի,
կամ ամերիկեան տարածութիւնները, ուր
մարդիկ կը ծնին, կ'ապրին, կը մեռնին,
ու կը փնտռեն շարունակ, կը փնտռեն
ուրախութիւնը մարդկային, երջանկու-
թիւնը անհատական:

«Զգացումները որ կ'արտայայտուին
կրնան ըլլալ ոտմանիք, սակայն պիտի
չհասնին սաղայէլական վերջաւորու-
թեանց, ինչպէս եղաւ Գերմանիոյ մէջ,
Վակնէրեան ռամանթիզմը: Որովհետեւ
գերմանական ռամանթիզմը առանց բարո-
յազիտական մտահոգութեանց էր, իսկ
այսօրուայ ռամանթիզմին զուգահեռ կը
քալէ բարոյադիտական պահանջը»:

«Նոր սերունդի ըմբոստացումը կազ-
մակերպուած մարդու տիպարին դէմ
է, ըմբոստմին դէմ՝ որ մարդը կը տես-
նէ դուրսէն, որպէս կաղապարելի էակ,
ըստ յատակազիծներու կառուցելի արա-
րած, փոխանակ զայն տեսելու ներսէն՝
որպէս տեսական փթթումի մէջ եղող,
ինքնաբեր մղումներով առաջացող, աս-
րումներու տէր էակ»:

«Եթէ երկու երկիրները համեմատու-
թեան մէջ դնեմ, քաղաքական դեանի
վրայ, կամ վարդապետական, ես գիտեմ
թէ իմ համակրանքս ուր է: Սոկրատէս ան-
կէ դուրս բան մըն է փնտռածս, հոգե-
կան բան մը, զարտերու քաղաքավարու-
թիւնն մը, զարտերու արձագանգումն մըն
է փնտռածս, որ ես գտայ, օրինակէ հա-
մար, հայկական գիւղի մը ազաբակին
մէջ, կամ Սամբրոյանտի մէջ»:

«Երկու երկիրներուն մէջ ալ աշխար-
հը պիտի բարձր աշխարհի մը վերածելու,
մարդը մեղենականացնելու ձգտում
մը կայ, որ ընդվզեցնող է: Երկու եր-
կիրներուն մէջ ալ ըմբոստացում մը կայ
մարդը ընկերային միտքերի մը վերածն-
լու ձգտումին դէմ»:

«Ես լուստես եմ արդիւնքին մա-
սին. ոչ որովհետեւ հաւատք ունիմ սո-
վետական կառավարութեան, կամ պիլ-
լոսթրաիին վրայ, այլ որովհետեւ կը
կը հաւատամ որու ժողովուրդին. ինչ-
պէս իհրէնպոլի կը վկայէր, որու ժողո-
վուրդը հասունցած է այլեւս»:

«Մարդկութեան համար իտէլալ ա-
ռաջնորդներ չեն մնացած, այլ կաղմա-
կերպութիւններ են որ կ'առաջնորդեն:
Անհասական յարաբերութիւնները պակ-
սած են, վերացած են. կարելի չէ ղեկա-

վարը սիրել կամ ասել, որովհետև դե-
կավարը այլևս մարդ մը չէ, այլ մար-
մին մըն է: Ինչպէ՞ս կարելի է ասել կամ
սիրել կոմիտէ մը»:

«Արդի՞նք... Երիտասարդութեան
անջատումը ընկերութենէն: Մենք կոր-
սընցնելու վրայ ենք երիտասարդութիւ-
նը: Պարագութիւն մը կայ, որ պէտք է
լեցնել նոր, մեքենականացման արտա-
պետութենէն ետք եկող նոր իւրով մը:
Քրիզը, տազնապը որ կայ, շարունակա-
կանութեան բացակայութեան տազնապն
է: Ընդհատում մը կայ մեր կեանքին մէջ,
բաց մը. այդ իսկ է տազնապը»:

«Բարեբախտաբար նոր սերունդը
ինքը ժխտականները դրականի վերածե-
լու ճիգին մէջ է: Հաւատք չունի ան
աստուածներու, չի հաւատար նաեւ վար-
դապետութեանց. իր մերժումին մէջ,
այդ երկուքը փոխարինող բան մը կը
փնտռէ, ու գտած է զայն՝ ԱՄՆ-ը»:

«Յուզիչ է տեսնել հազարաւորներ,
որոնք ուսու բանաստեղծներու բանաս-
տեղծութեանց ընթերցումին, կամ ար-
տասանութեան ունկնդիր են, յուզումով
մտիկ կ'ընեն, կ'արտասուեն նոյնիսկ.
կամ կը ծափահարեն մեզի, ամերիկացի
բանաստեղծներու, երբ ելթուչէնքօ,
մեզ ճանչնալով առաջին շարքին վրայ
նստողներուն մէջ, մեր անունը կու տար:

Սուրբ արուեստը միակ միջոցն է դար-
ձած հոգեկան պահանջներուն գոհացում
տալու համար, այդ ճամբուն վրայ է որ
նորասեր սերունդը, երկու երկիրներուն
մէջ ալ, իր պայքարը կը մղէ»:

«Կրնայ պարտուիլ անկասկած, չը-
կայ սակայն աւելի պատուաւոր ու մե-
ծարժէք պարտութիւն: Միայն նման փո-
քրր ու բազմաթիւ պարտութիւններով է,
որ կարելի կը դառնայ մարդկային ըս-
տեղծագործ մտքին վերապրումը»:

«Անհատը կրնայ պարտուիլ, սակայն
ոչ նման սքանչելի դատ մը»:

Մափահարութիւնները երկար կը տե-
ւեն, բանաստեղծ ու փրոֆեսէօր դասախո-
սը յայտնապէս յուզուած է: Մարդկա-
յինի իր պահանջին գտած արձագանգու-
մը կ'ուրախացնէ զինք:

Մարդկայինի ամէն յաղթանակ կ'ու-
րախացնէ, վատտօրէն, ամէն անսնք ո-
րոնց հոգին տեւարար ձգտումի մէջ է,
փնտրուքի մէջ է նիւթէն ու բառերէն
վեր եղող ներքին, իրական, մնայուն
արժէքներու յայտնաբերումին, ու պահ-
պանումին, որպէս մարդկութեան ուղե-
ցոյց փարոս:

Բ. Փ.

«ԲԱՐԵՑՈՒՍՈՑ ԶՐՈՒՅՑՆԵՐ»

«ԲԱՐԵՑՈՒՍՈՑ ԼՐՈՒԱՆԿԱՆ»

«Թագին», իր հրատարակութեան առաջին օրերում հաստատեց զրոյցներու գրութիւն մը, որ կը շարունակուի կանոնաւոր կերպով, 16 օրը անգամ մը: Այս տարի տեղի ունեցած են արդէն շարքին մաս կազմող զրոյցներէն հինգը՝ «Բարեյուսոյ հրումնադան», «Այծնատար», «Ի՞նչ կը սպասուի գրական համդէտ մը». «Բազարան» եւ «Էսթէն Խանէսոյի մտածումները քատրոնի մասին» գիրքերուն ու հարցերուն շուրջ:

Առորի կու տամք Եզ. Պոյամեանի «Բարեյուսոյ հրումնադան» (Ար. Ալիեան) մասին կարդացած գեկոյցը եւ այդ առիթով տեղի ունեցած զրոյցին ամփափումը: Յարցողով՝ «Այծնատար»:

Մէկ շունչով պրուած եւ 100 էջերու վրայ տարածուող ընդարձակ բանաստեղծութիւն մըն է զոր կոչուած ենք մեր դրական զրոյցին նիւթ ընելու եւ քննարկելու: Գրքոյկով լոյս տեսած այս բանաստեղծութեան հեղինակը, Արբաշամ Ալիքեան, նախկին ճեմարանական մըն է, ձեռի հայրենազարմի օրերուն Պէյրուսէն Հայաստան մեկնած, անկէ ալ Մոսկուա անցած, ուր կը մնայ մինչեւ այսօր: Հիմա, Մոսկուայի մէջ, Ալիքեան կը գրադի եւ իր հացը կը վաստկի թարգմանական ընթացիկ աշխատանքներ կատարելով: Ան ասկէ առաջ Հրատարակած է բանաստեղծական քանի մը գործեր եւս — «Հորիզոն» (Պէյրուս, 1947), «Կանաչ Մօսկով» (Երևան, 1959), ՀԱՏԸՆՏԻՐՆԵՐ (Խուսերէն):

Իրքին Անունը.— Աշխարհադրական քարտէսէ բերուած անուն մըն է զբքին խորագիրը: «ԲԱՐԵՑՈՒՍՈՑ ԼՐՈՒԱՆԿԱՆ»ը՝ Քափ տիւ պոն էսփերանսն է, Ափրիկէի Հարաւային ծայրը, որ իր անունին եւ իր տեղին կապուած պատմական դրուագէ մը դուրս՝ դուռ ծոփագրական տեսակէտով, վհատութեան հրումնադան պէտք է կոչուի, իր սուկալի ալեկոծութիւններուն եւ տեսարար փոթորակոյցը վիճակին պատճառով:

Յուսադրական այդ խորագիրը դրուած է, հաւանաբար նկատի ունենալով Երևանի Մետրոպ Մաշտոցի տնուան սքանչելի Մատենադարանը, ուր եկած եւ փրկուած կը թուին այլեւս Հայոց մեծ մատենապետութեան վանճր կազմող երկերն ու ձեռագիրները: Արբաշամ Ալիքեան իր ներշնչումն ու քերթողական թուփը ստած է Մատենադարանէն եւ անոր պարփակած դիրքի անդուգական հարբատութենէն: Անդուգական՝ ի հարկէ Հայրենու համար:

Թե՛ՄԱ.— Բանաստեղծին ամբողջ ճիւղը եղած է՝ տալ մասամբ այն ողբերգական պարագաները, որոնց մէջ ապրած եւ, իբրեւ հոգեւոր ու դադափարական էակ, ստեղծագործած է Հայը. տալ, յատկապէս, զոչոգութիւնները, որ յանձրն առած է ան, փրկելու համար իր հոգեւոր վաստակը բարբարոս ցեղերու հակամարդկային եւ հակամշակութային վայրագութիւններէն: Յայտուն դարձընել՝ Հայ մարդուն եւ Հայ գիրքին ապրած զոյգ ու զուգահեռ տղամը Հայաստանի հողին վրայ: Այս զրքոյկով՝ Մեծ Եղեռնի օրերուն Տարսի աշխարհին մէջ պատահած անլուր կոտորածէն սրբազան գիրք մը՝ ՏՕՆԱԿԱՆը, այլ խօսքով կարծեմ ՃԱՌԸՆՏԻՐը փրկելու խորագէտ

յուզիչ գրուագն է որ կ'ողկոչուի: Եւրօպական հսկայ գիրքը կ'իսուած նետուած է վանքի սայլաստակին, երբ երկու Հայուհիներ, Հայուհի եւ Հոգիւհի մէ, իւրաքանչիւրը անոր մէկ կտորը տուած, կը տանին իրենց հետ, հետու, զըտուար ճամբաներէ, ահարը քաղցերու եւ վտանգներու մէջէն, գէպի Արարատ, գէպի ուր կը կատարուի իրենց զարհուրելի փախը:

Արդ, Ալիքեանի թեման ուրեմն՝ Հայն է եւ անոր գիրքը: Երկու հիմնական եւ հին գեղեցկութիւններ, որոնք երկու հին ողբերգութիւններ եղան նաեւ, Հայաստանի անուանին գրուած: Կրցած է բունաստեղծը վերապրիլ իսկապէս եւ սալ այդ իրարու վրայ գումարուող երկու յետնուած ողբերգութիւնները, որոնք, ըսինք վերը, կը քալեն քով քովի, գիրար պայծառացնելով ու շնչելով շարունակ, գիրար աճեցնելով միմեկու վերջին իրենց բլիթը մեր հոգեկան պատուանին վրայ: Կա՞յ աւելի կոտորացող ցաւ քան կոտորուելու ընթացքին՝ Հրկիզուիլը անսնել նաեւ քու եւ ամբողջ ցեղիդ հոգեւոր գոյութեան, երբ մարդակերպ արարածներ թշնամի կը դառնան ու կ'ուզեն ջնջել քու տունիդ մէջ իսկ, գոյութեանդ բոլոր տեսակի հետքերը, - մարմնական, զաղափարական ու հոգեկան: Իւզէն ու ցորենէն առաջ, ձեռագիր փախցուց Հայը, ստոյգ գիտնալով կարծես, որ այդ երկու թանկեր կրնայ ճարել որեւէ տեղ. ձեռագիրը սակայն գերազանցապէս Հայրենական պատու է, Հայրենիքի թանձրացեալ լոյս. այդ լոյսով եւ այդ լոյսին բոլորովին հարազատ ջերմութեամբ պիտի տաքցնէր ան օտարութեան իր ցուրտ պանդխտութիւնը: Իր ձեռագիրներուն գոյութեամբ ու ճառագայթող ներկայութիւնով՝ պիտի պայծառանար Հայաստանցի մարդու իր ստորագիր անձը, անզեղեցիկ ժամանակներու մասախուղին ու մութին մէջ:

Յը Հաստատենք, ուրախութեամբ, թէ երէկուայ Հայրենազարժ տղան, Արարատ Ալիքեան, պարզ սկսնակ մը այդ

օրերուն, իր ներկայ գրքոյկով հաւատարմորէ կու տայ, որ ինք, իրրեւ բանարուեստի երիտասարդ մշակ, ի վիճակի է այլեւս գրելու հայ բանաստեղծութեան վարպետներուն լրջութեամբ ու հոգիով: Թէ այդ ուղղութեամբ ունի՞ արդէն հարկ եղած տաղանդն ու պատրաստութիւնը, արտայայտութեան լեզուական ու ստեղծական միջոցները: Ունի՞ մանաւանդ՝ գործին ընդհանուր կառոյցը վեր բունող ներքին իրաւութիւնը: Ալիքեան, ոչ մէկ կասկած, կրցած է տիրապետել նիւթին, մեր խոր համոզումով: Յաջողած է, նախ հոգեկան իրաւութեամբ եւ ապա արուեստի զանազան տարրերով՝ նուաճել զայն: Բանաստեղծութեան մէջ, հոգեկան խզումը ժամանակէն ու չըջապատէն եւ ինքնափոխադրութիւնը ուրիշ ժամանակի մը եւ ուրիշ շրջապատի մը մէջ, անհրաժեշտ նախապայմաններէն մէկը բլաւով՝ Ալիքեան կատարած է այդ նախապայմանը եւ կրցած է հետեւաբար վերակենդանացնել սիրելի անցեալ մը, շրջիլ անոր մէջ տեղացիի ու ժամանակակիցի բնականութեամբ, հետզհետէ մեզ եւս քաղաքացին ընելով այդ անցեալին ու այդ պայմաններուն: Մթնոլորտ ստեղծելու այդ շնորհքը Հաստատան աստիճանին, որ ես պահ մը մտածեցի թէ Արարատ մը ծնողական գծով Տարօնի՞ աշխարհէն է արդեօք: Զգիտանալի տարիքը՝ դիւրութեամբ պիտի մտածէի, որ նաեւ ծերունազարդ քերթողի մը հետ է մեր գործը: Այս տարակոյտները այստեղ՝ անտարակոյտ ի նպաստ Արարատեանին են: Իր գրքոյկին մէջ, ան կը խօսի մեզի յիսուն տարուայ հետուէ մը, այդ հետուին ձայնական տունմնայտարութեամբ ու զգացական ներքին հանդերձանքով: Ու, տեղ տեղ՝ կենցաղով ու բարքով ալ կարծես: Ինձի վրայ են շարունակ՝ սիրտը, միտքը, զբաղարին ու արուեստի արեւմտահայնութեան վերայ ձեռուած խօսքը: Այս բոլորին հետ, Ալիքեան կը խօսեցնէ՞ խօսելու արուեստը լուսապէս գիացող իր կարգ մը զգայութիւնները, որոնք իր քերթուածին կու տան անմիջականութիւն, հաղորդա-

կանութիւն, ներքին յղիւածութիւն եւ ջերմութիւն մը՝ միջինէն վեր աստիճանով: Այսպէս:—

Հարիւր էջերու վրայ ուժգնօրէն բարխող սրտի մը կը հանգիպինք այս փոքրը զբարձրի մէջ եւ, դարձեալ հարիւր էջի վրայ, մտածում եւ երեւակայութիւն անցնող ու խոսվող վշտի մը, խորունկ ներքն քաղող կրակի մը:

Բարեշուտոյ Հրումնաղանով, Ալեքեանի տաղանդին մէջ կրնանք ընդգծել:—

1.— Բնութիւն եւ զօրաւոր երեւակայութիւն (էջ 6-7):

2.— Ուրիշ ժամանակի, ուրիշ վայրերու եւ վիճակներու մէջ փոխադրուելու բանաստեղծական արարք: Գրեթէ ամէն էջի մէջ:

3.— Թորանալու եւ ընդհանրանալու ակորձակ (էջ 8, էջ 16):

4.— Մանրամասներ արժեւորելու շնորհ (էջ 17):

5.— Երբութեան եւ փոփոխութեան ճաշակ: Իսկ յաճախ ալ բացատրութեան զօրեղութիւն (էջ 10, էջ 6-7, էջ 16):

6.— Լեզուական զգայարանքի սրութիւն: Գրեթէ ամէն տեղ:

7.— Հնարգրականութիւն: Գրեթէ ամէն տողէ զգալի:

8.— Ապրումի ուժգնութիւն:

Կարելի է անշուշտ այս բարեմասնութիւնները ուրիշ տարազներով սեղմել եւ իրենցել իրենց կէտին եւ կամ վերածել կրկինին, կարեւորը տաղանդին երեսները բացայայտելն է:

Այսքան բաղձազան շնորհներու երջանիկ մէկ բաղձազան ծնունդ ասած քերթուած մը չի՛ կրնար արուեստի նուաճում մը չըլլալ, մանաւանդ երբ ներքին իրաւութիւնն է պատուանդանը քերթուածին: Այսպէս, ինչ ալ ընէր բանաստեղծը, որքան ալ վարպետ ըլլար, պաղը տեղէ մը պիտի փչէր, կատոյցը պիտի ճեղքուէր իր ամէնէն վտանգաւոր մէկ տեղէն, քերթուածը իր կէտին չհասած, կրնար ըլլալ որ փուլ գար ամբողջովին:

Գրական Զրոյցի մը ընթացքին, որ ընդարձակ օւսումնասիրութիւն չէ, ըս-

տիպուած ենք ընդհանուր կէտերու մասնանշումով բաւարարուիլ: Ինչք կրնար իւրաքանչիւր կէտի վրայ կենալ եւ յապաղիլ: Այսուհանդերձ, երբ կը խօսինք Ալեքեանի բեղուն եւ զօրաւոր երեւակայութեան մասին, չենք կրնար կանգ չառնել անոր նկարագրական ու պատկերացումի ուժին վրայ, մանաւանդ, երբ հայրենի մէկ քնայիտարհին անցեալն ու հողեւոր վաստակն են խնդրոյ ատարկան: Տեղ ու ժամանակ, ու նաև տեղին ու ժամանակին կապուած պարզ բռտեր եւ յատուկ անուններ իսկ՝ մեզ կը տանին արդէն ու կ'ապրեցնեն մեր տղային անցեալին մէջ, — Կորդուք լիւ, մէգի սուկան, մանամայ, արջերի կուշտ մայրուածք, հալուող կարմիր արև, Մովսար, վանայ լիճ, Տալուարիկ, Ծեմիկ, Եաշմաներիկ, խորխորատ, ծարձոր, ըմկոյցի ծառ, Մշոյ դաշտ, Հայոց կռուակ յետոյ՝ ճիւղ, Եփրատ, Արածամի, Արշնի, մատուռ, վանք. ապա 'Նեմրուք' որ — Բարձր կախնց Բելայ դիակն իր մակտիմ —: Ձկայ ասոնց չափ պարզ եւ ոչ-բանաստեղծական բառ, մանաւանդ երբ աշխարհագրութիւն կը կարգանք բայց այս բառերէն իւրաքանչիւրը կըքնայ քերթուած դառնալ մեր մէջ, երբ բանաստեղծը արուեստի վարպետութեամբ մը նիւթ ու գասաւորում տայ անոնց եւ լեցնէ պատմութեան յուզումով եւ հայ երկրին արիւն-արցունք կենսագրութեամբը: Ձիւնը, արեւը, ընկոյցի ծառն ու վանքը ոչ միայն իրենց նիւթական, այլև իրենց փոխարեակն պարզ իմաստէն ալ անդին կ'անցնին ու կը սկըսին ընդարձակուիլ ու խորանալ մեր մէջ, իրրեւ ազգային մշտնջենական իմաստի ջերմութիւն եւ Հայաստանի հին կենցեղին վրայ բացող պատուհան: Կը դառնան այդ բառերը Հայոց Երկրի բընութեան անանջատելի մէկ մասը, մեր պատմութեան երկաթազիր տառերով դրուած կրակէ տողը: Ձիւնը հին ու հայկական չէ, արեւը հին, վահագնեան ու հայկական չէ, ընկոյցի ծառը, վանքը մանաւանդ, իր ձեռագիրով, իր ուրտերով, ուխտաւորներով, սուրբերով,

մասաղներով: Իր Մեղրուպի, Նարեկացիի եւ Ծնորհալիի ա. դեռ բազում մասնաճեղքներնու նուիրական թափօրով:

Հարուստ զգայութիւն ունի Ալիքեան եւ արտացոլող հոգի (էջ 20). ունի նաեւ յուզական մեր աշխարհի մասին տեղադրական բաւական լայն ծանօթութիւն մը կարծես, քանի որ գիտցած է իր քերթուածին մէջ մեր Հայրենիքին եւ այդ Հայրենիքին հոգին ցնցող մեծ տաղնադիրուն մէկ արձագանդին վերածուիլ եւ հաղորդական զօրութեամբ մը վերանայնէլ պահ մը նաեւ մեզ: Բանաստեղծական այս իրաւ թիւումին կը հանդիպինք Բարեխոստ շրջանայինի սկիզբի էջերուն իսկ. օրինակ, էջ 6-7:

Տենդ եւ շարժունակութիւն կայ Ալիքեանի տողերուն մէջ, պատմութի թէ նկարագրութեան պարագային. այդ երկուքն ալ, որոնք խօսքի սովորական կիրքն ու ջղայնութիւնը չեն, կը բարտաւորեն իրենց վատաւում տողերը, զերծ պահելով դանտեղ զգացական ճահ-ճացումէ եւ նկարագրական բորբոսներէ ու մամուսումներէ, որոնք, երբ վարպետ չէ՛ բանաստեղծը, ժամանակէն շատ առաջ կը վտանդեն արուեստի գործի մը կեանքը: Վա՛յ այն ծառին, որուն մամուսը իր հետ միասին կը ծնի, վա՛յ...

Ալիքեանի արուեստի տենդն ու շարժունակութիւնը կը հաննէ քերթուածին մէջ ամէն ինչ օտքի, քայլի կու տան տողերուն: Քերթուածին մէջ եղող պատկերները քարացած վիճակներ չեն, ոչ ալ գոյն, գիծ եւ մակերեսներ են. կեանք են աւելի, շունչ, հեւք, երթեւեկ. օրինակ. «Եւ մութն արդէն սզոսկիւով, սուտնուսմ էր» եւ այլն, ուրիշ օրինակ. «Ու երեկոն, հասկ ճառնայի մուտքը փակած, իրերի մէջ մեծութիւն էր փշուսմ խորին»:

Պիտի ուզէի կանգ առնել Ալիքեանի ուրիշ մէկ առաւելութեան վրայ:

Ալիքեան դիտէ, գոնէ այս քերթուածին մէջ, ժողովուրդը ըլլալ, ըլլալ վարի խաւի բարձրագոյն խօսք եւ այդպիսով, տեղ տեղ, մուրիւլ ժողովրդային զգացական իմաստութեան հետ: Թուամե-

կանի եւ առհասարակ մեր արեւելահայ հատուածի բանաստեղծական ականջութեան չի հետեւիր սակայն: Անոնք խեղդարեւո՛ւ ատտիճան խրուած են այդ ժողովրդայնութեան մէջ եւ բոլորն ալ առաւել կամ նուազ չափով տուժած իրենց իսկ շափազանցութիւններէն, արուեստի եւ կարգացուելու փոքր շահեր պակաս վերով հանդերձ: Ալիքեան, լեզուական փոքր բարեխոսութեան մը ետք, ժողովրդայինի իր դիտով, կը կապուի աւելի շուտ արեւմտահայ հատուածի զրոգներուն, - Թղլատիցիէն մինչեւ Յ. Օրշահան -:

Արեւելեան իմաստուններու եւ իմաստութեան ընդհանուր մէկ նախադրութիւնն է, ընդհանուր մէկ ոճը՝ ժողովրդային հոգեբանութեամբ արտայայտուիլը. այսինքն՝ միամիտ բնականութեամբ մը, միամիտ զարմանքով մը, միամիտ քրաժիտով մը, որ երբեմն կը հասնի անկարելի պարզութեան: Մարդը եւ անոր ողբերգութիւնը բացատրելու համար, Ալիքեան կ'ըսէ օրինակի համար

Աշխարհում կա՞յ արդեօք ուրիշ մի արարած,
Որ իր ամբողջ մարմնից ծանր
մի սիրտ ունի: էջ՝ 8:

Ալիքեանի լեզուն ճշիւ է. բառամբերքը՝ հարուստ, զբարարով ու բարբառով: Բոլոր հայերէններէն, թերեւ թացի միջին բաժնիցէն, օգտուած է: Ինտութիւն կայ զբերն մէջ, առաստեղն: Բուն սղորդականը, ինչպէս կեանքին նաեւ Ալիքեանի գրքին մէջ այն է՝ որ հոն, - էջ 18 -, բնութեան մեծ ու մեծաշուք կենդանութեան մը մէջ է, ուր մահն ու ախրութիւնները կը պատահին. անհուն պայծառութեան մը մէջ է որ սեւ, սարսափելիօրէն սեւ անցքեր տեղի կ'ունենան.

...Այդ արեւն է քրտում Կիւայ միջիւր,
Նրկար պռն իր շրջած դէպի
Արեգնոճագ...
Այսպէս տողեր դրէք կոտորածներու

մէջ. այսինքն, կեանքը կատաղօրէն ապրելու պահ մը երբ ներկայանայ, յանկարծ մահը թող թակէ ձեր եւ ձեր բոլոր հարազատներուն դուռը: Օգուտ չունի շարունակելը, անցնինք:

Հայ դիմքը զուգահեռն է հայ կեանքին եւ անոր ընդհանուր տառապանքին: Բարեխառն Հրուանդամը երբ կարգանք, անգամ մը եւս այդ սպրումը կ'ունենանք:

Այսքանը ըսելն հաշ, հարկ է թեւրեւս եղբայրացնել հիմա եւ վերջացնել: Գրութեան մը մէջ, երբ արուեստով մտահոգ թմախնդիր ընթերցողը, կարդացած 10 տողին մէջէն կ'ուզէ 1-ը եւ յաճախ երկուքը անսպասան ընդգծել, առանց բոլորովին հրաժարելու ընդգծուածներէն, կը նշանակէ թէ դիրքը յարողած է, գէթ իր ժամանակակիցներուն համար: Իսկ եթէ շատնայ թիւը ընդգծածում ընդդէմը, կը շտապ նաեւ յաջողութեան վաւերականութիւնը: Իմ մասին խօսելով, ես բաւական ընդգծումներ ըրի: Բարեխառն Հրուանդանին մէջ, տեղ մը իմաստը հաւնելով, տեղ մը արտասպասութեան կերպը, երբորդ տեղի մը մէջ պրակներ մը, չորբորդ տեղի մը մէջ դիպուկ բառ մը: Ընդգծեցի Գերմութիւն մը, չող մը, մթնոլորտի գույն մը, սպրումի ցայտք մը, խորութիւն մը, երանք մը: Ախորժակ մը անհաս ընդգծելու, ես որ քիչ բան կ'ընդգծեմ առհասարակ զրգերու մէջ: Դուք իմ ըրածս համարեցէք առաջին ընթերցման նոյեւորութիւն, արուեստին հանդէպ դժուարահամութեան պակաս, սխալմունք, դիւրին զիջում, կամ խառնուածքի որոշ չափով մօտիկութիւն բանաստեղծին հետ եւ այլն, եւ այլն եւ ուրեմն յիշեալ բոլոր նկատումներով ընդգծածումներուս կէսին չափ ընդգծեցէք յարողած տողեր ու տեղեր: Մնացեալը նորին կը փրկէ բանաստեղծը եւ գայն կը

դնէ Հայաստանի ներկայ բանաստեղծներու առաջին շարքին վրայ: Եթէ չեն գրած զինք ցարդ, պէտք է այլեւս ըզնեն, Բարեխառն Հրուանդանէն հաշ, բանաստեղծին համար գայն ընելով յաջողութեան հրուանդան մը: Ընդգծէ, զրջոյկին սպազութիւնն ու սպազանակը, - չկամութեան սպազոյց -, յորտեւ չեն ներշնչեր այդ ուղղութեամբ, բայց հոն անսպասան կան մարդիկ, որ արդարութիւնը կրնան իր տեղը բերել: Իսկ դժուար չէ արդարութիւնը այս պարագային իր տեղը բերել, եթէ Հայաստանի մէջ կարենան մտածել, որ հնարաւոր է մեծ բանաստեղծ ըլլալ նաեւ: անշարժ աւանդութենէն դուրս ճամբով մը, չհետեւելով, օրինակ՝ ոչ Գամառ Քաթիկոսյանին, ոչ Յ. Թումանյանին, ոչ Ա. Իսահակեան անունով զվարպետաց վարպետին, ոչ ալ ոչ ոքի: Վտանգուորք բանաստեղծելու մեկ մը անդին ուրիշ մեկի գոյութեան չհաւատան է: Ժողովուրդ բուրելու եւ աշուղ յիշեցնելու աւանդութիւնը Հայաստանի մէջ մնաց ու մնաց, իր մաս մը գեղեցկութեամբ ու մեծ տեղերով: Ձեր կրնար չմնայ՝ հասարակ տեղեցներու հասարակ դեղեցկութիւնը, իր տափակ տէլլայներով, որոնք քննադատ կը կոչուին հոն, եւ գրական հաստատուր պարբերականներու կամ գործ թերթերու մէջ զիճակացոյցը կը պատրաստեն ունէ քերթողի:

Այսուհանդերձ, կը թուի սակայն, որ որոշ բարեւոյցով մը նաեւ ա'յո գետնին վրայ անխուսափելի է այլեւս. Բարեխառն Հրուանդանի մըն ալ մարտնչը որ մեր երկրի գրադատները հասնին, արուեստի մարդին մէջ: Ըլլան խիստ, ըլլան բծախնդիր, բայց ըլլան նոր եւ արդար:

ԵՊ. ՊՕԵԱԸԵԱՆ

Նոյ. 22 Պէյրուք

Ձ Ր Ո Յ Յ Ը

Ձրոյցը բացաւ ԲԱԳՅՆԻ վարիչ իւրմարտիր Կ. Սասունի, բնագծերով «Բազմ-նոր պրոյցներուն նպատակը»-

«Բնարկուող գրքն է Ա. Ալիքեանի «Բարեխոսոյ Հրուանդան»ը, որ մեծ հանգիստով կարգացի: Իր քերթուածին մէջ՝ Ալիքեան գացած է մեր Միջնադար-իսն գրագէտներու ոգիով, դաւաճական միջնավայրի տրամադրութիւններով ու սպարմաներով, եւ այդ միջնավայրերէն կու գայ իր բառերուն մէկ մասը: Աւելի պատմական բաներ դիտնայէ ետք է որ կարեւր է ըմբռնել այս գրուածքին ներքին իմաստը: Յաջող գործ մըն է, շեշտ մըն է, որ առողին անգամ ըլլալով, այս ձեւով ինք կը բերէ»:

Ապա Եղուարդ Պոյաճեան կարգացի իր ղեկուցումը «Բարեխոսոյ Հրուանդան»ի մասին:

ՏԻԿ. Ա. ՓԱՓԱՋԵԱՆ.— Ձեկուցարարը անբան ամբողջական ձեւով ներկայացուց գործին առաւելութիւնները, որ մեր կողմէ խնայող կ'ըլլայ թերութիւններ մատնանելը: Համաձայն ըլլալով հանդերձ Պոյաճեանի ոգեւորութեան եւ ամբողջական զնահատանքին, կ'ուզեմ մատնանել որ կարծես թէ ընթերցանութեան համար ուժեղ թափով չէ տարուած գործը: Թէեւ կը հետեւեալ իրեն, սակայն մէկ շունչով կարգաւոր տրամադրութիւն չի ստեղծեր: Բառերու ծանրութեան սակ կը յոգնի երբեմն ընթերցողը:

Ե. ՊՅԱՆՅԵԱՆ.— Կը կարծեմ որ երկու պատճառ կայ տարբ. եւ այն անդրադարձած եմ այդ իրողութեան, որ սակայն ամբողջութեան կը վնասէ, եւ ոչ թէ մատնարուն մէջ գոյութիւն ունեցող խորութեան, զննչկութեան: Երկու պատճառները հետեւեալներն են, նախ

միշտ իմացական տարր մըն ալ կայ Ալիքեանի մէջ. բոլորովին զգացական բանաստեղծ մը չէ: Երկրորդ՝ պատմական նիւթ մըն է իր նիւթը, եւ պատմական բառամթերքը գործածած է, պարարտին դիմած է, հնարոյր բացատրութիւններ տուած է, որոնք կը վայելեն գործին. նիւթը մատենաի մը հետ կապուած է, մագաղաթի կապուած է: Ատկէ կը կարծեմ առաջացած պէտք է ըլլայ որոշ դանդաղութիւն մը:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ.— Այն ինչ որ զանազանութիւն կը կուէք, իմ կարծիքով հետեւեալն է: Ձանց կ'ընեմ զբազան կողմերու յիշատակութիւնը, լրիւ ըսուեցան, եւ կրկնութիւն պիտի ըլլայ միայն. եթէ պակաս մը կը մատնանշենք, չի նշանակել թէ գրքին արժէքը կը ստորազնահատենք: Անկասկած որ Ալիքեանի այս գործին մէջ կայ սպարման խորութիւն մը, որ յստակ կերպով կ'երևի մտն մէկ էջի վրայ եւ դեղեցիկ արտայայտութեամբ մը ինքզինք կը պարտադրէ: Գործը սակայն հարիւր էջոց քերթուած մըն է, որ կը թուի թէ կ'ուզէ նկարագրել զէպք մը. արդ, զէպք մը կ'ուսննայ պատճառական տուեալներ, սկիզբ, զարգացում եւ վերջաւորութիւն: Պայման չէ, որ բանաստեղծը պիտական շարադրութեան մը նման հատուած մէկ, հատուած երկուքի ձեւով գրէ. պայման է սակայն որ երբ ընթացք ունեցող նիւթ մըն է, մենք դպանք ընթացքը. ոչ միայն Հայկանուշի կամ Հայկուհի լեռնէ լեռ լանցներով, այլ նաեւ սպարմաններուն կամ զէպքերուն կըռոյթին փոփոխութեամբ, արտպայտմով, դանդաղացումով, եզրակացութեան մը հասնելով:

Եւ այն տպաւորութիւնը ունիմ, որ քերթուածին ամբողջութիւնը իր արժէ-

քը պահելով հանդերձ, զայն կրնանք նստել, առնել որպէս մէկ պահի ներկայացում. քիչ մը երկարաձգուած պահ, սակայն վերջը ի վերջոյ միակ ապրումի մը ներկայացումն է, ասով կու գայ դանդաղութեան ապուստոսութիւնը:

Ե. ՊՅՅԱՃՅԱՆ.— Չեմ կարծեր թէ բանաստեղծը բան մը կը շահէր, եթէ պոէմայի ձևով պատմութիւն մը պատմէր, ինչպէս Թուամեան կ'ընէր: Մտ կը կարծեմ, որ բանաստեղծը ողբերգութիւն մըն է որ կը պատմէ, եւ պատմութիւնը ինքն է որ ներս կը թափանցէ տեղ տեղ, թերեւս հակառակ բանաստեղծի կամբին:

ՏՈՔԹ. Մ. ԿՊԼԻՂԱՅԵԱՆ.— Համարձայն եմ Եղուարդին, նիւթին սուանցքը պատահարը չէ, գրքի փոխադրումը չէ, այլ եղեռնն է՝ դիտուած իր ակնոյցով, տալով անոր աշխարհազրական միջավայր մը, տեղ մը: Գրքին նիւթը սակայն, ինչպէս ըստի, դէպք մը չէ, այլ ամբողջ եղեռնը:

Կ. ՍԱՍՈՒՆԻ փակագիծ մը բանալով, կը նկարագրէ ձառնութիւնի հսկայական դիրքը, որոս անձամբ տեսած է ու շջափած, երբ ան Առաքելոց վանքին մէջ էր, ու կ'ընէ այդ գրքի պատմականը:—

«Ա. Ալիքեան ծանօթ է այս պատմութեան: Այս բոլորը կուտակուած են իր մէջ, եւ զանոնք խոսքուցած է, գարեբու կոշտպտտն ու գրքերու փրկութիւնը դրած է գործին մէջ, ասոր համար ալ տեղ տեղ մութ կ'երեւի:

Պէտք է ըսեմ նաեւ, որ երբ կը կարդաս գիրքը, կը զգաս որ Ա. Ալիքեան այստեղ, գրած պահուն, աւելի ազատ չէ զգացած ինքզինք. ազատութեան մը կաշխանդումը բացայայտ է»:

Թ. ՔԻՒՐՔՅԱՆ.— Ըսելիքս առայժմ պիտի ըլլայ գործի յղացումին, սեւեռման մասին, խոտութեան մասին, մէջի դատողական ընդթի հեղանակ մը հակասող խորութեան մասին: Ես կը

կարծեմ որ այս գործին ճակատագիրը պիտի ըլլար այդ հակասութեան գոհը ըլլալ. չեմ կարծեր որ երկարաշունչ պոէմաները, որ արեւելահայ բանաստեղծները մեզի տուած են, ոչ մէկ անգամ հասած ըլլան այս խորութեան: Ընդհանրապէս պատմում մը եղած են, մասաւ. քիչ անգամ, թեթեւ խորացումով մը, օրինակ «Թոնդրակեցիներ»ուն մէջ. սակայն այս քերթուածի խոտութեան ոչ մէկ ատեն չեն հասած արեւելահայերէնով գրուած պոէմները: Որով անխուսափելի է որ երբ երկար պոէմ մը, կարճ բանաստեղծութեան մը խոտութեամբ գրուի, խոսք ըլլայ մթութեան մասին, դժուարահասկնալիութեան մասին, եւ ընտան է որ պատմողական շարժումը տուժէ աստիկ:

Ե. ՊՅՅԱՃՅԱՆ.— Պատմողական շարժումը կենսական կը զտնէք:

Թ. Ք.— Ոչ. այդ չէ ըսել ուղածս. ընդհակառակը, բնական է որ այդպէս ըլլայ:

ՎԱՀԷ ՕՇԱՅԱՆ.— Կարծեմ որ աստիկ գրականութեան մէջ առաջին ընթացումն է, ուր իրապէս կը հանդիպի բանաստեղծի մը իսկական ներկայութեան, որ անտխտելի կերպով կը զգայ մարդ: Գրական այնպիսի դժուար զգայնութիւններ ունի Ալիքեան, օրինակ հոտի, ձայներու. այնքան խիտ եւ առատ, որ մարդ կը խեղդուի տակը, եւ այս է խոտութիւնը որ կայ, եթէ այդ դժուարութիւն կուտայ ոմանց:

Գործը իր սահմաններուն մէջ յաջողած է անկասկած: Հետաքրքրական պիտի ըլլար սակայն եթէ հեղինակը գործը տանէր իր ներկայ սահմաններէն անդին, ինչքան կը շահէր արդեօք: Անցեալի ու դեկորումը արդի բանաստեղծի մը կողմէ, մեծ գործ է. սակայն ասիկա կապել մեր պատմութեան ներկայ ընթացքին, եւ քիչ մըն ալ տանել այն կողմ, դէպի ապագան. քանի որ նոյն ժողովուրդն է որ կ'ապրի աշխարհի երեսին, որպէսզի մեր այսօրուայ Հայութիւնը ինքզինք պզտիկ հի նսեմ չգոյայ. եւ կամ ձևով մը հասնի

ժողովուրդը խորագոյն ճշմարտութեան, որ այդ դէպքէն կը շարունակուի այսօր. եւ բանաստեղծը որ աւելի յստակ տեսնելու կարողութիւնը ունի, կրնայ տալ թէ ինք ինչ չափով կը տանի դանոնք դէպի սպառնալիք:

Մէկ թուրքով, կրնար գործին մտնալ սալ:

ՅԱԿՈՒՄ ԺԱՄԿՈՅԵԱՆ.— Այիքեան փոխանակ ընտրելու պատճառով եւ նըկարագրութեան ճամբան, հոգեկան ճամբով է որ կ'ընթանայ: Ճիշդ է, որ նիւթը տեղափոխուած է աշխարհագրական միջավայրի մը մէջ, սակայն ատիկա ըրած է իր ներքին ապրումին մարմին տալու ճամբար միայն:

Այիքեան բարեխախտարար դերին միացած է կաղապարումին, որ իր շորս կողմը կայ երկար տարիներէ ի վեր: Բարբառն ալ փոխելով հանդերձ, չէ դադրած արեւմտահայ բանաստեղծ մը լլուլլէ: Իր շնորհ զօրաւոր է, եւ արեւմտահայ ճերթողական արուեստը չափազանց զգալի է իր գործին մէջ:

Բ. Փ.— (Հատուած մը եւս կը կարգայ զրգէն, սպա երկրորդ եւ երրորդ մը): Անկասկած, Այիքեան այս գործով իր բանաստեղծի ստորագրութիւնը հաստ վրէրով կը դնէ հայ գրականութեան պատմութեան մէջ:

Յ. ԻՍԿԵՆՏԷՐԵԱՆ.— Ամենայն է իր արևմտահայտալաշտութիւնը, որ խիստ խոցուած է իր, եւ շատ մը ուրիշներու մէջ: Եւ իրօք, արուեստի փնտռողով տուած է ատիկա, ինչ որ տարած է զինք մթութեան: Մթութիւն բառը շատ կը դանեմ, այլ բառ մը պէտք է գտնել:

Մէկ անգամ կարդալով պէտք եղած համը կարելի չէ առնել: Մարդու շունչը կտրուի է: Սակայն, երկրորդ, երրորդ ընթերցումին, կը զգաս թէ կը նմանի նըկարելի մը, որ ատիկ չէ ունեցած ամէն տարի ցուցահանդէս մը տալով պարսկէ իր մէջ ամբարտաւածը, եւ մէկ ցուցահանդէսի մէջ կը խտացնէ տասնամեակներու ապրումը: Ատիկա շատ խտացումի տա-

րած է գինք: Ինք խառնուածքով ալ արդէն շատ մաղող ու խտացնող է եղած:

Գալով իր մէտածին, զիբքը ամբողջութեամբ մտնած է արդէն: Թէեւ մանուսրելով կրնանք ըսել, թէ կայ մտնած մը նաեւ այն հատուածին մէջ, որ կարդացուեցաւ քիչ առաջ, Փիւնիկի, Ռիկ Վեդայի վերյառնումի մտածումներուն մէջ:

Ա. Փ.— Ես մթութիւն բառը չգործածեցի: Ըսի միայն որ ընթացքը կը դանդաղի, շատ խիտ է՝ մէկ շունչով կարդացուելու համար, դժուար է մէկ անգամով կարդալը: Պարզ է որ շատ նուրբ է, սլացք ունի. բանաստեղծ է անկասկած. թէքնիքին մէջ բան մը կը պակսի, որով թափը կը պակսի:

Մ. ԻՊԼԻՂԱԹԵԱՆ.— Այս գիրքը մէկ շունչով կարելի չէ կարդալ: Գալով մտնածին, գործին վերնագիրն իսկ կ'արտայայտէ գայն: Ճեարհյուստոյ Հըրուանդանը նուահանդիսա չէ, ընդհակառակն դժուարանցանելի փոթորկայտոյ հըրուանդան մըն է, այնտեղ հասած ենք, պէտք է անցնել գայն, հասնելու համար սպուտով նուահանդիսալը:

ԳՐԱՍԷՐ ՄԸ.— Կարելի է արդեօք որիչ բանաստեղծներու ազդեցութիւնը փնտռել իր մէջ: Ես երբ կ'արդացի, կ'ործեցի Վարսմանը, Մեծարեցը, Թէքէ-Լանը կարդալ տրեւելահայերէնով:

Բ. Փ.— Այո, կարելի է այդ տպաւորութիւնը ստանալ: Ըսեմ իսկոյն, որ թէեւ արևելահայերէնով գրած է Արաբահամ, սակայն միայն ճիւղն է, ու ճիւղն որ արևելահայերէն է. մնացեալ ամբողջը արևմտահայերէն է, իր կառուցով, բառամթերքով, խորքով: Ատիկ կու գայ այն տպաւորութիւնը, թէ արևմտահայ լաւ բանաստեղծ մը կարդալու վրայ էք. եւ որովհետեւ ինք Մեծարեցի եւ Վարսմանի պաշտամունքը ունի, անկասկած որ երկուքի ազդեցութիւնը իր մէջ կայ, պիտի ըլլայ: Միայն թէ ի պատիւ իրեն, ես նմանութիւն չգտայ:

ՍՈՒՐԷՆ ԳՈԶԱՐԵԱՆ

Վերջին տարիներուն, Լիբանանի մէջ բազմա-
ցած էր թիւը շամառներովներու՝ ու թիւք ըմ-
բռնում մը սկսած էր տարածուիլ Հասարակու-
թեան մէջ, կարծիք առնել որ արտասահման
երկիրները ամուսնի երկիրներ են, կամ թէ՛
արտասահմաններ կատարելը Վասուսներն է
(Քոչ ներքին այս արտայայտութիւնը մեզի):
Սուրեն Քոչարեան, Թուսմանիին նուիրուած իր
երկիր/թով կու գար փարստելու թիւրիմացու-
թիւնը, տարրիք եւ ուզիչ հիմերով ներկայա-
ցրելու ամուսնը Հայ Հասարակութեան:

Ամուսնի երկիր մը, արտասահմանից ե-
լեկոյ մը՝ չէ՛: Եթէ կ'ուզէք աւելի պարզացուած
մեւով ներկայացնել բառը, պէտք է ըսել պտա-
մուսնի երկիր: Ամուսնը պտաւում մըն է, ար-
մակ կամ յափանոյ մեւի սակ գրուած կտորնե-
րու գերատեսական արձեւումով վերարտադրումն
է, եւ իմաստ կը ստանայ ա՛յն ժամանակ միայն,
երբ վերարտադրուող կտորները իրենց մէջ պտա-
մութիւն մը ունին, բազմաթիւ գերակատարնե-
րով աւելի ունեցող:

Որովհետեւ ամուսնը կատարող արտասա-
հայ մը չէ՛, այլ վարպետ գերասան մը, որ կըր-
նայ բնիկ վրայ կենդանացնել մէկէ ԱՌՈՒՍ ՏԻ-
ՊՈՒՆԵՐ, ե՛ր ՀԱՐԱՋԱՏՕՐԷՆ, ՄՏՆՆԼՈՎ Ա-
ՆՈՆՏՄԷ ԱՄԻՆ ՄԷԿՈՒՆ ՄՈՐԹԻՆ ՄԷՔ, ՋԵՌ-
ՄՈՒԹԵԱՄԲ ՓՈՆԱՆՏԵՆՈՎ ԻՌԻԱԲԱՆՋԻՒՐԻՆ
ԱՊՐՈՒՄՆԵՐԸ:

Այս է ամուսնին էութիւնը, եւ այդ մար-
զին մէջ վարպետ մըն է Ս. Քոչարեան:

Իր ամուսնը բեմադրութիւն մըն է, միակ
գերակատարի մը խաղարկութեամբ ներկայա-
ցում մը՝ եթէ կ'ուզէք. Համոզիլ ներկայացում
մը: Ան մերթ ընդ մերթ փոքրիկն Գիշորն է,
Արտեմն է, սան տիկինն է, կամ Հիւր եկած օ-
րիորդներն է, գիւղացի մըն է: Այս բոլորը Հա-
րազատութեամբ մայրի, ու մանուսնից բարբա-
րերու եւ ՅԵՏՏԻՐՈՒ: Գիրտասանութիւնը շնչով
արտասան է խորքին մէջ, եթէ մանուսնից թիւ
մը ընդարձակներ շնչու բառին իմաստը, եւ մայ-
նականի կողքին, նաեւ կնքուածքի շնչու զԵ-
նեք:

Մեր ունկնդրած յայտապիքը Թուսմանիին
էր: Վերապահութիւն չունենալով Հանգերմ Ս.
Քոչարեանի գերպատական կարողութեան մա-



սին, վերապահութիւն ունեց իր կատարած ըն-
րութեանց մասին: զԳաթիլ մը Մեղքը, կամ
ՎՄԷՔ Դացինը Որսի, կամ ՎՄՈՂ Խո, Շաշ եւս
կատակախումբ պտաւութիւնները կընան ծիծաղ
առաջացնել անհասկած, եւ որակը կուշտ ու կուս
կը ինդայ, սակայն գերասանի արուեստին Հա-
մար գրական տունակներ չեն: Ինչպէս դրական
տունակներ չեն այդ կտորներու արտայայտման
ժամանակ, գիմական նամածութիւնները:

Երկիր/թէ ընթացին յաջողութիւն վերաբ-
տաբարութիւնները եղան ՎՄՈՂՉԷՆ արուած Հտտ-
ուածը, եւ ՎՄՈՂՉԷՆ:

Բ. Փ.

Համահայեցողություն

Համայնակ Միրաքեանի «Բազմաբնակ» խմբագրութեան ուղղած նամակը, 10 Հոկտեմբեր 1968 թուականը կրող, կը հրատարակենք նոյնութեամբ, Մարտիկեան ուղղագրութեան վերածելէ ետք:

Աւրախ ենք, որ Երկրի հայ մտաւորականութիւնը ուշի ուշով կը հետեւի «Բազմաբնակ» մէջ լոյս տեսնող բոլոր գրութիւններուն, գրուող ղեկարուէտական բնոյթ կրող ստեղծագործութիւններ ըլլան անոնք, թէ իմացական ու արուեստի հարցեր շօշափող յօդուածներ: Ոչ միայն կը հետեւի, այլև կը սկսի անա գրական մտահոգութիւններէ դրդուած ճշդումներ կատարել, հարկ եղած պարագային: Նման որեւէ քայլ, գրականութեան համար, մենք կը համարենք դրական եւ անհրաժեշտ:

Ինչ կը վերաբերի յետ-գրութեամբ ցոյց տրուած հետաքրքրութիւններուն, յայտնենք, որ Եղիշէ Զարեանցի մասին արտաստած Յ. Օշականի վերին աստիճանի ուղղագրութեամբ «մենք արտագրած էինք «Հայրենիք» ամսագրէն ու հրատարակած Սայաթ-Նոփյաջի նուիրած մեր բացատրիկին մէջ: Մինչև 1924 երկարող Զարեանցի գրականութեան ամբողջութիւնը ընդգրկող ուսումնասիրութիւն մըն է Օշականի յօդուածաւարքը, որ տպուած է «Հայրենիք» յաջորդական երեք համարներուն մէջ:—

- Դեկտեմբեր, 1924, էջ՝ 52-67
- Յունուար, 1925, էջ՝ 45-62
- Փետրուար, 1925, էջ՝ 41-50

Յայտնուած կարծիքներուն խտուրթեան նայելով՝ Միրաքեան կը խորհի, թէ Օշականի դատումները տարբեր բնոյթ պիտի կրէին, եթէ գրուած ըլլային «Գիրք ճանապարհ»էն ետք: Կրնայ ըլլալ: Իայց Օշականի մէկ կարծիքը կը արամադրէ մեզ տարբեր բան ըսել: Ահա այդ կարծիքը:—

«Բայց ես հաւատֆն ունիմ, որ Եղիշէ Զարեանց կրնար ճանաչել անգամ ստուերի մէջ ձգել, երբ կենար, կենար իր ստեղծուած վրայ, նեխած դիակներուն մէջտեղ ու նայէր, նայէր, նայէր... Իր տեսածները զննուարի տպարարութիւններ պիտի չըլլային այն ստեղծ: Ու իր գոյգ մը աչքերէն մեր ցեղը պիտի նայէր, այդ օր ցերեկով, առանց պատճառի մարթուած աչքը մեր ժողովուրդին»:

Այս հաստատումէն ետք, ինդիքը կը մտնէ վարկածի փուլին մէջ: «Գիրք ճանապարհ»էն ետք, Օշականը տարբեր կարծիք պիտի բանաձեւէր այդեօք Զարեանցի մասին, թէ Զարեանց արտասահմանի ծանրախոհ քննադատներու անկաշառ («ես հաւատքն ունիմ») դատումներուն ծանօթանալէ ետք, սկսաւ բանաստեղծական իրական «զիրք»երու եւ «նամագարհ»ներու մասին մտածել:

ՔԱԳԻՆ, ԱՄՍԱԳՐԻ ԵՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(ԼԵՆԻՆԿՐԱՏ, 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1965)

Ես ծանօթացայ 64 թ. ընթացքում ձեր հրատարակած յօդուածաշար-
քի հետ, մեր Խորհրդային գրականութեան մասին՝ Լեւոն Մկրտչեանի ստա-
րագրութեամբ: Կարծում եմ որ հայրենակիցը չի նեղակայ, եթէ ասեմ, որ
կամ մի շարք անուններ, որոնք բացակայում են նրա տուած ցանկում, չա-
նի որ քիչ ճիշդ չի թափուած լինի եւ լման անել այդ գրական *բրվիտն*:

Ես չգտայ Ատրեանի անունը - վերջին տասը տարիները Թիֆլիսից
անցել է Երեւան -:

Յակոբ Մուլախեանի՝ մօտ տասը տարի Երեւանից անցել է Մոսկուա
եւ պատասխանատու ֆարտուղարն է *Տրուժնա Նարոտով* կենտ. արժագրին:
Ունի բազում Քննադատական յօդուածներ հայ եւ ռուս լեզուներով:

Եղ. Թօփչեանի՝ գրողների միութեան առաջին ֆարտուղարն է:

Արամ Գրիգորեանի, որը նոյնպէս մօտ տասներկու տարի է ինչ Մոս-
կուա է տեղափոխուել Երեւանից: Քննադատ է, գիտ. թեկնածու: Ունի
վաստակներ հայերէն եւ ռուսերէն լեզուներով:

Գոյեանի, որը հայ թատրոնի 2000-ամեակի մասին ունի էիմնաբա-
րային գործ՝ ռուսերէնից դեռ չթարգմանուած: Նա գիտ. դոկտոր է եւ
Մասկուայի թատրոնագիտական ինտըր դեմֆեքից մէկն է:

Խորէն Աճեմեանի չորս գրքերից երեքը յիշուած է, իսկ մէկը՝ ոչ: Այդ
մէկը «Ժանգ եւ մետաղ» չափածոյ վիպակն է, - Երեւան 1931 թ. - որը իր
լոյս տեսած գործերից ամենից նշանակալիցն է - եւ Չարենցի, եւ Մանարու
եւ իմ կարծիքով - Չարենցը ե՛ւ հրատարակից, եւ դրուատեց իր հրատա-
րակային ելոյթում - Կուլտուրայի տան դահլիճում - այդ գործը: Չարենց
ունէր ոչ միայն մեծ տաղանդ բանաստեղծի, այլեւ շատ նարը նաշակ քն-
նադատի: Ուրի՞շ... Ուրի՞շ ոչինչ, քանի որ այս գրութեան նպատակն էր
նշել մի շարք բացակայ անուններ եւ տուեալներ, ի շահա լրիւութեան:

Բարեկներով՝
ՀՄԱՅԵԱԿ ՄԻՐԱՔԵԱՆ

Յ. Գ. - Ես ծանօթացայ ձեր հանդիտում Յ. Օշականի վերին աստիճա-
նի ուշագրաւ մտքերը մեր ռզրացեալ Չարենցի մասին եւ շատ կ'ուզէի իմա-
նալ, թէ լրիւ կերպով ո՞ւր է տպուած եւ ի՞նչ ծաւալի է Օշականի այդ վաս-
տակը: Կարծեմ դա գրուած է այն թուին, երբ նա դեռ չունէր «Գիրք ճա-
նապարհորդ»-ը: Այլ կերպ նա մի քիչ այլ լսօսեցրով կ'արժեքաւորէր Չա-
րենցին:

ՆՈՅՆ

Միշտ հզօր՝ համարը անմար է,
Երբ կ'ուզէ ծանել համարը:

10-10-65



ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ

Չեղին երկու ասրիներուն, զրական երկու կարեւոր մրցանակներ հաստատուեցան մեր իրականութեան մէջ, մէկը՝ մեր ոչբայեալ ընկերը՝ Հայկ Սէրէնկիւիանի այրին ու զաւելին կողմէ հաստատուած «Հայկ Սէրէնկիւիան» անունը կը կրէ, իսկ միւրը՝ «Գեորգ Մելիտինեցի»:

Ուրախութիւն է տեսնել, որ կենսաբէ մէջ յաջողած մարդիկ, մասնաբաժաններ եւ պրատիկներ, խորապէս կ'ըմբռնեն հայ գրականութեան կարեւորութիւնը եւ իրենց մասնակցութեամբ կ'աշխատին փայլ մը աւելի տալ անոր:

Եկեղեցին ու զպրոցին շփոք ու թերեւս անոնցմէ զիջ մը աւելի կարեւոր դրածոն մը հանդիսացան է հայ գրականութիւնը մեր իրականութեան մէջ, եկեղեցին ու զպրոցին սնուցիչ ուժը եղած է ան, շինէն ի վեր, եւ իբր ուժէն կարեւոր ունին միւսներուն սրահական արժէքները նսեւ աջա՛ր:

Եկեղեցի եւ զպրոց կատարողներուն կողքին, ահաւասիկ ուրիշ անմասնաբաժաններ, որոնք նոյն Հասարակ գրականութեան մասին կը մտածեն, գրական շուրջ մրցանակներ հաստատելով: Հայ ընթերցողը երկու նոր գիրք պիտի ունենայ ամէն ասրի, երկու գրողներու վաստակը պիտի վարձաարուէ ամէն ասրի: Միմիտարական է երեւոյթը...

Հիւսիսային Աւերիկայի հայ պատուական ազգայիններէն Տիար Գեորգ Թովայեան (գրական անունով՝ Գ. Մելիտինեցի) եւ իր կիներ ազնուափայլ Տիկին Նարզուհի, հաստատած են ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ մը հետեւեալ արաւադութիւններով եւ անպարտութիւններով:—

Ա Ն Ո Ւ Ն

Յօդուած 1.— Մրցանակը կը կոչուի «Գեորգ Մելիտինեցի ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ»:

Ն Պ Ա Տ Ա Կ

Յօդուած 2.— Մրցանակին նպատակն է փայտիլ Հայ Մշակույթի ըսպասարկուները եւ հրատարակել անոնց մրցանակի արժանացած երկասիրութիւնները:

ՄԻՋՈՑՆԵՐ ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Յօդուած 3.— Այս նպատակին իրագործման համար, Տէր եւ Տիկին Գեորգ եւ Նարզուհի Թովայեան ամուլը, որպէս հիմնադիրները «Գեորգ Մելիտինեցի ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ»ին, յիսուն հազար (50.000) ամերիկեամ տոլարի գումար մը յատկացուցած են որպէս հիմնադրամ:

Յօդուած 4.— Սոյն Հիմնադրամը, որպէս անձնամիջոցի գումար,

դրուած է Պէյրուսի first national City Bank of N. Y. ամերիկեան դրամատան մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անուամբ:

Յօդուած 5.- Հիմնադրամին տակուք միայն, տարուէ տարի, պիտի յատկացուի մրցանակին:

Յօդուած 6.- Հիմնադրամին տարեկան տակուք կը գանձուի Մեծի Տանն Կիլիկիոյ վեհափառ Հայրապետին Ն. Ս. Օ. Տ. Տ. ետքէն Ա. Կաթողիկոսին կամ անոր օրինաւոր յաջորդներուն (ի հարկին՝ Կաթողիկոսական Տեղապահին) կողմէ եւ կը յատկացուի մրցանակին արժանացած գործի հեղինակին եւ գիրքի սպագրութեամբ:

Յօդուած 7.- Այն պարագային երբ որեւէ պատճառաւ կարելի չըլլայ մրցանակ տալ, այդ տարուան ամբողջ տակուք կը բարդուի Հիմնադրամի մայր գումարին վրայ:

Յօդուած 8.- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Ս. Աթոռին Գահակայները որեւէ ատեն իրաւունք չունին փոխելու Մրցանակին անունը, նպատակը եւ Հիմնադրամին անձեռնմխելիութեան եւ անապաղում անդամներուն միայն յատկացուելու հանգամանքը:

Յօդուած 9.- Այն մրցանակին կրնան մասնակցիլ բոլոր եայ մտաւորականները, Հայաստանի թէ Սփիւռքի մէջ, առանց դաւանական եւ գաղափարական խտրութեամբ:

Յօդուած 10.- Մրցանակին համար կրնան ներկայացուիլ բոլոր այն հեղինակութիւնները, հայերէն կամ օտար լեզուներով, որոնք կը վերաբերին ՀԱՅԿԱՎԱՆ, ՄՇԱԿՈՅԹԻՆ՝ գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտական, բանասիրական, լեզուաբանական, հնարամական եւ այլ յարակից կարուածներու մէջ:

Յօդուած 11.- Գրական աշխատասիրութիւն մը մրցանակի արժանի կը համարուի մասնաւոր Յանձնախումբի մը (Ժիւրի) որոշումով: Ժիւրին կը բաղկանայ եօթը անդամներէ, որոնք, առաջին աւիթով, կը նշանակուին Գրական Մրցանակին Հիմնադիր ամուլին կողմէ: Հետագային, Ժիւրիի կազմին մէջ որեւէ փոփոխութիւն, հրաժարողներու կամ բացակայողներու տեղ նոր անդամներու նշանակում, կը կատարուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին (ի հարկին՝ Կաթողիկոսական Տեղապահին) կողմէ: Ժիւրին իր ժողովները կը գումարէ վեհափառ Հայրապետին կամ անոր ներկայացուցչին նախագահութեամբ ներքեւ:

Յօդուած 12.- Մրցանակը կը տրուի տարին մէկ անգամ եւ կը յայտարարուի Յունուար ամսուան մէջ:

Յօդուած 13.- Մրցանակի համար գրուած կամ պատրաստուած երկաւորութիւնները պէտք է ներկայացուին վեհափառ Հայրապետին մահուր, դիւրբնքեռնելի ձեռագրով, նախընտրաբար գրամեքենագրուած եւ երեք օրինակով, մինչեւ Սեպտեմբեր ամսուան վերջը:

Յօդուած 14.- Մրցանակի արժանացած գործերը միշտ պիտի երատարակուին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանին մէջ, Անթիլիաս: Տպագրական բոլոր ծախսերը պիտի հոգացուին Մրցանակին յատկացուած գումարին տակաւով:

Յօդուած 15.- Մրցանակի տիրացած հեղինակը, անկախաբար իր գործի սպագրութենէն, պիտի ստանայ հազարէն երկու հազար (1000-2000) լիբ. սօկիի պարգեւ մը Մրցանակին յատկացուած գումարին տակուէն: Այս պարգեւին թանակը պիտի նշուի Ժիւրիին կողմէ, ճարտագոյն ի հազար (1000) լիբ. սօկի ըլլալու պայմանով:

Յօդուած 16.- Այն պարագային երբ գիրքին տպագրութենէն եւ հետէն զինակին տրուած նուէրէն ետք Հիմնադրամի տարեկան տակուէն գումար մը աւելնայ, այս վերջինը կը բարձրի մայր գումարին վրայ:

Յօդուած 17.- Մրցանակի արժանացած գիրքին տպագրանակը եւ վաճառման գինը կը ճշդուին ժուրիին կողմէ, նուագագոյն հազար (1000) օրինակ ըլլալու պայմանով:

Յօդուած 18.- Տպագրուած գիրքէն հարիւր օրինակ կը յատկացուի Մրցանակի Հիմնադրանքին: Երկու հարիւր օրինակ կը տրամադրուի կիլիկիայ Ս. Աթոսին: Երկու հարիւր օրինակ կը վերապահուի ժուրիին՝ հայ մատենադարաններուն, հագետը եւ մշակութային կեդրոններուն, վարժարաններուն, ինչպէս նաեւ հայ մշակոյթին նուիրուած անձներուն զընտելու ետեւոր որպէս նուէր: Այս բոլոր առաւումներուն ծախսերը կը հագացուին Մրցանակին յատկացուած գումարին տակուէն: Իսկ մնացեալ գիրքերը, նուագագոյն իննց հարիւր օրինակ, կը յանձնուին հեղինակին որպէս իր անձնական սեփականութիւնը:

Յօդուած 19.- Մրցանակի արժանացած երկը իր տպագրութեան աւարիւ, առաջին էջին վրայ պիտի կլէ մակագրութիւն մը «ԳԻՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ» արժանացած ըլլալը ծանուցանող:

Յօդուած 20.- Մրցանակը բացուած կը նկատուի ներկայ յայտարարութեան երատարակութենէն անմիջապէս ետք: Սոյն յայտարարութիւնը տարին երկու անգամ պիտի ծանուցուի սփիւռքի հայ մամուլին մէջ, որպէսզի հայ մշակոյթի բոլոր սպասարկուները, մանաւանդ նորերը, գիտնան եւ ըստ այնմ մղում տան իրենց աշխատանքին:

ԳԻՐԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

10 Յունուար 1966
Անթիլիաս-Լիբանան


ԳԵՐՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԺՒՐԻԻ ԱՆՎԱՆՆԵՐԸ

ԳԵՐՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ հիմնադրանքուն կողմէ ժուրիի անդամ նշանակուած են հետեւեայնները.-

- 1.- ԳԵՐՇ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ս. ԵՊԻՍԿՈՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ
- 2.- ԳԵՐ. Տ. ՆԵՐՍԷՍ Ե. ՎՐԳ. ԲԱՆՏԻԿԵԱՆ
- 3.- ՏԻԱՐ ԲԻԻԶԱՆԻ ԵՂԻԱՑԵԱՆ
- 4.- ՏԻԱՐ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ
- 5.- ՏԻԱՐ ՏՕԲԹ. ԲԱՐԳԵՆ ՓԱՓԱԶԵԱՆ
- 6.- ՏԻԱՐ ԵԴՈՒԱՐԴ ՊՕՅԱՅԵԱՆ
- 7.- ՏԻԱՐ ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

ԳԻՐԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

10 Յունուար 1966
Անթիլիաս-Լիբանան



Յաջորդով՝ եղև ՏԱՍՆԱՊԵՏՆԱՆԻ յօդուածիմ շարունակութիւնը :

ՏԱՐԵԱՆ ԱՆՃՆԵԳԻՆ

ԼԻՔԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՐԱՆ 7 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՋԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան կայտ :-

G. SASSOUNI

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@